



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2593

84

---

8-47

2011

3298



2384

84

# Գ.Ե.Գ.ՏՆԻՔ

Ֆ-47

## ԻՆԿԱՒՐՑԻՑԻԸՅԻ

### ԲՕՄԸՆ

### Ի ՖԵՐԷԼԻ:

### Ի Թարգմանութեանց

### Յաղագս Կարենեանց

և

### Մեծայշէ Գաղտնեանց:



Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ն.ՆՆԻՍԻԱԿԱՅԻ Արքայապետին Կաթողիկոսի ամենայն Հայոց, Տայրապետին Գաղտնարդի առաքելական մայր Աթոռոյ սրբոյ Կաթողիկէ Աջմիածնի:

### ՄԱՍՆ ԵՌԸՑԻՆ:

### Ի ԹԻՖԼԻՑ:

Ի Տպարանի Ներսիսեան Ռատմարանի ընծայեցերոյ յայտնական Գեորգայ Արծրունց:

Ի 1854 ամի. և Ազգական 1303:



28536-ч. 3

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ.

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ.

Тифлисъ. 4 Марта 1854 года.

Исправляющій должность Ценсора Протоіерей І. Орбели.



10145-57

2003

9-



## ՅԵՌԵՆՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԵՂՆԵՐ

Մեր աշգիտ այս վերջի երկու դարու վիճակը քննողները և գիտացողները արդէն ցաւելով տեսնում են, որ մեզանից բաժանուեալ և կաթիլի անուանեալ սակաւաթիւ ժողովուրդը՝ կրկին իրանց մէջ կտոր կտոր բաժանուելով՝ շատ տարի է, որ մէկ մէկու հալածում են, միմեանց բարւոյն նախանձում են, միմեանց յառաջագիտութեանը խոչնդոտն լինել են աշխատում. վերջապէս մին անհաշտ ատելութիւնով միմեանց համար ամենայն տեսակ որոգայթներ են լարում: Միայն կամ ժամանակի հանգամանքներիցը ստիպեալ, կամ տիրող ազգաց երկիւղից նուաճեալ, այս որոգայթները մինչև հիմայ թագուն էին լարում իրարու դէմ. բայց 1850 թուից սկսեալ այս նախանձու և ատելութեան կրակը զօրացաւ Պոլսի Ժողովուրդի և Վրբայեան կրօնաւորաց մէջ: Արկու կողմիցն էլ քրիստոնէական հեղութիւնը, մարդկութիւնը և քաղաքավարութիւնը մէկգի դնելով՝ սկսան մէկ մէկու անարգել հրատարակական տպագրեալ գրքերով, որոնք լի են այնպիսի զգուելի և դուրսկական յիշողներով, որ ծանր են լսելու ոչ միայն քրիստոնէից, այլ և ամենայն աղնուամբտ անձանց ականջներին: Բուն հայոց ազգը սկզբից մինչև վերջին տարիներս տիրական լուծիւնով այս զգուելի տեսարաններին միայն ցաւակից էին, թէ և երբեմն մէկ կամ միւս կողմից ապտակներ էլ ընդունում էին: Բայց երբ 1853 թուին այս կռուողներից գիտնական, բարեխախտ և ազգասէր կարծուած Վրբայեանքը՝ շատ տարւայ կեղծաւորութեան քողը երեսներից դէն դցելով հրատարակական տեսարակով յայանեցին, թէ «բոլոր Վրբայեանք այս օրւան օրս երդում են անում, թէ հայոց ազգը հերետիկոս է և հերձուածող»՝ հայոց ազգի ուսումնականներն էլ այսպիսի յանդուգն անձանց անդգոյութեան կամ տգիտութեան կարծիք չըտալու համար սկսան իրանց գրիչը շարժելու, և հրատարակական թղթերով և գրքերով իրանց ազգը և եկեղեցին պաշտպանելու և իրանց պաշարատողների դէմքերը փշրելու: Բայց որովհետև լուսի յարգը ճանաչում ենք խաւարի տխրամած կերպարանքի հետ համեմատելով, և սպիտակինը սևի հետ, վասն որոյ մենք էլ 1853 թուին կոստանդնուպօլիս տպած 'Այլեմն ազատնե անուանեալ լրագրի մէջ մին յայտարարութիւն հրատարակեցինք: 'Այն յայտարարութեան մէջ խոստացել էինք մեր ազգը շատ հարիւրաւոր տարիներից հերետիկոս և հերձուածող անուանող, և այս

խօսքը երդամամբ հաստատող անձանց՝ մարդկութեան և քրիստոնէ-  
ութեան հակառակ գործքերի համառօտ անցքերը պարունակող  
մին քանի գրքերը թարգմանելով, մեր անբաժան և մեղանից բա-  
ժանեալ Հայազգի եղբարցը ցոյց տալ, թէ ինչ հոգւոյ, ինչ կրից  
տէր մարդիկ են իլել մեր հերետիկոս և հերձուածող լինելուն հա-  
մար երդում անողները: Արպէս զի առաջինները, այսինքն բուն  
հայերը, իմանալով իրանց եկեղեցւոյ այնպիսի բարբարոսական բռ-  
նութիւններից անմասն մնալը, և իրանց հոգւոյ հովիւների աշ-  
խարհի իմաստութիւններից հեռի պարզամիտ անձաշտութիւնը,  
սիրեն իրանց եկեղեցին և անբաժան մասն նրանից մինչև ՚ի մահ:  
Իսկ վերջինները, այսինքն մեղանից միամտութեամբ բաժանեալ  
եղբարքը, այս գրքերս կարդալով իմանան և ճանաչեն, թէ սրպի-  
սի անձնասէր կեղծաւորներու խարհութեամբը թողել են իրանց  
հայրենի եկեղեցին և իրանց գլուխը կամքով գերի են արել Հը-  
ռովմէական բռնութեան:

Մ. յս մեր խոստումը կատարելով 1853 թուին ՚ի լոյս ըն-  
ծուցեցինք Ինկիլիլիցիայի պատմութեան թարգմանութիւնը, և ինչ-  
պէս փորձը ցոյց տուեց, էն աշխատութիւնը շատ ու քիչ հաճելի  
իլաւ ժողովրդեանը, գոնէ այն կարգի մարդկերանց, որոնք Այ-  
րուպահան լեզուներ չ'իմանալով, ընաւ տեղեկութիւն չ'ունէին, թէ  
սատանան քրիստոնէից աշխարհումը իրա անձը եկեղեցւոյ տեսա-  
նելի գլուխ և Մատուծոյ փոխանորդ, նա և Մատուած երկրի, անուա-  
նողը ձեռամբը՝ այնպիսի մին դատարան է սահմանել, որի նպա-  
տակը և վախճանը իլել է մարդկային ազգը իջացնել, հարուստ-  
ների ինչքը յախշտակել և անթիւ չարութեանց ճանապարհներ բաց  
անել իրա արիւնասխանձ և անզուսպ կրից տէր արբանեակների ա-  
ռաջը, և թէ այս ամէն չարութիւնները գործւում էին էն մար-  
դասէր Յիսուսի անուանովը, որը որ իրա մտորեալ ոչխարը գտնելու  
համար երկնքից երկիր խոնարհեցաւ, իրա արիւնը թափեց (և ոչ  
թէ կրակների փայտակոյտներով) իրա սուրբ աւետարանը տարածեց  
աշխարհքումը: Ինթերցողաց հաճութիւնը և բուն իսկ նիւթական  
ազգային օգուտը ունենալով մեղ նպատակ, յաղթելով զանազան  
դժուարութեանց՝ ահա ընծայում ենք ազգին այս մեր երկրորդ աշ-  
խատութիւնը, առաջինից ընդարձակ, նորաձև և լի պատմութեամբ  
իսկ քրիստոնեայ, անձասէր և մարդասէր սակաւաթիւ ընտրելոց,  
խառն սուտ քրիստոնեայ, անձատեաց և մարդատեաց բազում կոչե-  
ցելոց հետ:

Սերկայ թարգմանութեանս օգտի համար խօսելը աւելորդ է,

ըստ որում ժամանակը և փորձը կը յայտնեն սրա օգտակարութիւնը  
կամ վնասակարութիւնը. բայց մենք էս յառաջարանիս մէջ ու-  
նինք մին քանի հարկաւոր ծանօթութիւններ տալու յարգելի հա-  
սարակութեանը :

Նախ ինչպէս մեր առաջին թարգմանութիւնը, նոյնպէս և  
ներկայս, աշխարհաբար լեզուաւ թարգմանելուն՝ բայց 'ի այլ և այլ  
հարկեցուցիչ պատճառներից ունէինք բուն պատճառ հասարակաց  
օգուտը : Արևու հարիւր յիսուն տարուան փորձը ցոյց է տալիս, որ  
իրա և օտար եկեղեցեաց և ազգաց պատմութիւնը իմացող Հայե-  
րից շատ քիչ անձինք, էն էլ զանազան պատճառներից ստիպեալ,  
թողել են իրանց եկեղեցին, և միացել են Հռովմայ եկեղեցւոյ  
հետ. իսկ Հայ հաւաքի ասուածներէ մեծ մասը իլաժ են և կրի-  
նին պարզամիտ ժողովուրդներից, և մանաւանդ կնանիքից, ինչպէս  
առաջ Աւան խաբուեցաւ օձից և յետոյ Ղ. դամն, որոնք խաբուելով  
սուտ քարոզիչներէ կեղծաւոր և մարդախար խօսքերից՝ թողել են  
իրանց հայրենի եկեղեցին և միացել են, իրանք էլ չըզիտեն, ում  
հետ. Ղ. յս տեսակ քարոզիչներից զգուշացնում էր Պողոս առա-  
քեալը իրա Տիմոթէոս աշակերտին՝ ,, Ար ունիցին զկերպարանս  
Ղ. ասուած պաշտութեան և 'ի զօրութենէ նոցին ուրացեալ իցեն՝  
և խորշնսջէր 'ի նոցանէ : Քանզի 'ի նոցանէ են, որ մտանեն տանէ  
'ի տուն, և դերեն զկանայս շեղձակուտեալս մեղօք, վարեալք 'ի պէս-  
պէս ցանկութիւնս : ,, (Տիմ. ք. գլ. 5. 6.) Աւրեմն այս գրքերը  
գրարաւ թարգմանելով կարող էինք օգուտ բերել սակաւաւոր դիա-  
նականներին (որոնք կարելի է առանց մեր աշխատութեանն էլ տե-  
ղեակ են էս անցքերին), իսկ հասարակութիւնը պէտք է զսկիւնք  
նոյն օգտից : Շրագը մութը տեղն է հարկաւոր, կէս օրին ճրագ  
վառելը խելագարի գործ է :

Արեւորք՝ մենք ինքներս խոստովանում եմք մեր թարգմանու-  
թեանց մէջ լեզուի մասին իլաժ թերութիւնները : Աւ հնար է  
արդեօք որ չըլինի թերութիւն էն լեզուի մէջ, որը որ դեռ ոչ  
քերականութիւն ունի և ոչ հաստատուն կանոններ : Հասարակ լե-  
զուի հետ հանակ անելը դժուար է. ո՛վ չ'է փորձել, թող փորձի,  
խմանայ, և ապա մեղադրի մեզ : Մեր թարգմանութիւնը լեզուի  
կանան չէ, և չ'ի կարող լինել. մենք մեր նպատակին հասած կը  
համարենք մեզ, եթէ մեր թարգմանութիւնների կարդացողները  
հասկանան գրածը : Արժենք թէ լեզուի մասին էլ քիչ աշխա-  
տանք չ'ենք կրել. բայց որում շատ տուաւ՝ շատ խնդրեցի, և որում  
սակաւ՝ սակաւ : ,,

Երբ որքան մեր Թարգմանութեանց մէջ մենք գործ անցնինք  
ըստ մեծի մասին Թիֆլիզեցւոց աշխարհաբառ լեզուն, թէ և տեղ  
տեղ տեսնուած են Արեանու, Ռուսաստանի և այլ նահանգների  
աշխարհաբառի ձևեր, նախդիրներ և վերջապահութիւններ, որոնք  
կամ Թիֆլիզեցւոց լեզուով պատահած պակասութիւններից հար-  
կադրած գործ ենք անել և կամ մեր բուն Թիֆլիզեցի չըլինե-  
լովը չենք կարացել միօրինակ ընթանալ, Բայց եթէ մինը հարց-  
նի, թէ ի՞նչ է պատճառը, որ մեր Թարգմանութեանց մէջ նա-  
խապատիւ ենք համարել Թիֆլիզեցւոց լեզուն, մենք էլ իրան  
կըհարցնենք՝ ինքը որ լեզուն է նախապատիւ համարուած: Մենք եր-  
կար նկատողութեամբ հետազօտելով այս լեզուի մէջ գործ անած  
չափ հայերէն բառերը, տեսնուած ենք, որ ուրիշ երկրի և գաւա-  
ռի հայերը նոյն առարկային տալիս են կամ օտարազգի անուններ  
և կամ այնպիսի բառեր, որ ոչ գրաբառի մէջ կայ և ոչ ընդհա-  
նուր ազգին ծանօթ է: Սրանց անուանց հղովումները և բայերի  
խոնարհմունքները էնքան ճշգուծութեամբ պահած են լեզուի բուն  
յատկութիւնը և գրաբառի հետ միաւորութիւնը, մինչև լաւ  
մտիկ անողը կարծում է, թէ մի և նոյն գրաբառ լեզուան են խօ-  
սում առանց սկզբնահարմարների: Յիրաւի սրանց խօսակցութեան մէջ  
էլ մտել են Արաց բառեր և սճեր, նա և ներկայ դարու մն Ռու-  
սացն էլ աւելացրել են. բայց մեզ պէս Թաիառական և օտար  
ազգեցութեանց տակ իլած ազգը, որտեղ չէ վեր առել էն ազգի  
խօսակցութեան բառերը և ձևերը, սրի ազգեցութեան տակ մնա-  
ցել է որդւոց սրգի: Բանը լեզուի բնութիւնը պահպանելն է, որի  
մէջ գերազանց ենք համարում Թիֆլիզեցւոցը, Բայ տեղա մեր  
նպատակը չի ներուած մեզ լեզուաց դանազանութեանը համեմա-  
տութիւն անել և երկար բարակ օրինակներով և մաստերով մեր  
խօսքը հաստատելու ջանալ. մենք առ այժմ այսպէս ենք կար-  
ծում. երբ որ մեր կարծիքից զօրաւորը կը յայտնուի և կըհամոզէ մեր  
միտքը, պատրաստ ենք նրան հետեւելու: Եւ այս Թիֆլիզեցւոց աշ-  
խարհաբառ լեզուի մասին աւելի մանրամասն տեղեկութեան ցան-  
կոցայինքը կարող են կարգալ հնախոյզ Պարոն Հախվերդեանի  
Սոյախոյնայ անուանեալ գրքի յառաջաբանութիւնը և համառօտ  
քերականութիւնը, տպեալ ՚ի Մակով 1851 թուին:

Չորրորդ՝ մեր Թարգմանութեանց մէջ այն բառերը, որոնք այս  
և այսպիսի գրեանց Աւրոսպայի Թարգմանիչները իրանց լեզուով  
անիտիտիս են դրել, մենք էլ նոյնութեամբ գործ անցնինք, չըլամե-  
նալով իմաստուններից իմաստուն երեւիլ, կամ ինչպէս հասարա-

կութիւնը տառւմ է, չ'ուզելով խելքերիս զօռ տալ: Չըգիտեմք,  
ինչ իրաւամբք խապանիումը սահմանած մին նոր դատարանի (Մեկ-  
վիդեցիայի), նորա գործերի, դատաւորների, պաշտօնեաների, ծա-  
ռայողներին, նոյն անգութ դատարանի յատկացեալ տեղերի, չար-  
չարանաց գործիքների և այլ սրանց նման առարկաների յատկա-  
ցեալ անունները փոխենք մեր խելքովը հայերէնի, երբ հայերը,  
գոհութիւն Մատուծոյ, այդպիսի դատարանների հօտն էլ չ'են ա-  
ռել: Բնդհանուր կանոն է Թարգմանութեան, որ յատուկ անուն-  
ները մի և նոյն մնան. այն բառերն էլ, որոնք մենք չ'ենք Թարգ-  
մաննէլ՝ իրանց իսկութեամբը յատուկ անուններ են, որպէս՝ Մեկ-  
վիդեցիայ, Մեկվիդեցի, Կորպոս, և այլն և այլն, և իւրաքանչիւր երեսի  
տակին նոյն բառերի, որոնք առանց բացատրութեան դժուար հաս-  
կանալու են, գրել ենք հայերէն բացատրութիւնները:

Հինգերորդ՝ այս գրքիս ռուսերէն Թարգմանութիւնը բաժա-  
նած էր երեք հատոր. մենք էլ այնպէս արինք: Ռուսերէն տպագ-  
րութիւնը զարդարած էր հարիւր տասը պատկերներով, բայց մենք  
տեսնելով, թէ շատ թանգ է նստում հարիւր տասը պատկեր-  
ների փորագրութիւնը և տիպը, և նրանցից շատերը զարդի համար  
են միայն դրած, ընտրեցինք քառասունի չափ պատկերներ, որոնք  
պատմած նիւթին հետ ճիշտ միաւորութիւն ունին, և ներկայաց-  
նում են նոյն գործողութիւնները կամ տեղիքը կամ անձինքը,  
և դրինք ներկայ Թարգմանութեանս մէջ:

Թարգմանիչ.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and fading.

Handwritten text, possibly a signature or a specific note, located in the lower-left quadrant of the page.

Տասն և վեցերորդ դարու կիսին մօտ, կարճ Նի թա-  
ղաւորութեան ժամանակը, Մնդալուղեայի բազմամարդ մայրաքա-  
ղաք Մեմլիկայի բնակիչներէ մէջ քիչ քիչ փոփոխութիւն իլաւ :  
Նրանց անհոգ սրախամտութիւնը փոփոխուեցաւ տխրութիւ-  
նի և լռիկ թախծութիւնի վրայ : Աւ 'ի զուր պայծառ փայլում  
էր Մեմլիկայումը արեգակը, 'ի զուր ծաղկանց անուշահոտութիւն  
էին բուրում նրա մէջ լայն և բազմազարդ բուրաստանները : 'ի  
զուր գեղեցիկ պաշտգամբներէ բոլորքը ժապաւինած և փաթաթ-  
ւում էին զմայլեցուցիչ կանանց մանուշակներ, գեղեցիկ գրէնադի  
ծաղիկներ և վիրգենեան յամիկներ իրանց ոսկեփայլ ծաղիկներով :  
Յերեկը բուրաստաններումը ոչով չէր երևում, երեկոները պաշտ-  
գամբներէ վրա չէր լուսւմ սիրելիների ձայնը Մանդուլեանայի (1) հնչ-  
ման հետ :

Միմայն գիշերները, էն էլ շատ քիչ, վախնալով գալիս  
էին իրանց զմայլեցուցիչ բուրաստանները գեռահաս աղջկերք միայն  
գլխադալիվիվերէ ամերից փչած պարզ օդով շունչ քաշելու համար :  
Տխուր էին էս երկիւղալի դրօսանքները, սիրուն աղջկերանց բերնից  
դուրս էին գալի ոչ թէ սրախական ծիծաղներ, ոչ թէ խապ-  
նիացւոց լեզուի քաղցր հնչմունքներ, այլ ան քաշել :

Քաղաքի վրա վաղուց ծանրացել էր Քնկվիղեցիայի վար-  
հուրելի իշխանութիւնը : Մեմլիկայումը չէր մնացել ոչ ընտանե-  
կան մտերմութիւն, ոչ բարեկամական ժողովներ . որդին վախե-  
նում էր հօրից, եղբայրը վախենում էր եղբօրից, բարեկամը իրա-  
ամենատիրելի բարեկամից : Վմենի մէջ ընդհանրապէս, և ամէն մե-  
նի մէջ առանձին լրտեսի և մատնիչի կասկած կար : Ոչով յոյս  
չունէր ոչ իրա կեանքից, ոչ իրա կայքից . ոչով ոչոքի չէր հա-  
ւատում . . . .

Մէկ խօսքով Քնկվիղեցիան էն ժամանակը խապանիոյ մէջ  
էր իրա բոլոր ամենակարողութեան զօրութեան ծաղկեալ վիճա-  
կումը :

---

(1) Մանդուլեանայ - է տեասի ինչ սրնգի խապանիոյ :

I.

### ՏՐԻԱՆԻ ԱՐՈՒՄՔԱՆԵՐ:

Հիմի մտքով դառնանք դէպի 1834 տարւոյ փետրվարի 15 ը :  
 Իրիկուայ եօթը ժամի մօտ էր : Թէպէտ էն օրը բարեկեն-  
 դան էր , բայց Անվիլայի փողոցները դարտակ էին և տխուր : Ան-  
 այն ժամանակ առ ժամանակ Ֆրանչիսկեանս կրօնաւոր որմինս խո-  
 ժառ և տխուր կերպարանքով հանդիպում էր փողոցներումը անհոգս  
 խիտանի հետ և երբեմն մէկ մէկի մօտից անց կենալուց Ինկվիզի-  
 ցիայի ծառաները խմաց էին տալի մէկ մէկու զաղտնի նշաններով  
 կամ խօսքերով :

Անվիլայի ահագին արուարձանի փողոցներումը , որին բա-  
 ժանում էր Գալադալիսիլեր դետը , և որ կոչւում էր Տրիանի  
 արուարձան , նոյնպէս տխուր էր և դարտակ , բայց նրա բազմա-  
 թիւ տաւերնաներումը (1) շատ ճրագներ էին վառած և լավում  
 էին զօղի ձայներ , նրանց միջումը քէֆ էին անում Անվիլայի  
 խաճամուճ ժողովուրդը և բնակիչները Տրիանի , որ էր հաստատ  
 բնակարան մարդ խաբողների , մաքսանենդների (կօնտրաբանդիստ) և  
 աքսորից փախածների :

Ին իրիկունը , որը որ մենք յիշեցինք , քաղաքի և արուար-  
 ձանի մէջ շինած կարմնջի վրայից անց էր կենում մին բարձրա-  
 հասակ մարդ Ֆրանչիսկեանի շորերով : Արա ծանր և աղնիւ դէմ-  
 քը անվրդով էր , նրա խոշոր և սև աչքերի մէջ երևում էր եր-  
 բեմն հողւոյ հեղու թիւնը և երբեմն մտքի բոցավառութիւնը , և  
 մտիկ տալով նրա սրտոյների բոլորագծին ահամայ կըկարծէիր , թէ  
 նրանք ստեղծած են միայն բարութեան և սիրոյ բառեր խօսելու  
 համար :

Ֆրանչիսկեանը դնում էր ծանրաքայլ խորը մտածմանց մէջ  
 ընկղմած :

Կարմնջից անցկենալից յետոյ նա կանգնեցաւ : Արա ա-

---

(1) դառն , ճարճկամնխանայ :



աւջը կային աջուձախ երկու փողոցներ, և կարծես, թէ նա չէր իմանում, թէ ո՞ր կողմը գնայ:

Ինչ բոպէին աջ կողմի փողոցումը, որի անունը էն ժամանակը էր Խախտանեան, երեւեցաւ մին իստակ հազնուած մարդ: Մա մին բոպէ կանգնեցաւ փողոցի մէջ տեղումը, մտիկ տուեց չորս կողմը իբրու թէ որմինի փնտրտելով, տեսաւ Պրանչխակեանին և գնաց նրա մօտ: Մա համարեալ թէ հասել էր նրան, բայց հողեօբականը դեռ մտածմանց մէջ ընկղմած լինելով չէր տեսնում նրան:

Ինչ ժամանակը անձանօթը մին ոտ էլ առաջ գնաց և կիսաձայն ասաց - խխո (1):

Իս բառի վրայ Պրանչխակեանը խկոյն բարձրացրուց դուռը, մտիկ տուեց անձանօթին և նոյնպէս պատասխանեց մին բառով - Կօրացա (2):

— Ինձ ուղարկեց հայրը (3), ասաց անձանօթը:

— Հայրը իրա որդիերանց վրայ լիակատար իշխան է, պատասխան տուեց Պրանչխակեանը:

— Ուրեմն կատարվի նրա կամըր. դուք կարող էք հետս դալ:

Էլ նրանը գնացին Խախտանեան փողոցով լուռ և զգուշ. փողոցի միւս ծայրումը անձանօթը կանգնեցաւ մին տավերնայի առաջը, որ ուրիշներից աւելի պայծառ էր լուսաւորած, և իրա ուղեկցին ձեռքով ցոյց տուեց էն տունը: Պրանչխակեանը անձանօթի հետ մտաւ հնտեղ:

(1) խխո: Ինչպէս որ գաղանի ընկերութիւնների անդամները, հնպէս էլ Ինկվիզիցիայի ծառաները ունէին իրանց համար խորհրդաւոր բառեր և նշաններ, որանցով ճանաչում էին մէկ մէկի: Խխո — լուռ: ուրիշները էս բառի սկիզբը կարծում են «անբէնիս» դեղին թիկնոցը, որով ծածկում էին ափսոս - դա-ֆէ դատապարտուածներին:

(2) Կօրացա — բարձր սրածայր դդակ, որ գնում էին այրուելու դատապարտածների դլխին: Իս տեսակ դդակների վրա նկարած էին լինում սատանէք, դժոխքի չարչարանը և այլն:

(3) Ինկեկեկօր:

Իս տավերնան հր մին ճիգ և ցածր սենեակ, որի սեւացած պատերի վրայ կային մեծ մեծ ճեղքուածներ և ունէր մին պղտիկ խահանոց . պատերի ձգտով երկայն կեղտոտ սեղանների առջեւ դրած էին կիսակոտրած աթոռներ . պատերի վրա մինչև կէսը կրպցրած էին սուրբ կուսի և աֆտօ - դա - ֆէի շատ կոպիտ պատկերներ : Նրանց առաջը վառւում էին բարակ մեղրամամներ և կլէկի ճրագներ փոխանակ կանթեղների . իսկ օձուքի գերանների վրա կրպցրած էին ահագին կեռեր, որանց վրա քաշարած էին խողի ապուխտներ , պաճառամիսի կտորներ , խողի իւղի կտորներ, մարդկերանց գդակներ և վերարկուներ :

Սեղանների բոլորքը մեղրամամների և ճրագների նուազ լուսի տակը նստած էին խիտաններ, Խնկվիղեցիայի ծառաներ, Դոմինիկեան կրօնաւորներ, բօշաներ, կօնարարանդիստներ : Նրանք խմում և քէֆ էին սնում, բայց նրանց զարհուրելի դէմքերը, նրանց շատ կամ քիչ կեղտոտ շարերը, նրանց երբեմն խանձած, երբեմն սուր ձայները սօսկում և զըզուանք էին բերում :

Ֆրանչիսկեանը նստաւ միւսներից հեռու, իսկ նրա ուղեկիցը մօտեցաւ մին բաւական գեղեցիկ և թուխ աղջկայ մօտ, որ կանգնած էր տավերնայի դրան մօտից մին քանի քայլ հեռու խահանոցի դրանը :

Իս աղջիկը, որի անունն էր Չապա (1), տավերնայի պահօղի քոյրն էր : Լնծանօթը մօտենալով նրան հարցրուց կիսաձայն Չապա, Ֆրասիօն (2) էսօր ե՞կել է էստեղ :

Դեռ չէ, պատասխանեց աղջիկը, բայց նա կրգայ շուտով . ևս զրկեցի իմ եղբայր Կօկոյին (3) ստել նրան, թէ սինեօրինա Դօլօրէսը տունից դուրս կրգայ կէս գիշերւայ մօտ . . . Իս ուլ է, ասաց Չապան, մտիկ տալով Ֆրանչիսկեանին . մեր սրբազնա-

---

(1) Չապա - պապղուն և ձայն հանօղ մետաղի նշան : Իս անունը տալով նորահաս կանանց նշանակում է դուրական, գեղեցիկ . Իս բառը գործ է ածւում միայն ռամիկների մէջ :

(2) Ֆրասիօ - է նուազական Ֆրանչիսկոսի :

(3) Կօկօ - յովակիմ :

գոյն հորե՞ց խօ չէ . . . այսինքն, նա՞ խօ չէ, որի հետ պէտք է խօսի Ֆրասկօն:

Հենց ինքն է: Աս սրան հանդիպեցայ, ինչպէս որ ինձ նըշանակել էր սրբազնագոյն հայր Ինկվիզիթօրը, Տրեանի կարմնջի մօտ: . . . Բայց սինեօրինա Վօլօրէսը կը կատարէ՞ արդեօք իրախոստումը:

Կը կատարէ, տէր: Աս տարայ տուի նրան իրա նշանածի նամակը . . . այսինքն ո՛չ թէ իսկ նրանից, այլ հնպէս, գիտէք էլի. . . . Հայր Ինկվիզիթօրը բարեհաճեցաւ հրամայել նրա նման ձեռք քաշել: Աւ յերաւի հնպէս վարպետութեամբ արին, որ սինեօրինայ Վօլօրէսը ամենեւին չը հասկացաւ:

Աս իսկոյն համաձայնեցաւ տեսութիւն անելու:

Չէ կարելի ասել, թէ իսկոյն, մին փոքր միտք արաւ . . . մի՞ թէ հանար բան է գնալ մէնակ, գիշերը, հն էլ հնպիսի երևելի աղջկան . . . բայց գիրն էլ խիստ ողորական էր. ես էլ, գիտէք, քիչ չ'աղաչեցի:

Դու բարի գործ ես գործել, Չապա, ասաց անծանօթը կեղծաւոր հեղութիւնով: Ախրը հայր Ինկվիզիթօրը ուզում է միայն սինեօրինա Վօլօրէսին մեղքից ազատել . . . ի՞նչպէս կարելի է որ նա պատկի հերետիկոսի հետ, Մարրանօյի (4) սրդւոյ հետ:

Ուրեմն դուք բաւական էք ինձանից, սինեօր Վնրիկէզ, հարցրուց նա փոքր ինչ ամօթով:

Ինքան բաւական եմ, պատասխանեց Վնրիկէզը, որ քեզ պատուական տեղ կը տամ պշայճայօրումը (մեծ հրապարակումը), երբ որ հնտեղ աֆտօ - դա - Ֆէ կը լինի . . . և շուտով կը լինի:

Իրան, աղաղակեց աղջիկը ուրախ ծափ տալով: Ինչպէս շորհակալ կը լինիմ ձեզանից հստուր համար, սինեօր Վնրիկէզ . . . Ախրը ասում են, թէ այրելու են աւելի քան տասն և հինգ կենդանի հերետիկոսներ, դեռ ինչքանին էլ կ'ողորմի հայր Ինկվիզիթօրը, այսինքն, կը հրամայէ առաջ խեղդել և յետոյ կրել, եթէ նրանք զղջան:

Վնրիկէզը գո՛հ էր Չապայի ֆանատիկ հրճուանքից, բայց

(4) Մարրանօ — խող. հսպէս անուանում էին Խապանումը քրիստոնեայ դարձած Մաւրերին և հրէաներին:

եթէ նրա վերջի բառերը ասելու ժամանակը նրա միտքը դար մտիկ տալ նրան ասելի աչքը սրած, նա կրտեսնէր, թէ նրա սրօշները սպռանամ էին, թէ նրա աչքերի մէջ երևում էր սաստիկ երկիւղ, և թէ ողորմելի աղջկայ սև թաւիշեայ (մախմուրի) բաճկոնը բաւական բարձրանում էր նրա սրտի թրթռալից: Արկիւղն էր ստիպել Չապային Խնկվիղիցիայի գործիք դառնալ: Իմանալով, որ իրա սրտակերը կաթօլիկ շէն իլել, նա միշտ վախենում էր ընկնել էս դարհուրելի դատարանի հալածանքի տակ: Այս կորստական հալածանքից աշխատում էր նա աղատել իրան՝ կեղծեալ Փանատիղմով և Սեվիլեայ Խնկվիղիցիայի մեծաւորին ծառայելով:

Չապայի վերջի խօսքերից յետոյ Անրիկէզը խնայն հրամայեց նրան բերել իրա և Ֆրանչիսկեանի համար դինի, և Չապան ուրախանալով, որ կարող է աղատուիլ էն իրա համար ծանր խօսակցութիւնից, վաղեց հրամանը կատարելու:

Անրիկէզը ուղում էր աթոռներից մէկը մօտ քաշել էնպէս, որ կարողանայ իրա ուղեկցի դէմ ու դէմ նստել, յանկարծ եկաւ տավերնան մին բաւական նորահաս և լաւ հաղնուած տղամարդ: Այս նոր եկողը մօտեցաւ Անրիկէզին և ախանջոււմը քչիւնալով ասաց նրան, աչքի տակից մտիկ տալով Ֆրանչիսկեանին՝ սա նա՞ է:

— Սա է, սինեօր Ֆրասիօ, պատասխանեց Անրիկէզը:

Ան ըստէին Ֆրանչիսկեանը վեր կացաւ իրա տեղից և ձեռները խաչաձև դրեց իրա կուրծքի վրա մատները դէպ 'ի վեր: Ֆրասիօն էլ էնպէս արաւ: Յետոյ հողեօրականը խաչաձև բռնեց իրա ձեռքերը մատները դէպ 'ի ներքև, և դուխը կռացրուց դէպ 'ի նոր եկողը, որ նոյնպէս արաւ, էնպէս որ կանալով նրանք կամաց դուլս դլսի դիպցրին. էս էր Խնկվիղիցիայի ծառայողների բարեկու նշանը: (1)

Բայց Ֆրասիօն չը բաւականացաւ սրանով. նա բաց արաւ իրա կարճ կապան և ցոյց տուեց Ֆրանչիսկեանին իրա կուրծքի վրա քաշ արած արծաթի մէդալը, որի վրա վարագրած էր փրկիչը խաչի

(1) Խնկվիղիցիայի ծառայողները խիստ շատ էին. Խնկվիղիցիայի և նրա հալածանքից վախենալով ասելի լաւ հնարքով վախճելու յուսով մտնում էին նրանց կարողը շատ աղնուականներ: Չառայողների մին մասը դէնք ունէին:

վերայ և արեգակը՝ նշան լուսոյ։ Եւ վերջին նշանին Ֆրանչիսկեանը պատասխան չբուռաւ։

Ֆրասիօն կասկածանքով մտիկ տուաւ Լճերիկեղին, բայց Լճերիկեղը միայն սւսերբը բարձրացրուց։

— Սա մերոնցից չէ, ցած ձայնով ասաց Ֆրասիօն։

Լճերիկեղը նշան տուաւ իրբու թէ ինքը հակառակն է կարծում։

— Լսում եմ քեզ, թէ սա մերոնցից չէ, կրկնեց Ֆրասիօն։

Սեղ դաւաճանութիւն է արած — լսում ես թէ չէ, կրկնեց նա սաստիկ հուփ տալով Լճերիկեղի ձեռք։

Եւ ամէն բանը խօսեցան կամաց, բայց այնու ամենայնիւ տավերնայի սովորական հիւրերը հասկացան, թէ մին անսովոր բան է անց կ'նսում, որ կախ պէտք է բաց անէ։ Եւ մէկը աչքերը դցեցին Ֆրանչիսկեանի վրա։ Իսկ նա էն ժամանակը իրա հանդարտութիւնովը աւելի նման էր էս անսովոր տեսարանի հանդիսատեսի, քան թէ գործողի, որ էս տեսարանի մէջ մեծ մասնակիցն էր։

Տավերնայի ամէնօրեայ հիւրերից մին քանիսի մէջ, որոնք աւելի զարմօցեալ էին Ֆրանչիսկեանի վեհ և պարսկաւելի կերպարանքից, Լճերիկեղի և Ֆրասիօյի դէմ սպառնալիքի շունչ էլաւ։

Ինկվիզիցիայի սպասաւորները անկասկած էին, թէ իրանց նախատիքի համար կըզայ շուտ և սաստիկ պատիժ։ Բայց այնու ամենայնիւ նրանք չէին ուզում արուարձանի բնակիչների հետ կախ բաց անել։ Նրանք ընտրեցին յաղթել նրանց ոչ թէ իրանց ստիպելովը, այլ հզօր անուամբ զարհուրելի դատարանին, որի գործակալներն էին իրանք։

— Բարեկամներ, ասաց Ֆրասիօն դառնալով դէպ'ի էն հիւրերին, որոնք ուրիշներից աւելի պատրաստ էին Ֆրանչիսկեանի կողմը բռնել, բարեկամներ, մի՛ թէ դուք կամենում էք պաշտպանել Ինկվիզիցիայի թշնամուն։

Օւրհուրելի, Ինկվիզիցիայ « բառից ամբոխի ամէնից վրասահներն էլ դեղնեցան և սարսափեցան »։ Այլ մինը չըկարաց մին խօսք ասել։

Ֆրանչիսկեանը տավերնի մէջ բոլոր իւղղների վրա հանդարտ մտիկ տուեց և կամաց գնաց դէպ'ի դուռը։

— Արեմն դուք թողնում էք դրան հատեղեց և ձեզանից ոչ մի՛նք չի կանչել հատեղ պահապաններ։

— Ես, ես կրկանչեմ նրանց, զարհուրելի բղաւեց Ղապան, 2.

Իս ասելով նա ուզեց վազել դէպ 'ի դուռը , բայց Ֆրան-  
չիսկեանը դարձրուց նրա վրա իրա հզօր և հոգւոյ մէջ Թափան-  
ցօղ հայեցուածքը , և Չասլան հնազանդելով էս հրաշահան հայե-  
ցուածքի ներգործութեանը չօքեցաւ հոգևորականի առաջը :

Նոյն բուպէին մին դաղտնի համակրութեամբ տալերնայի մարդ-  
կերանցից շատերը ձեռքերը տարածեցին դէպ 'ի Ֆրանչիսկեանը ,  
իրբու Թէ խնդրելով նրանից ողորմութիւն և պաշտպանութիւն :  
Ֆրանչիսկեանը դարձաւ դէպ 'ի լուռ կացած ամբօխը և օրհնեց  
նրանց : Յետոյ շտապելով դուրս եկաւ տալերնայից և անյայտ իլաւ  
մ'Թնումը :


Նրան ոչով չըհետադօտեց : Նրա ետեւից չուազեց ինքը  
Ֆրասկօն էլ :

Լուծիւնը մին քանի բուպէ էլ քաշեց տալերնումը . վեր-  
ջապէս Ֆրասկօն ասաց Վերիկեղին — հիմի դու տեսնում ես , որ  
մեզ դաւաճանութիւն են արել :

— Հա՛ , նա ոչինչ չէ իմանում , պատասխանեց Վերիկեղը :

— Ուրեմն , սկսե՛ք . մենք երկուսս էլ կարօղ ենք բանը գը-  
լուխ տանել : Գնանք :

Եւ նրանք դուրս եկան տալերնայից :



II

ԷՄ, ՊԱՆԱԶԻՑ ԴԷ ԼԵԳԱՐԴՈՒՆԵՅ:

Գարբուանի Պաշտօր:

Տրիանի արուարձանի ծայրումը մին Ժամանակ կար մեծ շե-  
նութեան աւերակ , որ շինած է իլել մաւրիտանեան ձեով : (1)

(1) Խապանիոյ կաթողիկոսները Մաւրերի Թողած շքեղ շինութիւն-  
ները էնքան ոչինչ քանի տեղ էին գնում , որ բայ 'ի մին քանի  
շատ երեւելիներից , որոնց տիրել էին կրօնաւորները , բոլոր մնացած-  
ները Թողած էին աղքատների , խիտանների և դողերի համար :

Ինչ զարմանալի տար դիշերները, որոնք կարելի է անցկացնել  
Միդալուզիայումը բայ երկնքի տակ, հանդարտ բնույթ էին էդ ա-  
ւերակներումը աղքատներ և խիտաններ . խիձմեռուայ օրերը ցարտ  
քամիի ժամանակ դալիս էին էն տեղ սրառաւ կնանիք արեգակումը  
տարնալու :

Արաւեր պատերի ահագին բարձրութիւնից և մին քանի ճարտա-  
քաղործ զարդարանքների մնացորդներից դժուար չէր հասկանալ ,  
թէ էս աւերակների տեղ իլել է մին օր ընդարձակ և հոյակապ  
շինութիւն : Մա և էն ժամանակը , որին վերաբերում է էս մեր  
պատմութիւնը , դեռ բարձր կանգնած էին նրանց մէջ գեղապաճայճ  
և թեթե սիւներ , որոնց վրա կապած էր կամար զարդարեալ  
անեղծ մնացած արարեսիներով : Իս սիւների չորս կողմը , որոնք 'ի  
հարկէ մին ժամանակ շքեղ դահլիճի զարդեր են իլել , բաշած  
էր սրտ , որին ժամանակի աւերիչ ձեռը համարեալ թէ խնայել էր  
դիպչել : Մնացել էին նաև դահլիճի դռները :

Վէտուդէն , աւերակների մէջ բուսած էին անուշահոտ լիվ-  
կօ , գեղին վարդ և վայրի դարնիի թուփեր , և նրանց լերը , գե-  
ղեցիկ կանանչը խիտ անհամաձայն էր երևում շրջակայ աւերակի  
տխուր պատկերին :

Իս բնակութիւնից հեռու աւերակներումը սովորաբար հա-  
ւաբում էին Վարդունիայի (1) միաբանութեան անդամները . —  
էս աւերակը Արքի Թեմաորի պաշտօն էր :

---

(1) Վարդունիայի Ռաբանութիւն — եղբայրութիւն աւազակայ : Իս ա-  
նունով Ռապանիումը 1417 ից մինչև 1821 տարին կար գաղանի  
ընկերութիւն աւազակների , գողերի և ամէն տեսակ անպիտան մարդ-  
կերանց . Իս կանոնադր սարքած ընկերութեան նպատակներն էին ա-  
մէն տեսակ չարագործութիւններ , որոնց գործերը կարող է վստա-  
հանալ վրէժխնդրութիւնը և անպատիւ արած անձնասիրութիւնը :  
Վարական արած վարձով էս ընկերութիւնը յանձն էր առնում  
վերաւորել գաշնակով , սպանելով կամ ջրապանելով յոնջնօղի կամ  
քին համեմատ , յանձն էր առնում ջրումը խեղդել , և այլն : Սպա-  
նելը մեծ գին ունէր , և ընկերութեան անդամներին էդ բանին  
համոզել կարող էր միայն նա , ով որ մին կերպիւ երևելի անուն  
ունէր հասարակութեան մէջ : Բայց ինչ որ Ռաբանութիւնը խոստացաւ ,

Եւ երեկոյին, երբ սկսուամ է մեր պատմութիւնը, հնտեղ իշնում էր հասիսի ժողովներից մինը :

Դամր տասն էր: Վասնիճի դռները բացուեցան և ներս մը տան երեսունի չափ մարդ և կին, ծեր և երիտասարդ: Արանք մտան լուռ և կարգով, ճիշտ պահպանելով ընկերութեան ստորագասունը:

Վասնիճի մէջ տեղը, որ բաւական լուսաւորած էր սիւների վրա ամրացրած երկաթի կոճակների մէջ տնկած կերոններով, կանգնած էր միաբանութեան գլխաւորը:

Նա էր մարդ բարձրահասակ, լղար, ուժեղ, թուխ երեսով, որ ցոյց էր տալի խորամանկութիւն, յանդգնութիւն և անգթութիւն: Նա որոտածայն էր, և երբ հրաման էր տալի, հն ժամանակը նրա գէմըր և շարժուածքը իշխանական կերպ էին բռնում: Արա հագուստն էր հասարակ վշեայ շապիկ, սև բաճկան ուսերքի

անպատճառ կրկատարէր, հնդուր համար որ Գաբանութիւնը մին բանի խօսք տալից յետոյ պարտաւորութիւն էր համարում ամենայն խկութեամբ կատարել:

Եւ խիստ բազմաթիւ միաբանութեան գլխաւորը կոչուամ էր Ֆեժ եղբայր (Հերմանո մայիօր): Արա իշխանութեան տակ էին Վասնիճի — նահանգական գործակալներ, որոնք կուրորէն կատարում էին նրա հրամանը: Արանցից ջոկ ընկերութեան անդամներ էին Վասնիճի — աւազակներ, որոնք չէին վախենում ոչ տանջանքից և ոչ կախաղանից. ընկերութեան մէջ նրանց կոչում էին Վասնիճի — ծակողներ: Ք. Պլերկուրեր — Տաշկոններ, որոնք էին վարպետ երիտասարդներ ըստ մեծի մասին բանտերից փախած. անդամները սորանց կոչում էին ունիւրի: Վ. Սո Քոնկլէ — փոփոկ. էս տնունը տուել էին նրանց հնդուր համար, որ նրանք պարտաւոր էին փշել գլխաւորի ականջին ամենայն բան, ինչ որ յաջողում էր նրանց դրսումը իմանալ, գործ ածելով իրանց կեղծեպ հեղութիւնը և փարիսեցութիւնը: Սո Քոնկլէ էին ծեր մարդիք, որոնք իրանց միաբանութեան գլխաւորի և Նիկիլեղիցիայի մօտ (որովհետև սրանք ընկերութեան լրտեսի պաշտօնից ջոկ շատ անգամ Նիկիլեղիցիայի ծառայողների պաշտօններ էլ էին կատարում) ունեցած պաշտօնից ազատ ժամանակը ըստ մեծի մասին անց էին կացնում եկեղեցիներումը: Արանցից ջոկ ընկերութեան մէջ էին Վ.



վրա գցած վերարկուի նման և վշեայ լայն կարճ անդրավարտիք , որ  
չէր հասնում նրա տախտակ և կնճռոտ ոտներին , որոնց կապած  
էին խրացներով աշխարհագրասիւներ , այսինքն , հողափաթի նման ոտնա-  
մաններ .

Նրա անունն էր Մանգամբենքո .

Ղաֆլիճը մտած խումբը կանգնեցաւ նրա բոլորքը . Նրա եր-  
կու կողմը կանգնեցան երկու Ղաուպօսներ , որոնք գերազանց էին  
չափազանց ուժով և դեռ ջահիլ էին : Առաջինի անունը կամ լաւ  
ևս ասել մականունը էր Մանօֆէնա — Ռէնն յետ : Աս անունը  
տուել էին նրան դաշնակով ծակելու և ատրճանակ գցելու զար-  
մանով շնորք ունենալու համար : Արկորդի անունն էր Արհրո  
դէ Խեկրո — երկուի Տարֆն : Նա երեք անգամ տանջանքի մէջ էր

Արհրոհրո — գողացած բաների թարղնող կանայք ըստ մեծի մասին  
պառաւներ . նրանց անունը կազմում էր Արհրո — թարցներ կամ  
ծածկել բայից : Ա . Չիւպօսներ — տասից մինչև տասնհինգ  
տարեկան զանազան պաշտօններ կատարող տղերք . Չիւպօսի աստի-  
ճանից տղերքը մանուկ էին ունիւորներէ կարգը և մին բանի ժա-  
մանակից յետոյ Գոսպօսներէ կարգը : Ա . վերջապէս՝ Օ . Արհրո —  
յաւերթակարսուս . սրանք էին նորահաս , սիրուն կանայք՝ ընկերու-  
թեան անգամներից գերազանցների սիրելիները , որոնք ընկերու-  
թեան հրամանովը խաբսով տանում էին , ումը որ պէտք էր , էն-  
պիսի տեղերք , որոնք յաջողակ էին Ղարդունիայի գործողութիւն-  
ների համար : Աթէ աւելացներ սրանց բոլորի հետ Ալգուազի-  
ների (պօլիցիականների) , կանանիկների , պրեւանների (երէցների) ,  
Ինկիլիղիթօրների և այլոց մեծ բաղմութիւնը , որոնցից ոմանք գոր-  
ծիք և ոմանք պաշտպան էին դարդունիայի ընկերութեանը , էն  
ժամանակը լաւ կարելի է հասկանալ , թէ ինչ էր էս զարհուրելի  
միաբանութիւնը , որը որ տեւեց Խապանիումը 400 տարիից աւելի .

Աս ընկերութեան վերջին գլխաւորին իրա տանակից գործա-  
կիցներով կախեցին Սեփիլիայումը 1822 տարւայ Նոյեմբերի 25  
ին . ընկերութեան գործոց վերաբերեալ թղթերը մին հնարքով  
ձեռք գցեցին . իսկ նամակները , կանոնադրութիւնը և այլն դեռ 1823  
տարումն էլ Սեփիլայի գլխապարտութեան դատարանումն էին .

ընկել և չէր յայտնել իրա յանցանքը, չէր մատնել իրա ընկեր-  
 ներին, և ինչպէս երևում էր, ամենեւին չէր վրասուել տանջանք-  
 ներից: Արանցից ցած, գլխաւորի մօտ կանգնեցան երկու ծեր քո-  
 էլէսներ, մին քանի շիւտաբաններ և մին քանի սրբաբաններ: Այս խումբ-  
 թից դուրս և նրանցից փոքր հեռու կանգնած էր մին երիտասարդ —  
 էս ժողովի գլխաւոր պատճառը: Արա անունն էր Ղարաբառո (1):

Մաղամիտնոն, որ (հարեանցի նկատենք) ՚ի բնէ էր ճար-  
 տարախօս մարդ, ասաց ժողովքին՝

— Այս ձեզ հաւարել եմ էսօր խորհուրդ անելու էն գործի  
 վրա, որ մեր ընկերութեան հական իրաւունքին է վերաբերում:  
 Ինչ որ գիտէք, իմ որդիք, որ իմ կառավարութեան տակ ձեր  
 աշխարհաւիճակը սկսելու օրից, մեր պատրօնի (փերի) ողորմութիւնը  
 յայտնի թափում է մեր ընկերութեան վրա: Քիչ են պատա-  
 հել մեզանումը օրափոխաւիճակներ (2), իշի Վրայ նստած Տանգալ (3),  
 արհուսի նստելու ուղարկածներ (4), և Գայլի Բերանը ընկածներ (5): Մեզրէ  
 ձեզ էլ ընկել են (6) շատ քիչերը: . . .

(1) կեռ:

(2) կախածներ:

(3) Իսպանիումը մին քանի դիպուածոց համար մեղապարտներին  
 ման էին ածում քաղաքի մէջ իշի վրա նստեցրած:

(4) նաւերումը ծառայելու արտօնածներ:

(5) բանտը դցածներ:

(6) Մեզրէ ձեզ ընկել նշանակում էր պատժուիլ մին նոր կերպով:  
 Այս պատժի տակ ընկնում էին դայթակղեցուցիչ աղջկերք և էն  
 կանայքը, որոնք փչացնում են ջահիլ աղջկերանց: Այս պատժը  
 կատարւում էր էսպէս: Այս օրին մօտ դահիճը և նրա ծառաները  
 տկլորում էին մեղապարտին մինչև մէջքը, և նրա մարմինին մեղք  
 էին քսում: Յետոյ նրա գլխին ծածկում էին խաւարարանից շինած  
 դտակ, նստեցնում էին իշի վրա և ծանրաքայլ ման էին ածում  
 երկու կարգ զինուորների միջումը: Այտեից գնում էր դահիճը իրա  
 երկու սպասաւորներով, որոնք տանում էին մեծ քթոցով հաւի  
 բմբուլներ: Ամէն մեծ փողոցներումը և ամէն հրապարակումը  
 հանդէսը կանգնում էր, կարգում էին վճիռը և դահիճը ածում  
 էր յանցաւորի վրա երկու բուռը բմբուլ: Ի հարկէ բմբուլները

— Իմ ընկերներ , առաջ էդպէս չէր . . .

— Տայց , շարունակեց Մանդամիէնտօն մին ըոպէ լռելից յետոյ , պարկեշտ դէմք ցոյց տալով , - սնախառութիւնից չ'է , որ ես մտքերդ իմ բերում իմ օգտակար ծառայութիւնները . . . ես միայն անարժան գործիքն եմ իմ բարձր պատրոնի . . . նրա կամքն է անում ամէն բանը . . . ես յիշում եմ մեր ընկերութեան գործոյ հիմնիկուայ երջանիկ վիճակը միայն կնդուր համար , որ ցոյց տամ ձեզ , թէ մեր գործոց յաջողութիւնը և մեր բարձրանուն մուշտարիների ( յանձնարարների ) ապսպրանքների կատարումը ինչպէս կախուած է մեր կատարեալ համաձայնութիւնից և կապակցութիւնից . . .

Եւ յիմ դառնանք , բարեկամք , մեր ժողովքի առարկային :

Եւ խօսքերից յետոյ Մանդամիէնտօն սուր աչքով մտիկ տուեց բոլոր ժողովականներին , և իրա հայեցուածքը դցելով Պարարատոյի վրա , որ հեղաբար կանգնած էր սիւնի մօտ , նշան տուեց , որ էն ջահիլ մարդը մօտ գայ :

Վիսաւորի բոլորքը կանգնած ամբօխը տեղ բաց արաւ և Պարարատօն կատարելով Մանդամիէնտօյի հրամանը կանգնեցաւ նրա մօտ : Վիսաւորը բռնեց նրա ձեռը և ասաց ժողովքին :

— Բարեկամք իմ . սինեօր Մանօֆինան և Կուէրպօ դէ Խիերրօն նկատել էն էս ջահիլ մարդի անճարէլը (1) եկեղեցումը՝ առաջ թաշիխնակ մին աղետականից , յետոյ բաւական ծանր քսակ մին կանոնիկից : Պէտք է ասել ձեզ , որ շատ վարպետութեամբ է անջատել . սակայն , ինչ կ'ուզէ ըլնի , նա իրաւունք չ'ունէր էդ բանը անելու . ուրեմն մեր կանոնը քանդել է . . . յայտնի բան է , որ սրան պէտք է ճախը Գրէլ (2) : Տայց սինեօր Մանօֆինան և

կոչում էին մեղրօտ մարմինին , և դատապարտեալը դառնում էր ծաղրական տեսարան , որով շատ զուարճանում էր դատարկաշրջիկ խաժամութը :

(1) գողանալը :

(2) տեղական իշխանութեանը մատնել :

Կուէրայօ—դէ Խիերրօն կարծում են, թէ ջահիլէ գերազանց տա-  
զանդր կարող է մեզ օգուտ բերել, և թէ շատ լաւ կրկինի սրան ըն-  
գունել մեր միաբանութեան մէջ. . . . Եւ բանի համար, դուք  
ինչ էք ասում, իմ սիրելի բարեկամներ:

— Մուխի մէջ, մուխի մէջ, — կատաղած բղաւեցին երկու կամ  
երեք պատաւ կանայք: Միւսները լուռ կոչին:

— Եթէ ինձ կը հարցնէք, շարունակեց Վանդամիէնտօն, ես  
մերոյիշեալ բարձրանուն պարուններէ կարծիքի հետ համաձայն եմ:  
Ես էս ջահիլին մեր եմ առնում նաև իմ առանձին հովանաւո-  
րութեան տակ, և դրան խրախօյս տալու համար առաջարկում եմ  
տալ դրան բոլոր արտօնութիւնները, որ վայելում են մեր լաւա-  
գոյն ունիւորները մին պարտաւ ժողովոյ: Ով որ ձեզանից էս բանին  
համաձայն չ'է, ասաց գլխաւորը ձայնը բարձրացնելով, թող խօսի:

Պատասխան չըկար. միայն սիրեմաներից մին քանիսը քաղցր  
աչքով մտիկ էին տալի Վարաբատօյին, որ բաւական սիրուն էր:

— Ուրեմն, որդիք, շարունակեց Վանդամիէնտօն, դուք ինձ  
հետ համաձայն էք:

— Հատ շնորհակալ ենք ձեզանից. . . .

Եւ ասելուց յետոյ նա կրկին բռնեց Վարաբատօյի ձեռք և  
կարգաւ մօտեցրուց նրան իրա բոլոր ստորադրեալներին, որոնք կար-  
գաւ տուին նրան եղբայրական համբոյր:

Սերջապէս գլխաւորն էլ արժանացրուց նրան էդ պատիւին  
և նրան եղբայրական զանազան գաղտնի նշաններ և բա-  
ռեր սորվեցնելից յետոյ նրան տուեց մին թուղթ, որի մէջ գրած  
էին ընկերութեան (1) անդամներէ պարտաւորութիւնները և ար-  
տօնութիւնները:

Եւ անսովոր հանդէսից յետոյ Վարաբատօն կանգնեցաւ իրա  
նոր ընկերների կարգումը. իսկ գլխաւորը հանեց գրպանիցը կեղտոտ

(1) Վարդուհայի ընկերութեան կանոնադրութիւնը, որը որ ըն-  
գունել էին նրանք 1490 տարումը, պարունակում էր իրա մէջ  
ինն յօդուածներ: Եւրա մէջ մանրամասնաբար նշանակած էր, թէ  
ով կարող է լինել ընկերութեան անդամ, ի՞նչ են ամէն մին կարգի  
անդամների պարտաւորութիւնները և ի՞նչ վարձատրութիւն է  
օտանում իւրաքանչիւր անդամը:

և գլխեգլուխ գրած թղթի կտոր և ասաց վէճ կերպարանքով :

— Մհա, եղբայրք, էս անգամ անելու դործերի բաժանումը :  
Պէտք է ինչքան կարելի է լուս փարպետութիւնով երեք հասարակ  
փէճ (1) անել . առաջինը՝ մին ջահիլ սիրուն տղայի, որ ունի սև  
քնչացք (պեխեր) և ամէն երկոյ ժամը եօթին անց է կենում Տրիանի  
կարմնից . աւելի լուս ճանաչելու համար պէտք է իմանաք, թէ  
նա բարձրահասակ է և սովորաբար կարմիր վերարկու է ծածկում .  
Արա կնքուատէքի համար նշանակած է յիսուն թէալ : Իսկ եթէ  
կնքուատէքը կրկատարուի հնապէս, որ կը հասնի երեսին և կը թողնի  
երեսի վրա մին լուս սպի, հինգ հարիւր մարավեղիս էլ կը ստացուի :  
Իս բանի համար իտղը տալու է մին շատ սիրուն և բաւական ջա-  
հիլ սինեօրինա՝ հնդուր համար էս դործը ես ձեզ եմ յանձնում,  
սինեօր Վարաբատօ, գիտելով թէ դուք պատրաստ էք սիրուններ  
ըին հաճոյանալ :

Մհա ձեզ հասնելիք երեսուն եօթը թէալը, հինգ հարիւր  
մարավեղիսն էլ կը ստանաք դուք յետոյ, եթէ կրկատարէք աւել-  
ցրած պայմանը . . . և էս բանի կատարելը, սիրելի՛ բարեկամ,  
ամենեւին դժար չէ, պէտք է միայն էս քացախով շինած մուրը բը-  
սել երեսի կտրած տեղին :

Իս ասելիս Վանդամիենտօն տուեց Վարաբատօյին մին պղտիկ  
շեշով սևագոյն ջրայի հիւթ :

Երկրորդ կնքուատէքը, շարունակեց նա, որի համար նշանա-  
կած է միայն քառասուն թէալ, պէտք է անել ողորմութեան միա-  
բանութիւնի առաջնորդին . . . իսկ եթէ յաջողի առաջնորդի  
մին աչքը հանել, էլի չորս դուրսն փարձատրութիւն կը լինի :

Իս պղտիկ դործը ես յանձնում եմ սինեօր Վանօֆինային  
և նրա սիրական Կալէփինին . . . նա կը պաշարի ինչպէս պէտքն  
է . . . և ասա՛ երեսուն թէալը, իսկ եթէ յաջողի, չորս Վու-  
բլօնը կը հասնի սիրենային :

( ), ես էդ կը ստանամ, անպատճառ կը ստանամ, քաջասրտու-  
թեամբ ասաց էն սիրենան, որին գլխաւորը Կուլեփինայ անուանեց :

— Գիտենք, գիտենք, վրա բերաւ Վանդամիենտօն . դու  
ինչե՞ր չես անիլ, նազելի՛ . . . Չեղ համար, սինեօր Վանօֆինա,

10745-57

(1) Կնքուատէք անել — նշանակում է՝ դաշնակով վերաւորել .  
3.

սա յատուկ գանձ է:

— Հա՛, լաւ գանձ է, կրկնեց կիսաձայն կասկածոտ աւաղակը, երկմտութեամբ և բարկութեամբ մտիկ տալով Առլեվրինի վրա՝ գանձ է, որը որ ես պահում եմ ոչ թէ ինձ համար, այլ ուրիշ:

Մերենան լսեց աւաղակի ասածը և տեսաւ նրա հայեցուածը. նա մտաեցաւ Մանօֆինային, փաթրթուեցաւ նրան և փաղարշանօք մտիկ տալով երեսին ասաց նրան ցածր ձայնով՝

— Տես, իմ Մանօֆինա, դու բարեկանում ես . . . մի թէ չես իմանում, որ ես աշխարհումը մէնակ քեզ եմ սիրում:

Մերելե կնիկարմատի փաղարշանքը ամենակարօղ է. — և Վառապօսի ճակատը բաց էլաւ:

— Մէնակ ինձ, պատասխանեց նա նոյնպէս ցածր ձենով, և երբէք ուրիշին չէ՞ . . . Մերենան կնայէս մտիկ տուեց նրան, որ էլ ուրիշ պատասխանի կարելի չըմնաց: Այլ նրա էս հայեցուածքը կեղծեալ չէր. Առլեվրինան սիրում էր աւաղակին յիստակ, միայնակ . . . :

Այս տեսարանից յետոյ կրկին լուեցաւ դիտաւորի ձայնը:

— Արրորդ կնքուատէքի համար, ասաց Մանդամիենտօն, նշանակած է միայն վեց դուրլօն . . . նրա փողը, գիտէք, տալիս է մին կանոնիկ . . . և կնքուատէքը պէտք է անել վաղը մինչև իրիկուայ վեց ժամը վարձողի մին ընկերին, կնքուր համար որ կարելի լինի արգելել էս պարօն ընկերին ստանալ էն տեղը, որը որ ուզում է կանոնիկը . . . իսկ եթէ կնքուատէքից մին քանի օր յետոյ թաղման հանդէս կըլնի, կանոնիկը կրկրկնապատակէ վարձը: Բայց վարձողը ցանկանում է, ով դիտէ ինչ մաքով — որ նրա ընկերը մին խփելով չըխաւարի (1):

Այս կնքուատէքը կատարելու համար ես ընտրում եմ ձեզ, սինեօր Առլերայօ դէ Խիկերրօ: Վառք վեր առէք որքան կարելի է բարակ դաշնակ, և աւելի լաւ կըլնի եթէ գտնէք խթան կամ թաւք կարելու ասեղ. նրանցով, գիտէք, անպատճառ կնայէս վէրք կըբացանէք, որը որ տասը կամ տասներկու օր չի լաւանալ, և որից, համարեա՛ թէ, իսկի արևն չի դուրս գալ: Ա՛հա՛ ձեզ հասնելէք փողը, կարգադրեցէք ինչպէս գիտէք:

---

(1) Հրատմուտի:

Յեւոյ, պէտք է վեցին բաղնիսումը լեղացնել (1) և երեք ճանապարհորդութիւն (2) անել՝ մինը վաղը Խաենի մեծ ճանապարհումը, որտեղից պէտք է հզուց անցկացնեն ութսուն հազար ընդ ներսը թիւն ծախելից հաւաքած, երկրորդը Սան — լուկարի ճանապարհումը, որտեղանց պէտք է տանեն առաջինից շատ փողեր, որը որ մին բանկիր (զաւաթ) զրկում է իրա արհեստակից ընկերին. վերջապէս, երրորդ ճանապարհորդութիւնը պէտք է լինի Վրենադի ճանապարհումը. հնտեղից, իմ բարեկամներ, պէտք է անց կենան երեք ջահիլ ազնուականներ բերան բերան լքցրած քառիներով և շատ թանկագին շորերի պատրաստութիւնով . . . Էս վերջներ, գիտէք, աւելի յարմար է. մեղանից մին բանկիր բնաւ չեն կարող պարծեալ իրանց շորերով :

Իս խօսքերից յետոյ բոլոր բաղնիքները և ճանապարհորդութիւնները գլխաւորը բաժանեց իրա ստորագրեալներին մէջ :

— Ա՛րջապէս, ասաց Վանդամիենտօն, մին գործ էլ կայ, և շատ վսեմ գործ: Պէտք է, իմ բարեկամներ, խոստացնել մին ջահիլ ազնուականի, որի անունն է Վօն Իստիվան դէ Վարդաս : Իս երկտասարդը ամէն երեկոյ և բաւական ուշ դուրս է գալի մեր արժանայարգ սինեօր նահանգապետի տունից: Ըսում են, թէ նա նշանած է նորին ողորմածութեան ազջիայ հետ, էս մեր գործը չէ . . . էս գործի համար տալիս են մեզ էս գլխից յիսուն դուալ լօն և հարան էլ գործը վերջանալից յետոյ: Իս գործը, կարծեօք, շատ հարկաւոր է մեր Տէր մեծ Խնկիլիթօրին, հնդուր որ նա բարեհաճեցաւ խոստանալ մեզ հգ գործի համար իրա հովանաւորութիւնը :

— Իսկ ո՛վ երաշխաւոր կըլինի, թէ մեզ չեն խաբել, հարցրուց Վանօֆինան, որին սիրենայի հայեցուածքը և փողաբշտները մին անտակ առանձին ազգութիւն էին արել յօդաւտ սկսոյ Վօն Իստիվանայ — դէ Վարդասի և նահանգապետի ազջիանը :

— Ա՛լ որ էս բանը ինձ առաջարկել է և պայմանաթղթին ձեռք է դրել, ինձ շատ յայտնի է: Իստեղ կասկածելու բան չըկայ :

Իս բոպէին գահլիճի մէջ վաղելով մտաւ վախից դեղնած չի-

(1) ջրումը խեղդել :

(2) մեծ ճանապարհի վրա աւազակութիւն :

վատու, որ պահապան էր կանգնած աւերակից փոքր ինչ հեռու:

— Մեծաւոր, աղաղակեց նա դիմելով դէպ 'ի Մանդամիենտօն, հատեղ գալիս է հեռ (3):

Վասն ի՞նչ մէջի մարդկերանցից մին քանիսը կամեցան գոչնակներ հանել, բայց մեծաւորը չորեցաւ Վատուածածնի պատկերի առաջը և սկսաւ բարձր ձայնով աղօթք անել: Բոլոր ժողովականները խկոյն հետևեցան նրա օրինակին:

Մին քանի լուսից յետոյ դուռը կիսատ բացուեցաւ և ետևից երևեցաւ մին օբմինի գլուխ: Մանդամիենտօն շարունակելով իրա աղօթքը մտիկ տուեց դռանը, բայց երևած գլուխը ուրախութիւն պատճառեց:

— Հա՛, էս Վոհօն է, ուրախութեամբ ասաց Մանդամիենտօն, սա մեղ չի մատնիլ:

Խկոյն ամէնքը վեր կացան և մեծաւորը նոր եկածին տարաւ դասն ինչի մին անկիւնը և կամաց հարցրուց՝

— Վու ինչի՞ ես եկել էս տեղ, եղբայր Վոհօ. վտանգաւոր իբրև իսօ չես իմացել մեղ համար:

— Իս անգամ — չէ՛, պատասխանեց Վոհօն. բայց եթէ իբրև պատահի, գիտես, աչքիցս չի սլքուի . . . դու գիտես, բարեկամ, որ էդ բանը ինձ համար շատ հեշտ է, ես ալիվազիլ էլ եմ, Ինկվիզիցիայի սպասաւոր էլ եմ . . . Վու միամիտ կայ, չեմ մատնիլ:

— Մենք առանց էն էլ քեզանից շնորհակալ ենք, Վոհօ, դու մեղ շատ անգամ ծառայել ես . . .

— Եթէ շնորհակալ էք, ուրեմն դուք էլ ինձ հիմի մին ծառայութիւն ցոյց տուէք:

— Ի՞նչ ծառայութիւն. կ'աշխատենք: . . .

— Առաջինը, ես կ'ուզէի, որ իմ աղգականներից մէկին — Վարմելիտեան վանքի աւագ լուսարարին — յետ տրուի էս առաւօտ նրանից գողացած քսակը:

— Աչքիս վրա . . . էլի ի՞նչ:

— Ի՛նչ . . . էս մին փոքր ծանր է. — Պէտք է, տեսնում ես, խաւարացիներ Ինկվիզիցիայի երկու կամ երեք սպասաւորներին:

---

(3) Ալկուազիլ կամ պօլիցիական:



— Խաւարացնէ՞լ . . . Ինկիլեղեցիայի սպասաւորի՞ն, զարհուրելով ասաց Մանդամիենտօն:

— Կարելի՞ է, ստիպողական ձայնով ասաց Կօհօն, և պէտք է կատարուի:

— Բայց, եղբայր, մի թէ դու մոռացե՞ր ես, որ Մեփիլիայի Ինկիլեղեթօրը մեր լաւ վարձողներից մինն է:

— Ինձ ի՞նչ հարկաւոր է, թէ նա ձեր վարձողն է . . . ես պահանջում եմ ձեզանից ծառայութիւն. չէ՞, ես ձեզանից հրաժարւում եմ էս օրուանից:

— Լսի՛ս ի՞նչ անեմ ես, ասաց Մանդամիենտօն, վախեցած էս սպառնալիքից:

— Լսելի ոչինչ, միայն թէ այժմ տալ ինձ երկու լաւ դուապօսներ և վեց հողի կտրիճ չեփատոսներ: Ես կըտանեմ նրանց, ուր որ գիտեմ, և նրանք պիտի խաւարացնեն ումը որ կըհրամայեմ, աւելի բան չըկայ:

— Ի՞նչ, Կօհօ, էդ ի՞նչ . . .

— Ի՞նչ բանը ցանկանում է վարձապետը, սառը պատասխանեց Կօհօն:

— Լսի՛, թէ էդպէս է՝ ձար չըկայ, պէտք է կատարել . . . Երան պէտք է հնազանդել . . . և ես կ'ընտրեմ էն մարդկերանց, որոնց նա մին անգամ աղատել է մահից. ես կ'ընտրեմ Մանօֆինին և Կուէրպօ—դէ Խիէրրօյին . . .

Իսկ խօսքից յետոյ Մանդամիենտօն կանչեց իրա մօտ երկու աւաղակներին և նրանց ահանջումը մին բան ասելուց յետոյ, բարձր ձայնով հրամայեց Լսգուաղիլի ետեւից գնալ:

Երանք ընտրեցին վեց չեփատոսներ, որոնք ուրիշներից աւելի ձարպիկ էին և բոլորը միասին ալգուաղիլի առաջնորդութեամբ ըղգուշութիւնով դուրս եկան Ղարդուենիայի միաբանութեան պալատից:



III

ԳՕԼՕՐԷՍ

Եւ ժամանակումը Մեկնայի Գաւառապետի տանը ուրիշ տե-  
սարան էր:

Եւ ասն վերնայարկումը, որ ձմեռայ բնակարան էր, մին  
մեծ դահլիճի կից կար մին խցի նման սենեակ: Փոքրիկ կոշտ անկո-  
ղին բառիստ վարագուրով, երկու սեաւ փայտեայ քանդակեալ ա-  
թուներ, նոյն փայտից դրքակալ փղոսկրեայ խաչելութիւնը վրան  
և կոխածոյ պատիկեր տմենասուրբ կուսին սպիտակ մարմարոնից որ  
կանգնեցրած էր պատուհանի մէջ մշտավառ սակեղոճ կանթեղով,  
ահա էս էր միայն երևում գաւառապետի աղջկայ անդորը միայնա-  
րանումը:

Նրա անունը, ինչպէս դիտէք, Գօլորէս էր, և ինքն էր տասն  
և եօթը տարեկան: Ինութիւնը տուել էր նրան գեղեցկութիւն,  
անյողզողք և աղնիւ բնաւորութիւն և նա իրա դատողութեան ձևով  
Միդայուղից ուրիշ աղջկերանցից էնպէս զանազանում էր, ինչպէս  
սիպտակը սեւից: Նրա Ծահլութիւնը չէր անց կենում էն միայ-  
նակեաց անդորձութեան մէջ, որը որ այնքան աղղուութիւն ունի  
Խաղանխացի կանանց երեակայութեան և զգացողութեան վրա: . .

Գօլորէսի դաստիարակն էր նրա մօրեղբայրը՝ այր ուսեալ և  
ճանրաբարոյ, երկար ժամանակ Ֆրանսիումը և Գերմանիումը ման  
եկած: Նա բաց էր անում աղջկայ վառվառն և համարձակ միտքը  
սիրով և անբուն ձգտմամբ, և նրա երկարժամանակեայ ջանքը պը-  
սակուեցաւ հազուադիւտ յառաջադիմութեամբ. նա դուրս կանգ-  
նեցրուց այնպիսի կին՝ որ կարող էր երեւել լինել մեր ժամանա-  
կումն էլ:

Գօլորէսը սնտիապաշտութիւնից հեռու էր. մտորութիւնները և  
Փանտիզմի անգթութիւնը նրան ատելի էին:

Նրա բարեպաշտութիւնը շատ նման էր հեղ բարեպաշտու-  
թեանը Կաստիլեան Իզաբելայի, որ էնքան երկար պատերազմեցաւ  
Ինկիլիզիայի զարհուրանաց հետ: Մէկ խօսքով, կրօնական մասին

Վօլքրոր հետևում էր աւետարանական վարդապետութեան նրա բոլոր աստուածային սրբութեամբ. իսկ էս բանը մեր պատմած ժամանակումը շատ վտանգաւոր էր, էնդուր համար որ էն ժամանակը հանգիստ ապրում էր ոչ թէ նա, ովոր հետևում էր իրիչի պատուիրանին, այլ նա՛ ով որ պատեհ էր դանում կուրօրէն ծառայել Ինկվիզիցիայի վայրենի Ֆանատիզմին:

Այնու ամենայնիւ Սեփիւնոյ մեծ Ինկվիզիթօր Պետր Արբուէսը իրա ամենակարող հովանաւորութեամբը պաշտպանում էր Վօլքօրէսին էլ, նրա հօրն էլ:

Աւանդ, էս հոգատար պաշտպանութեան աղբիւրը պիղծ էր՝ Արբուէսը դեռ քառասուն տարեկան տղամարդ էր իրա բուն կրից բոցավառ աստիճանումը. շատ անգամ տեսնում էր Վօլքօրէսին նրա հօր տանը և սիրում էր մոլեկան զգացմանց անսանձ յարձակմամբը. . . . բայց նա՛ ի դուր էր աշխատում, սուրբ և անձնանուէր քարեկամութեան քողով ծածկուած՝ զարթեցնել էս աղճկայ հոգւոյ մէջ էնպիսի զգացմունք, որ համաձայն լինի նրա կրիցը. նա՛ ի դուր էր ջանք անում դիւթել նրան իրա աչքերի և իրա կոպիտ գեղեցկութեան հրաշալի զօրութեամբը. նրա ներկայութիւնը զարհուրանք էր գցում Վօլքօրէսի սիրտը, և նրա հայեցուածքից նա մեռելի դոյն էր բռնում և դողում էր մին տեսակ տանջողական վրդովմամբ:

Բայց նրա բոլոր սէրը նուիրած էր իրա սրտի ընտրած ջահել լաստիվանին: Արբուէսին շատ դժուար էր թաքցնել նրանից իրա նախանձը և լաստիվանի վրա ունեցած ատելութիւնը: . . .

Բոլոր էն իրիկունը նա անց կացրուց նրա հետ նրա հօր մօտ: Տարբ ժամին մօտ Վօլքօրէսը դնաց իրա սենեակը սիրտը կօտրած և վերդովւած: Ին սիրուն աղճկոյ մաղերը գլխի զարդերի տակից արձակած ձոխ խուճուճներով փառեցան նրա սպիտակ ուսերի վրա, և նա չըբեցաւ գրքակալի առաջը:

Սերմեռանդն աղօթքից յետոյ, որ աղդում էր նրա տխրութիւնը՝ Վօլքօրէսը վեր կացաւ, հանեց կուրծքի մօտ թաքցրած վոքրիկ նամակը և կարգաց տխուր ուշադրութեամբ:

— Հա՛, սասց նա, մոռանալով թէ մէնակ է, հա՛, էս նրա ձեռքն է: Իսկզ՝ լաստիվան, . . . ուրեմն ինձ չի խափել իմ նախազգացմունքը. . . Ո՛վ Ինկվիզիցիայ, Ինկվիզիցիայ:

Նամակումը գրած էր, թէ լաստիվանը ընկել է էս զարհու-

բերի դատարանի ցաւանն տակ, թէ էն ճամբորդութիւնը, որի համար նա բաւել էր Վօլօրէսին թէ հարկը պահանջում է, ուրիշ բան չէ, եթէ ոչ կեղծեալ պատճառ մին փոքր ժամանակ թաղելու, այսինքն այնպիսի պատճառ, որ նա կեղծեալ է միայն կնդուր, որ նրա շուտ շուտ գնալ գալը սկսել է Քնկվիդիցիայի աչքի առջև Վօլօրէսի անունն էլ կոտրել, և թէ Վատկվանը սիրում է նրան հաստատ, թէ նա չէ կարող ապրիլ առանց նրան. . . վերջապէս նա խնդրում է նրանից էն իրիկունը գալ տեսնել նրան մայր եկեղեցւոյ հրապարակումը դղեակի մօտ:

— Այ՛ն, հա՛, նա սիրում է ինձ, շարունակեց ջահել աղջկը սրբելով երկու խոշոր կաթիլ արատաւք, որոնք հանդարտ գրլորում էին նրա թշերի վրայից. նա չի ապրիլ, եթէ մշտնջենաբար ինձանից բաժանուի. . . բայց Մատուի՛ իմ, մենք ո՛ւր թախ կենանք, ո՛ր կողմը փախչենք, որ հալածանքը մեր ետեւից չըգայ:

Յուսահատութիւնը բոլորովին տիրեց նրան: Նա կրկին վերընկաւ գրքակալի առջևը և աղաղակեց ձեռերը կոտրտելով՝ անխ, սորվեցրո՛ւ ինձ չարչարուիլ Վու, որ էնքան չարչարուեցար երկրի վրա. . .

Քն րոպէին դուռը կամաց բացւեցաւ և ներս մտաւ մեծ Քնկվիդիթօրը:

Վօլօրէսը շուտով վեր թռաւ և դեղնած, դողալով վազեց դէպ ՚ի լուսամուտը: Նրա երկիւղը այնքան սաստիկ էր, որ ճայն հանել էլ չըկարաց:

— Աս կտրեցի՞ ձեր աղօթքը, որդեակ իմ, քաղցր ճայնով սասայ Մորուհսը:

— Ի՞նչ էք կամենում հստեղ, հարցրուց ջահել աղջկը դողդոջուն ճայնով, ի՞նչը բերեց ձեզ հստեղ, էս ժամանակ — գիշերով: Չեղ ուրիշից տեւի յայտնի է, թէ էս սենեակը ոչոր օտար մարդ պէտք է չը մտնի:

— Իմ սաստիճանի տէր մարդուն դուք միշտ կարող էք ընդունել հստեղ, պատասխանեց Վոմինիկեանը:

— Մտիկ տուէք, սասայ Վօլօրէսը, վառուելով բարկութեամբ և ատելութեամբ, ես չեմ իմանում, թէ արդեօք ձեր սաստիճանը ուրիշներից աւելի տալիս է ձեզ էդ գերազանցութիւնը. ես միայն գիտեմ, թէ դուք տղամարդ էք, և իմ ոչ հայրս էք, ոչ այրս և ոչ եղբայրս:

— Ղշմարիտ է, բայց ես միշտ կարող եմ էս սենեակը մտնել,

ես կարող եմ հատեղ լինել էն ժամանակն էլ, երբոր իմ գալը  
յանցանք էլ լինէր քեզ համար, ինձ տուած է իշխանութիւն՝ Եւ-  
զուլ 'ի վերայ երկրի: Միտք բերում էք սուրբ գրոց խօսքերը:

Ո՛հ, երբ մեզոց-ցանկէ՛ս պէ՛տ, մի՛ աղճատի էդ սուրբ բառերը:  
Նրանք մի և նոյն են քեզ համար էլ, ինձ համար էլ:

— Մե՛ծ Խնկվիղկթօրը վառուեցաւ բարկութեամբ:

— Ա՛թէ դու, անմիտ, — աղաղակեց նա սղառնալից աչքե-  
րով մտիկ տալով Վօլորէսին, — եթէ դու էդ խօսքերը ասէիր ո՛չ  
թէ ինձ մօտ, այլ Խնկվիղկեցիայի ուրիշ անդամի մօտ, վաղուեան  
առաւօտը քեզ համար կըլուտանար նրա բանտումը:

— Այս ոչինչ բանով չըմեղանցեցի Խնկվիղկեցիայի առջևը, ա-  
սաց օրիորդս ջանալով յաղթել էն զարհուրանքին, որ յայանի ե-  
րևում էր կերպարանքումը և ձայնի մեծումը:

Նրբուհոր նկատեց էդ փոփոխութիւնը և մօտեցաւ Վօլորէ-  
սին, որ էլ չէր կարողանում ետ քաշուել, էնդուր որ կայել էր  
պատին:

— Վօլորէս, ասաց նա փոփոխի ձէնով, մի՛թէ դուք չէք  
իմանում, թէ ես ձեր բարեկամն եմ:

— Ա՛թէ դուք իմ բարեկամն էք . . . եթէ դուք գոնե՛ս  
փոքր ինչ խղճում էք ինձ, արդէն իսկ հեռացէք հատեղից: —  
Խնդրում եմ ձեզանից էն բարեկամութիւնի անուամբ, որը որ  
դուք յիշում էք, խնդում եմ ձեզանից Արկիքի անուամբ:

Այս բառերը մնացին անգոտասխան: Նրբուհոր հէնց կարծես  
թէ չը լռեց նրանց: Իրրե զմայլեալ կանգնած էր նա օրիորդի առջևը  
և չէր կարողանում հեռացնել իրա աչքերը նրա խոշոր և սև աչ-  
քերից, որոնք էն ժամանակը սալորականից աւելի պայծառ էին վառ-  
ւում. նրա փորթամ մազերից, որոնք տարածուած էին կոհակաձև  
խուճուճներով. նրա սպիտակ ուսերքից, որոնց կէսըը գեղեցիկ գիծ  
էր քաշել նրա սև շորը:

— Ա՛յ երեխայ, երեխայ, ասաց նա վերջապէս, ի՞նչ սիրուն  
ես դու և ի՞նչպէս երջանիկ է Դատկվանը:

— Տէ՛ր Ա՛տուած, էս Մե՛կիցայի մե՛ծ Խնկվիղկթօրն է . . .  
ասաց Վօլորէսը Նրբուհի մտիկ տալու ձևից սարսափեալ:

— Չէ՛, պատասխանեց մոլեկան ցանկութիւնից դժուած, չէ՛,  
մե՛ծ Խնկվիղկթօրը չէ հիմի բու առջևը, այլ միայն Պետր Նրբուհ-  
ւր, — Նրբուհոր, որ սիրում է քեզ, որ մեռնում է քո սէրից

և յուսահատութիւնից . . .

(Օրիորդի սրտից դուրս եկաւ մին անհետեթեթ և անհասկանալի աղաղակ և բոլոր մարմինը մարմարոնի պէս սառեցաւ :

Ինկվիզիթորը չորեցաւ նրա առաջը . նրա գեղեցիկ աւղաղակի զէմքը էն բուպէումը ծածուած էր մտի ցանկութիւնից . նրա դողդոջուն ձեռերը արդէն դիպչում էին Վալորէսին . . . Յանկարծ նա դուրս պրծաւ նրա ձեռքից, վէր առաւ գրբակալի վրայից խաչելութիւնը և իրա առջևը բռնելով աղաղակեց՝

— Սա լիցի պատուար իմ և քո մէջ :

Փանատիկը չէր վախենում փրկչի պատուիրանքը ոսնակոխ աւնել, բայց նոյն աստուածային օրինադրի պատկերը զարհուրեցրուց նրան . նա յետ յետ գնաց խաչելութիւնից . յետոյ կամաց վեր կացաւ, մտիկ տուեց Վալորէսին լի ատելութեամբ, և յետ մտիկ չքուտլով դուրս գնաց սենեակից :

(Օրիորդը անբիծ շնորհակալութեան դագմամբ կուրծքին կրպցրուց իրան փրկող խաչելութիւնը . յետոյ դրեց խաչելութիւնը իրա սուրբական պատուանդանի վրա և ջերմեռանդ սրտով աղօթարաւ նրա առաջը :

Սուեցաւ գիշերապահի տխրական ձայնը, որ նշանակում էր տասն և մի և կէս ժամը : Վալորէսը միտը բերեց Վասիվանին, նրա տխրութիւնը և ժամադրութիւնը : Սա վաթթեց իրա մաղերը խաղաղաց (պաղաց) սանդրի տակ, վրէ՛ն առաւ քղամիտը, դուրս եկաւ տնից և գնաց դէպ ՚ի մայր եկեղեցւոյ հրապարակը :

Ին բուպէին, երբ նա դուրս եկաւ փողոցը, մին մտաիկ տան ծածկոցի տակից դուրս եկաւ մին տղամարդ վերարկուի մէջ փաթթուած, և սրտին դէմ ընկաւ :

Իս անծանօթը էր Վրբուէսը :

— Վերջապէս, ասաց նա ցած ձայնով, իբրու թէ իրա մտքին պատասխանելով . — այժմ Ինրիկէզը ձեռից չե թողնիլ սրան :

Վալորէսը Ինկվիզիթորին տեսնելով սարսափեցաւ, բայց չբաճանաչելով Վրբուէսին և չըլսելով նրա խօսքերը ետ չըդարձաւ տուն :





## ՆԱՄՆԻ ՀԵՏԵՒԱՆԻՔ:

Ինչ խուճաք, որ Կոկոյի առաջնորդութեամբ դուրս եկաւ Վարդապետի միաբանութեան այրից, Մուկի սի մութ և ծուռնումնափողոցներով անց էր կենում լուսութեամբ և մեծ զգուշութեամբ:

Կրտսեակն մին քանի քայլ հեռու գնում էր Կուլեվրինան շինթուած էն գաղտնի յանձնարարութիւնից, որ տուած էր իրա սիրական Մանօֆինսին: և հասգանդելով էն զբացմանըին, որ կնկտերանց տալիս է էն գորութիւնը, որով նրանք կարող են որ մինի թախծութիւնը թեթեւացնել, կամ որ մինի կորուստից փրկել:

Բաւական երկար ճանապարհ գնալից յետոյ հազիւ նրանք հասան մայր եկեղեցւոյ հրապարակը, որի վրա արդէն ա՛յ մին լուսամտից լոյս չէր ընկնում, և էնդուր համար էնտեղ շատ մութն էր: Թէև աստղերը կապուտ երկնքումը շողշողում էին, բայց նրանց շողը չէր լուսաւորում երկիրը: . . .

Կոկոն էն խուճաքի հետ հրապարակը հասնելից յետոյ Մանօֆինսին և Կուկրոյօ — գէ — Խէկրոյին տեղաւորեց երկու ահագին սիւների մէջ տեղը, կամաց ասաց չիվատասներին մին քան և ինքը կանգնեցաւ մայր եկեղեցւոյ դրան մատուռի տակը:

Չիվատասները իսկոյն գնացին հրապարակի երկու ծայրը, պառկեցան գետնի վրա և սկսան ահանջ դնել ամենայն ձայնի, որ փոքր ինչ էլ շարժում էր նրանց ուշադրութիւնը:

Սիրենան էլ վախենալով, որ չըլինի թէ իրան տեսնեն, ըզգուշութեամբ անց կացաւ հրապարակի բոլորքի տուների մօտից, կամաց մօտեցաւ շարուանին և կանգնեցաւ բարձր ծառի տակ:

Թէև շատ զգուշութեամբ էր անց կենում սիրենան, սակայն չըհարաց այնպէս անցկենալ, որ նրա ոտքերի ձայնը չըլսուէր: Եւ մին քայլ հանեց թեթեւ շունչ և իսկոյն հասան Կոկոյին հրապարակը:

րակի մին ծայրից ճպռտձայն հնչումներ (1) :

Փոքր ժամանակից յետոյ հրապարակը գուրս եկաւ գիշերապահը (2) : նա անց կացաւ բոլոր հրապարակի միջից , փոքր ինչ կանգնեցաւ շատրուանի մօտ , ծանր և տխուր եղանակաւ իմաց տուեց կէս գիշերը և մտաւ մերձակայ քուչեքից մինը :

Հրապարակումը կրկին տիրեց խորին լռութիւն :

Միրենան բոլոր մարմնով գողալով չորեցաւ և սկսաւ ջերմեռանդ աղօթք անել : Արա սիրտը ծանրաբեռնած էր . գիշերապահը նրա միտքը բերեց էն զարհուրելի ժամը , երբոր նա ականատեսս վիայ է իլել այնքան զարհուրելի անցքերի , և երբոր ինքն էլ գործակից է իլել նրանց :

Փոքր ինչ յետոյ գղեակի մօտից լսուեցաւ որմինի շտապով գնալու ոտի ձայն , աւագը կամաց խշխշայնելով ոտի տակ : — Արպուռի ձայնի նման հնչիւն առաջուանից աւելի պարզ և աւելի բարձր լսուեցաւ հրապարակի մին անկիւնից , և իսկոյն բոլոր ջնջատոսները կրկնեցին նոյն ձայնը :

(1) Արբոր գարգունիայի միաբանութեան անդամները աւաղակութիւն կամ սպանութիւն էին անում , սովորաբար կանգնեցնում էին ջնջատոսներին պահապան : Արբ հարկաւոր էր լինում իմաց տալ անդամներին մին ծածուկ բան կամ մին վտանգ՝ նրանք զարմանալի նմանութեամբ ձայն էին հանում մին անասունի կամ մին թռչունի պէս : Գիշերը նրանք կատուի պէս մլաւում էին , գորտի պէս կռկռում էին , բուի պէս ձայն էին հանում և այլն : Յերեկը շան պէս հաչում էին կամ մին ընտանի կենդանիի ձայն էին հանում :

(2) Գիշերապահներ այժմ էլ կան խաղանիոյ մեծ քաղաքներից շատերումը : Արանք ձեռներին ունին բռնած գեղարդ , ունին շուխներ և սովորաբար գողի ֆանարներով են մանդալի : Նա ֆանարների ճրագը սովորաբար լոյս է տալի քաղաքական պահակներին : Մեղհանրապէս նրանք պարտաւոր են հսկել քաղաքի խաղաղութեան վրա և իմաց տալ քաղաքի պատահմունքները : Գիշերապահներ առաջին անգամը կարգեց Վաստիլեան իզարեւլան խաղանիումը (Գրեյնուորտսը) 1495 թուին :



Կօհօն, Մանօթիման և Կուերայօ — դէ — Խիերրօն ձեռերը  
դրին իրանց դաշնակներին:

Միբենան վեր կացաւ, գլուխը դուրս հանեց, սկսեց աւելի  
ուշադրութեամբ ականջ դնել:

Դա բոսիլին Կօլօրէսը մօտեցաւ քօշկին, կանգնեցաւ նրա  
մօտ, և դէս աւ դէն մտիկ տալից յետոյ վստահացաւ ձայն տալ իրա  
սիրեկանին:

— Դատելի՛ն, ասաց նա կիսաձայն, Դատելի՛ն:

Պատասխան չըկար: . . .

Բայց խիոյն քօշկից դուրս եկաւ Չապան և ընկաւ Կօլօրէսի  
ուտքերը:

— Դուք ո՞վ էք, ինչ էք ուղում ինձանից, հարցրուց Կօ-  
լօրէսը:

— Փախիր, փախիր, տիրուհի, աղաղակեց Չապան կուրա-  
տելով իրա մատները: Չեղ գաւել ես, ես խաբել եմ ձեզ . . .

— Դուք . . . հա՛, ես ձեզ հիմի ճանաչեցի . . . Դուք նամակ  
բերիք ինձ նրանից . . . Դատելի՛ն . . .

— Դն նամակը շինովի է . . .

— Ընովի՛ . . . իսկ Դատելի՛նը . . . ո՛ւր է նա այժմ . . .

— Ինձ յայտնի չէ . . . ես նրան չեմ ճանաչում . . . ես  
նրան իսկի չեմ տեսել:

— Եւ դուք վստահացաք էդպիսի ցածութեամբ խաբելի ինձ . . .

— Եթե ես էդ բանը ակամայ արի . . . ինձ ասացին Գնա՛,  
և ես պարտական էի Գնալ: . . . Ես պարտաւոր էմ հնազանդել  
կուրօրէն, անձէն, — եթէ ոչ, ես կըկորչիմ . . . բայց երբ ես  
տեսայ ձեզ, երբոր տեսայ, թէ ինչպէս գեղեցիկ էք դուք և բարի,  
եւ երդում արի փրկել ձեզ, ինչ ուղում է ընի: . . . : Ուրեմն  
փախէք, տիրուհի, փախէք հատեղաց հիմի խիւսեթ: . . . եթէ  
ոչ, նրանք կըդան . . .

Բայց Կօլօրէսը միտք չէր անում իրա գլխին դալու վտան-  
գի համար: Եւ բոլորովին տուել էր իրա անձը Դատելի՛նի հա-  
մար մտածելու, և Ինկիլիղեցիայի հալածմանը, որի տակ նա ըն-  
կած էր: . . .

Յանկարձ գեաի կողմից հասաւ նրանց ականջը էկիտաժի շատ  
կամայ ձայն:

Չիվատոսների ձայնը լսուեցաւ աւելի բարձր և աւելի երկար:

— Ետևում էք, զարհուրելով աղաղակեց Չապան, վեր կացաւ և սկիւնց բռնել Քալորէսին, լսում էք, էս նրանք են, նրանք:

Քալորէսը բռնեց նրան դէնը, և ատելութեան կցխուր ձայնով ասաց՝

— Եւե՛ծեա՛լ լինիս յաւիտեան . քո զգուելի խօսքունք համար:

Չապան աղաղակեց և մոռ բռնել մէջ . իսկ Քալորէսը համարեա՛ թէ յուսահատութիւնից գժուած շուտով անց կացաւ հրապարակից:

Երբ հէնց նա մին քանի քայլ փոխեց, նրան բռնեցին չորս սքիւրներ (1) որոնք գողի պէս զգուշութեամբ մօտեցել էին նրան, և ձեռների վրա տարին Քալադալիկի վրի մօտ, ուր Ինկվիզիթօրի էկիպոսթի մօտ կանգնած սպասում էին Քալորէսին Լնրիկէզը և Ֆրասիօն:

Խելճ աղջիկը կարողութիւն չ'ուներ ոչ ընդդիմանալու և ոչ ձէն տալու:

Չ'լստոսների վեօջին նշանի ձայնը լսելով՝ Կօիօն, Մանօֆինաս և Կուէրպօ — դէ — Խելքրօն իրանց տեղերից դուրս եկան և սխան մայր եկեղեցւոյ պատի տակից գնալ յավիշատակիչների ետևից:

Մեկնան հեռուից դնում էր նրանց ետևից, իսկ շիւստաները սողալով և օձի նման գալարելով կարողացան նրանցից առաջ անցիկէնալ և նմանապէս գնացին կաւքի մօտ, որի ակները ձէն չոչ սեւելու համար փսթթած էին կախուղ կաշիով և լծած էին ջուրն'եր, որոնց ստներին հազցրած էին նոյն նպատակաւ որոնճաններ (2):

(1) Ե՛՛՛՛ր — Ինկվիզիցիայի ստորին ծառաներ:

(2) Ոոնամաններ շինում էին կաշիից կիսակոշիկի նման, և հաշցնում էին ջուրիների ստներին գիշերը, երբոր հարկաւոր էր լինում որևի՛ի բռնել և բանտը դրել. էն ոտնամանները կապում էին ջուրիների ստներին թասամներով և կօճակներով. հնդուրից ջուրիների ման դալը համարեա՛ թէ չէր լսում. էս ոտնամանների հնարօղն էր Ինկվիզիթօր Բէասան: Սրանցից մին քանի հատը դեռ ևս 1820 տարումը պահուած էին Մալագուա՛ը Ինկվիզիցիայի տա-

Եւրօպէական և Պրասկոն սրիւններէ սաքի ձայնը լսելով գնացին նրանց առաջ . էն բոլորին աչքարաց շիվատոսները վրա պրծան էկիպաժին, բռնեցին և դետը դցեցին կառավարին, կտրտեցին Թոկերը և բշեցին ջորիներին, սրանց հէնց գիտենաս գիտութեամբ ստանամաններ էին հագցրել, որ գողանալը հեշտ լինի:

Եւ գործողութիւնը կատարեցաւ մեր սրտամելից շատ շուտ:

Եւրօպէական և Պրասկոն հասան սրիւններին, որոնք բերում էին Թուրքացած Ղազորէսին:

— Փառք Աստուծոյ, վերջապէս սա մեր ձեռքն ընկաւ, ասաց Եւրօպէական սրտամելից:

— Դեռ բոլորովին չէ, նրա խօսքը կտրեց մի սքմին, և Եւրօպէական ձախ կռանը դաշնակի սաստիկ հարուած տուեց:

Եւ խիտըն էր դոչող Մանօֆինան:

Սրիւրը, որի վրա էնպէս յանկարծ ընկաւ գուապօսը, դէս դէն ծռուեցաւ, բայց վեր չընկաւ:

— Դատե՛ղ եկէք, սպանում են, ձէն տուեց նա միւս սրիւններին:

Սրիւններից երկուսը խիտըն յանձնեցին Ղազորէսին իրանց ընկերներին և վազեցին կռուի տեղը: Մի և նոյն Ժամանակումը վերաւորեալի առաջի ձայն հանելումը Պրասկոն ընկաւ Մանօֆինայի վրա և հարկադրեց նրան իր դլուխը պահպանել:

Եւրօպէական միայն մի բոլոր մնաց առանց Թշնամիի . նրա վրա ընկաւ Կուկրպօ — դէ — Խիկրոն և նրանց մէջ բացուեցաւ մեծ կռիւ:

Սրիւնները, որոնք վազեցին վերաւորեալի ձէնի վրա, միացան նրա հետ:

Եւ միջոցումը միւս երկու սրիւնները, որոնց յանձնած էր Ղազորէսը, շտապով տարին նրան էկիպաժի մօտ, դրին նրա մէջ և չըսպասելով կռուի վախճանին իտխան: Համարեալ Թէ խիտըն նրանցից յետոյ եկաւ էկիպաժի մօտ Սոկօն, բայց չըդտաւ նրանց: Առաջ նա ուզեց մտալ էստեղ Ղազորէսի մօտ, բայց յետոյ ընկերներին օգնելու ցանկութիւնը յաղթեց նրա էս դիտաւորութիւնը:

Նր. յետոյ նրանցից երկու հատը ընկան Անգղիացի Տոմսոն Ռելիէնսի ձեռք, որ 1830 տարումն էլ ցոյց էր տալի Անգոնումը իրաբարեկամներին և ծանօթներին:

և նա վաղեց նրանց մօտ:

Սա վրայ հասաւ շատ լաւ ժամանակին, նրա գալը ազատեց  
Կուէրպօ — դէ — Խիւերրոյին, որ թէ և շատ քաջ էր և ուժեղ,  
բայց համարեալ թէ էլ չէր կարողանում պաշտպանել իրան երեք  
արիւնքուիշտ թշնամիների դէմ:

Խնկվիզիցիայի սպասաւորները սկսեցին հետ քաշուիլ դէպ 'ի  
կարմուկը, որի մօտ կանգնած էր էկիպօժը:

Գարգուկիայի միտրանութեան յանդուգն անգամները նեղն  
էին գցել նրանց և հէնց նրանք ոտը դրին կարմուկի վրա, Մանօ-  
Ֆինան և Կուէրպօ — դէ — Խիւերրօն, որոնց հատեղ յաջողակ էր  
անդի դրութիւնը, գաշնակ ցցեցին երկու սրիւնների սիրտը և գցեցին  
դէտը: Մնացին միայն Լնրիկէզը և Տրասիոն: Առաջինը տկա-  
րանալով արիւնի վաղելից և երկար պատերազմից վէր ընկաւ կարմըն-  
ջի վրա: Կուէրպօ — դէ — Խիւերրօն մեռած համարելով նրան  
գցեց դէտը: Համարելով թէ ՄանօՖինան Տրասիոյի օհտից հեշտ  
կրգայ, նա Կօիոյի հետ միասին վաղեց Կօլօրէսի մօտ, որ նրանց  
կարծիրով օգնութեան կարօտ պէտք է լինէր:

Բայց նրա Տրասիոյի համար կարծածը չըկատարուեցաւ: Տը-  
րասիօն տեսնելով թէ ինքը մենակ չէ կարող յաղթել հղօր դուա-  
պօսին, գցեց նրա վզին ճօպան (1) (քէմէտ) և քաշեց:

ՄանօՖինան մեռնում էր. ոչ նրա ճարպիկութիւնը, ոչ  
համարձակութիւնը էլ չէին կարող նրան ազատել. նրա շունքը  
սկսել էր կտրուիլ, գաշնակը վէր ընկաւ նրա դողդոջուն ձեռից,  
նրա աչքերը արիւնով լքցուած և կարմրացած սկսել էին արդէն

(1) Էս տեսակ թօղը աւոււմ էր էլ Մանօ Կոնարիւրիէօ: Իսպանիա-  
ցիք հիմի էլ գցում են զարմանալի վարպետութեամբ: Առա-  
ջուայ ժամանակները Խնկվիզիցիայի սպասաւորները մին անդ դնալիս  
միշտ ունենում էին իրանց գրպանումը էլ Մանօ Կոնարիւրիէօ իրանց  
պաշտպանելու համար: Մանց շատ քիչ էր պատահում գործ ածել  
էս զարհուրելի օղը, Կնդուր որ Խնկվիզիցիային ընդդիմանալ համա-  
րեալ ոչով չէր կարող: Բայց նրանք շատ անգամ Կնդրով խեղդում  
էին շներին, որոնց հաշեքը կարող էր շիտթ հանել, և երբեմն կարիք  
ժամակը Խնկվիզիցիայի բանտը տանելու նշանակած մարդկերանց վեզը  
հուփ տալով առ ժամանակ նրանց ճայնը կտրել էին տալի:

մ թնիլ, և Պրասկոն արդէն բարձրացրել էր ձեռք նրան սպանելու...

Յանկարծ սրելի աչքերի առջևը պսպղաց դաշնակի բերանը և թափանցաւ նրա սրտի մէջը... սրերը անշունչ վէր ընկաւ կարմնջի վրա:

Իս շեշտակի հարուածը տուեց Աուլեփինան: Թէ և Մանօֆինան անտանելի տանջանքի մէջ էր, բայց չէր վէր ընկած: Աուլեփինան խոկոյն հետ արաւ թոկը, որ հուփ էր տուել նրա վիզը:

— Մ'ֆերիմ, Աուլեփինայ, ասաց նա պինդ ճխտելով սիրենայի ձեռք, մէկ խօսքով, հրաշք ես, ... Եծաւորը քեզ լաւ կրկարձատրէ:

— Մ'եծաւորը... Խնչ հարկաւոր է ինձ նրա վարձատրութիւնը... ես ուղում եմ, որ դու ինձ վարձատրես:

— Ե՞ն, ... ասաց Մանօֆինան զարմանալով: Ինչո՞ւ... բայց ինչ որ ձեռիցս կրդայ, բոլորը կ'անեմ:

— Ես քեզանից մեծ բան չեմ խնդրում, ասաց սիրենան նազով փաթթուելով նրան, ես խնդրում եմ միայն, որ դու չըստանես Վոն Իստէփան դէ Արկասին...

— Մ'հնար է... տխուր պատասխանեց Ղուապօսը: մէկ էլ որ, քո ինչ բանդ է, շարունակեց նա ջերուելով, կենդանի կրմնայ թէ չէ էդ սիրունը:

— Բանն էն է, որ պէտք չէ խտարեցնել էնպէս մարդկերանց, որոնց սրտումը սէր կայ... չէ՞ որ նահանգապետի աղջիկը կրմեռնի, եթէ կենդանի չըմնայ նրա նշանածը, հէնց էնպէս, ինչպէս որ ես կրմեռնէի, եթէ դու կենդանի չըմնայիր էս օր, սիրելի Մանօֆինայ:

— Իդ դորդ է, ասաց Ղուապօսը փափկանալով, և շիտթուելով, բայց այնու ամենայնիւ ես խօսք տալ չեմ կարող: Սիրենան գլուխը քաշ դցեց և լաց իլաւ:

Իս բանը բոլորովին յաղթեց նրա սիրողին:

— Ի աւ, լաւ, ասաց նա, նազով փաթթուելով Աուլեփինին: Եդպէս մի լաց իլեր, իմ հօգի: Ինչ որ կարելի է, կ'անեմ:


Իս ժամանակը Ղոկօն և Աուերպօ — դէ — Խիէրրօն հանեցին թուլացած Ղալօրէսին Ինկիվիդէթօրի էկիպաժից:

Մանօֆինան և սիրենան մօտեցան նրանց:

— Հիմի ո՞ւր տանենք էս տերուհիին, հարցրուց առաջինը:

— Ես գիտեմ ուր պէտք է տանել, պատասխանեց Ղոկօն: ես և Աուերպօ - դէ - Խիէրրօն կըտանենք սրան, իսկ դուք եկէք մեր ետեւից:

Նրանք գնացին դէպ 'ի վարժապետի տունը, որ Ղավադալիլի վերի միւս ափումն էր:



V

Ուրախութեան նուագ եւ ինչպէս յանր:

Պաշտօնը՝ որի մէջ կենում էր Արքուհար, ժամանակով շինած էր Աւելիւնայի հին կալուածատէրների մէկից : Աս շինութիւնն էր ահագին հոյակապ տուն մաւրիտանեան ձևով . նրա մօտիկ այգիի մէջ տեղումը , որ լիքն էր հազուագիւտ ծաղիկներով և ծառերով , շինած էր ջուկ հովանոց համարեալ թէ ծածկուած ճոխ կանանցների մէջ : Առաջ էն լեղնալու տեղ է իլել , բայց Արքուհար ուրիշ բանի էր գործածում . նա քիֆ էր անում նրա մէջ իրա սիրականների հետ :

Իրա արբշիւ լիտութիւնները նա միշտ գիշերն էր անում , սովորաբար էս հովանոցի դահլիճների մէկի մէջ . . . Աւելիւն զարմանալի տեղ էր էն դահլիճը . նրա օձուքի վրա պսպղում էին բազմերանգ գեղեցիկ քանդակներ՝ ձեռագործ մաւրիտանեան ճարտար արհեստաւորների . նրա պատերը ճոխ զարդարած էին վայլուն ճութեղէններով , որոնց վրա նկարագրած էին խիտ նման ծաղիկներ և պտուղներ իբրև շրջանակներ էն ճոխ պատկերների , որոնց վրա նկարագրած էին դիցաբանութեան խիտ մոլեկան կրից շարժող

տեսարաններ: Արանց մէջն էին Վեդա, Բալիսեր, Անրոզիտէ  
. . . վերջապէս էս դահլիճի յատակը զարդարած էր մողայիկ-  
ներով:

Վն գիշերը՝ երբոր Վաօլօրէսը ընկաւ էս թշուառութեան մէջ,  
էս դահլիճումը կատարում էր Արբուէսի խիստ մեծ լիտութեան  
խնջոյքը:

Վահլիճի մէջ տեղումը դրած էր մեծ սեղան, որի վրա դար-  
ած էին յախճապակեայ, արծաթի և ապակեայ ամաններով խիստ  
հազուադիւտ պտուղներ, խիստ ընտիր կերակուրներ և խիստ թան-  
կադին գինիներ:

Սեղանի բոլորքը նստած էին Արբուէսը և իրա մեծրածները  
դէմքերը կատաղի ուրախութեամբ, և շրթուները շնական ծիծաղով:

Արանց խօսակցութիւնը աղմկալից և անսանձ էր . . .  
. . . . .

Խօսակցութիւնը կամաց կամաց Վահանգապետի աղջկայ վրա ըն-  
կաւ:

— Վիտէք, ասաց քէ՛Ք անօղներից մինը, գէտէք, թէ Վաօլօրէս  
Արգօղօն Միւլիկայումը առաջին գեղեցիկն է, բայց բերդի պէս էլ  
անմերձենալի . . . Քարձը արժանապատիւ հայր Մնկվիղիթօրն  
էլ չի կարող նրան ձանկել, թող թէ ուրիշ ոքմին:

— Վաք էդպէս էք կարծում, խորթ կերպիւ ժպտելով ա-  
սաց Արբուէսը:

— Հրամներէք, կարծում եմ, ձերդ սրբազնութիւն:

Վա բոպէին Մնկվիղիցիայի սպասաւորներից մինը մտաւ դահլի-  
ճը և կամաց ասաց Արբուէսին, թէ Մնրիկէղը վերադարձել է, և  
հրաման է խնդրում տեսնել:

Մնկվիղիթօրի աչքերը վառուեցան:

— Հիմի ի՞նչ կասէք, աղաղակեց նա, յաղթանակի կերպա-  
րանքով մտիկ տալով էն մեծրածի վրա, որը որ ողջից վերջը խօ-  
սում էր նահանգապետի աղջկայ վրա. — Հիմի ի՞նչ կասէք, եթէ  
Վաօլօրէսը հէնց հիմի ներկայանայ էստեղ ձեզ մօտ . . .

— Հանաք էք անում, հարցրուց մեծրածը:

— Ասեմ բաներումը ես երբէք հանաք չեմ անում, ասաց  
Մնկվիղիթօրը: Մնրիկէղը կարող է ներս գալ, ասաց նա յետոյ  
Մնկվիղիցիայի սպասաւորին:

Սպասաւորը դուրս գնաց:

Ղաֆլիճի մէջ տիրեց մեծ լռութիւն: Քոչոր մեծրածներէ աչքերը դարձան դէպ ՚ի դաֆլիճի դուռը:

Յանկարծ դրան վրայի ապրեշմեայ վարագոյրը քաշուեցաւ, և քէֆ անողներէ առջևը կանգնեցաւ Ղնրիկէզը գունաթափ, արիւնաթաթաւ, տմսկած և թրջած մազերով:

Ղա մէն մինակ էր:

— Ղա ինչ է նշանակում, հարցրուց շիտթուած Ղրբուէսը, ուր է նա հանդատու տեղը, և ինչի՞ ես արիւնտա:

— Տիրուհի Ղոչորէսին խլեցին մեղանից, տկար ձայնով պատասխանեց Ղնրիկէզը, . . . խլեցին էնդուր որ իմ ընկերներս սպանուեցան . . . ես ինքս էլ հազիւ պրծայ մահից . . . ջրի միջուկը խեղդուելից . . .

Քոչոր մեծրածները Ղնրիկէզի գլխին մտ էլան և նա պատմեց նրանց տկարութիւնից՝ հասկնալ ձայնով՝ բոլոր էն գիշերը իրա և ընկերների գլխից անց կացածները:

— Յիճ հոգի և անարդ վախկոտներ, էս անցքը լսելից յետոյ բարկութեամբ աղաղակեց Ղրբուէսը, ինչի՞ պէտք էր ես էսպէս մարդիկ ջոկել . . .

— Չեր սրբազնութեան կամքը կատարելու համար մէնք ա մէն բանը արինք, ինչ որ կարացանք, վախենալով ասաց Ղնրիկէզը:

— Ֆրասիօ՞ն ուր է, հարցրուց Ինկվիզիթորը:

— Սպանուեցաւ, ձերդ սրբազնութիւն, սպանուեցաւ ինչպէս միւս ամէնքն էլ, սպատասխանեց Ղնրիկէզը, չըգիտենալով, որ սրբիւններից երկուսը վախել էին:

— Ղուրս կորիր, որոտածայն բղաւեց Ղրբուէսը, կորիր աչքիցս, որ ես երբէք, հասկանում ես, երբէք քեզ չբտեսնեմ:

Ղնրիկէզը, որ արդէն ուժից ընկած էր արիւնի պակսելուցը, Ղվադալիվիլերի ալեքների հետ կռուելիցը և հոգւոյ վրդովմունքիցը, չըկարաց դիմանալ էս նոր հարուածին՝ Ինկվիզիթորի էս ստակալի բարկութեանը. ծնկները ծալուեցան և նա մեռելի պէս վեր ընկաւ: . . .

Ինկվիզիթորը ձայն տուեց. ներս եկան երկու սպասաւորներ:

— Ղուս տարէք հստեղից էս մարդուն, ասաց նա նրանց ամենևին չըգթալով Ղնրիկէզի ողորմելի միճակին:

Ղրա հրամանը կատարուեցաւ:



— Հիմի համեցէք սեղան, բարեկամներ, ասաց նա յետոյ մեծ-  
րածներին :

Մեծրածները չըմաացին կրկին հրաւիրելու, և քէֆը նոր մէ-  
կանց սկսուեցաւ առաջվանից աւելի մեծ խրախուժեամբ, աւելի  
մեծ զալմաղաղով :

Մ. Բրուհսի կշտին հիմի նստած էր ջահել 'Վոմինիկեան սի-  
րունատես գեղեցիկ օրիորդի նման :

Սա էր Խոզէն՝ Մ. Բրուհսի ողջից աւելի սիրականը :

Իսա գիշերը, քչիչաց Խնկիլիզիթօրը նրա ախանջումը, թանկ  
կրնասի նահանգապետին :

Խոզէն ոչինչ պատասխան չըտուեց. բայց նրա սև աչքերումը  
փայլեցաւ մին ուրախութեան նշան . . . .





VI

ՀԵՐԵՏԻԿՈՍԻ ՏՈՒՆԸ:

Արդացողները 'ի հարկէ մաքերին ունին էն Փրանչիսկեան կրօնաւորին, որ Աօկոյի պանդոկումը պատահած անցքի դիւաւոր դործողներից մինն էր: Արա անունը Արմիլիաումը կոչոււմ էր վարժապետ: Արդացողները էն էլ մաքերին ունին, որ էս վարժապետի բընակարանը տարան Մանօֆինան, Աուհրպօ -- դէ -- Խիէրրօն և Աօկօն թուլացած 'Ղօլօրէսին:

Արժապետը մէնակ էր կենում բնակութիւնից հեռու տան մէջ, որ շինած էր Ղալադալիվիլիի ամումը հասարակ և անշուք պարտիզի միջումը: Ես ջոկել էր իրա համար էս հասարակ ապաստանարանը, էնդուր որ հեռու էր քաղաքի աղմուկներից և երբեմն կարող էր յուսալի ընդունարան դառնալ Ինկվիզիցիայի անմեղ զոհերի համար: Ես անգամին էլ սա ապաստանարան դառաւ 'Ղօլօրէսի համար:

Անր պատմած անցքերի միւս օրը իրիկնասպահը խեղճը մէնակ էր էն սենեակումը, ուր նրան թաքցրել էին Արքուէսի հետազօտութիւններից: Աթնանում էր, ծառերի մէջ փչում էր թունդ և սառը քամի: Ղալադալիվիլիի երեսից վազում էին տխրական խոշոր վտակներ:

'Ղօլօրէսը բաց արաւ պատուհանը, իրա երկայն մազերը յետ դցեց և սկսաւ տխրութեամբ մտիկ տալ հեռուին, ուր ամենայն աւարկաները ծածկուած մ'թնութեամբ երևում էին մին աւորոշ բան:

Նրա սիրտը լքցուած էր անպատմելի տխրութեամբ . . . Նրա քամակից լուեցաւ ոտքի ձայն : Նա դարձաւ , առաջը կանդնած էր վարժապետը :

— Ո՛հ , ազատեցէք ինձ , ազատեցէք ինձ ինձանից , իմ սուկալի կասկածանքներից , ասաց նա աղիտղորմ ձէնով և ընկաւ վարժապետի առաջը ծնկան վրա : Միամտեցրէք ինձ , երդում եմ տալի ձեզ , միամտեցրէք ինձ , թէ էստեղ չարութիւնը չի յաղթում բարութեանը :

— Արեխայ , ասաց վարժապետը , կամաց դնելով ձեռքը նրա գլխի վրա , երբ անդորութիւնը դորութեան վրա յաղթական է հանդիսանում :

— Նայց լաւ մարդիքը տանջւում են . . .

— Նա էլ տանջուեցաւ , թէ և ամենակարող էր Նա . . .

. . . . .  
ուրեմն յուսաւ , որդեակ իմ , հաւատաւ : Աւ եթէ Աստուած կ'ուզարիէ քեզ վրա ուրիշ փորձանքներ էլ , ասա՛ հեղութեան հոգւով՝ եղիցին հաճախ : . . .

— Նայց դուք ո՛վ էք , և ինչից է , որ ձեր խօսքերը հզպէս զարմանալի հանդարտեցնում են իմ հոգիս . ասացէք ինձ ձեր անունը , ես կ'ուզէի տպել նրան իմ սրտիս տախտակի վրա . . .

— Աս խոնարհ ծառայ եմ Նրան , որին ամէնքս պարտական ենք ծառայելու . . . իմ անունն է Յովհաննէս . . . բայց որդեակ իմ , հիմի մութն է , և դու կարող ես առանց վտանգի գնալ քու տունը : Մենք կ'երթանք միասին , ես յօժարութեամբ քեզ ուղեկից կրլնեմ : Աւ եթէ էլի դու կը հանդիպիս նոր նեղութեան , եթէ քեզ ուրիշ անգամ էլ հարկաւոր կրլնի օգնութիւն ,

— միտդ բեր էս ապաստանարանը , էս դուռը բաց է ամէն մարդու համար , որին ծանրացնում է նեղութիւնը : . . .

Մին քանի բոպէից յետոյ նրանք դուրս եկան տունից : Նրանք գընում էին լուռ : Ֆրանչիսկեանի խ սքերը փոքր ինչ հանդարտեցրին խեղճ աղջկանը . բայց Նատէվանի վրայ մտածմունքը և մին տեսակ մութ նախադրացութիւնը դեռ ևս վրդովում էին նրա հոգին : Նա լաց էր իլում և ակամայ առանց մտածելու աւելացնում էր քայլերը :

Վարժապետն էլ նրա պէս գնում էր շուտ շուտ , և ահա նրանք հասան նահանգապետի տան առջևը : Նայց էս տան մէջ

սովորականի պէս չէին վառած լապտերներ, դրսի դուռը կողպած էր:  
Վաղորէսը դուռը դիտխկացրուց, պատասխան չկայ: Վաղորէսը  
աւելի ուժով դիտխկացրուց, էլի պատասխան չկայ: Տան մէջ ոչ  
ձայն կար, ոչ շուռնչ, հէնց կարծես թէ ամենայն ինչ մեռած էր  
նրա մէջ . . .

Վարժապետը բանի զօրութիւնը հասկացաւ . նա հասկացաւ  
էս գուժարեր լռութեան խիստական պատճառը, բայց դեռ սիրտ  
չէր անում մին խօսք ասելու, նա տանջուում էր, նեղանում էր  
Վաղորէսի համար . . . Իսկ Վաղորէսը յուսահատած զարհուրած  
աւելի ուժով խիում էր դռանը:

— Հայրիկ, վերջապէս աղաղակեց մին տեսակ կիսախելագարի  
պէս: Հայրիկ, ես եմ, լսում էք, ես եմ, Հայրիկ:

Նրա դիտխկացնելու ձայնից մին բանի հարեաններ դուրս մը-  
տիկ տուին իրանց դռներից:

Վաղորէսի ձայնից յետոյ նրանք սկսան իրարու ասել « Հայ  
էս նահանգապետի աղջիկն է . . . դիտէք, նրան էս օր բռնեցին  
մեծ Ինկվիզիթօրի հրամանաւ . . . էստեղ լաւ բան չ'ի լինիլ .  
. . . Իսկայն խոսողները տուն մտան և դռները փակեցին:

Զահել աղջիկը, իրա ներկայ դրութեամբ նրանց վրա էնպիսի  
ահուզող գձեց, որը որ կարելի է չըզձէր, եթէ լինէր ժանտախտով  
բռնուած, կամ եթէ նրա ներկայութիւնը կարողանար նրանց մէջ  
տարածել մահարեր հիւանդութիւն . . .

Վաղորէսը լսեց միայն Ինկվիզիթօր բառը: Բայց էս բառը բա-  
ցատրեց նրան զարհուրելի ճշմարտութիւն: Նա հասկացաւ թէ  
իրա հայրը Ինկվիզիթօրի բանտումն է, թէ նրա համար պատրաս-  
տած են տանջանքներ, և շատ կարելի է, մահուան պատուհաս էլ .  
թէ նրանց բոլոր կայքը ընկել է էս անգութ դատարանի ձեռքը,  
և թէ իրա, ողորմելին, ապրելու համար ուրիշ ճար չըկայ բաց 'ի  
մուրացկանութիւնից, — մուրացկանութիւնից, որ շատ կարելի է  
չտան էլ հերեփիտի աղջկան . . .

Եւ, աչքերը ցամաք, մեռելի պէս դեղնած երեսումը առանց  
կենդանութեան նշանի, մօտեցաւ նա Գրանչիսկեանին և դողալով  
բռնեց նրա շորերի փեշերը: Նա արդէն չ'ունէր կարողութիւն ոչ  
լաց իլնելու և ոչ բողբոջելու:

Գրանչիսկեանն էլ նմանապէս մին խօսք չէր խօսում: Նա  
տեսնում էր որ էն բոպէին մխիթարութիւնները անկարող էին վեր-

տերին առջևը . նա կամաց բռնեց Ղաօլօրէսի ձեռից , և երկչոտ երեխայի պէս տարաւ իրա բնակարանի կողմը :

Իսկ Ղաօլօրէսը շուռ չեկաւ , մտիկ չբտուաւ էն տանը՝ ուր անց էր կացել նրա մանկութիւնը . նա գիտում էր Ֆրանչիսկեանի ետեւից առանց հասկանալու , կռացրած իրա գեղեցիկ գլուխը կուրծքի վրա :

Իսկ էս թմրութիւնը երկար չըքաշեց : Մահանդապետի տան մերձակայ քուչերի մէկումը Ղաօլօրէսը և նրա ուղեկիցը համարեալ թէ մ' թնուցնող դիպան մին տղամարդի , որ թուրը ձեռին պաշտպանում էր իրա գլուխը ուրիշ մին մարդու հարուածներից , որը որ Ղարդուսեան ընկերութեան անդամների շորերով էր :

Թէպէտ շատ մութն էր , սակայն սիրոյ բնական զօրութիւնը , որ այնքան զարմանալի ազդեցութիւն ունի , ասաց Ղաօլօրէսին թէ սիլ էր իրա գլուխը պաշտպանողը :

— Իստէ վան . . . աղաղակեց նա , ընկնելով իրա նշանածի վրա , և ջանալով բռնել նրա ձեռերը :

— Ղաօլօրէս , . . . աղաղակեց երիտասարդը :

Ինչ բոպէին վրա պրծնողէ ձեռը , որ բարձրացրել էր դաշնակը Ղաօլօրէսի նշանածի վրա , պինդ բռնեցին երկու սպիտակ ձեռներ ջահիլ աղջկայ՝ որ կռուի ժամանակը կանգնած էր Իստէ վանի թշնամիի մօտ :

— Մի սպաներ գրան , ասում էր ջահիլ աղջիկը , ջանալով խել դաշնակը , մի սպաներ թէ ինձ կրտսրես , թէ կրտսրես քս և իմ բաղդաւորութիւնը :

— Մի խնդրեր , աղաղակեց անձանօթը սուր և հրամայական ձայնով , մի խնդրեր Աուլեւրինա՛ ՚ի զուր . . . ես պէտք է սպանեմ սրան . . . ես խօսք եմ տուել :

Կրքոր անձանօթը էս խօսքերը ասում էր , մօտեցաւ նրան Ֆրանչիսկեանը :

Ջահիլ աղջիկը ճանաչեց վարժապետին : Իսկ չըթողնելով անձանօթի ձեռքը , նա չոքեցաւ Ֆրանչիսկեանի առաջը , և ասաց նրան աղիողորմ ձէնով՝

— Օրհնեցէք ինձ , հայր , . . . համոզեցէք Մանօֆինին չըստանել էս ջահիլ տղին . . . առանց էն էլ քիչ սպանութեան բեռներ չըկան մեր հոգու վրա : . . .

— Վարժապետ . . . ասաց Մանօֆինան , ճանաչելով Ֆրանչիսկեանը :

կեանին, և խոնարհութեամբ գլուխը կռացրուց նրա առաջը:

— Մանօֆինա՛, ասաց Ֆրանչիսկեանը, Մանօֆինա՛, ո՛վ է գրել քեզ վրա մեղսակից պարապօրութիւն մարդիկ սպանելու:

— Գարդուենեան ընկերութիւնը, արժանապատիւ հայր, ընկերութիւնը, որին ես անձնատուր եմ հողւով էլ մարմնով էլ: Միրտել և խաարեյնել իմ արհեստն է . . . ես չեմ կարող չըհնաղանդի ընկերութեանը . . .

Մանօֆինա՛, հարցրուց Ֆրանչիսկեանը, հաւատո՞ւմ ես դու Լստուածաշնչի խօսքերին:

Լազալը ջերմեռանդութեամբ գլուխը խոնարհեցրուց:

— Ուրեմն դու պէտք է գիտենաս, թէ արգելած է սպանել անմեղին, ասաց վարժապետը: Բու արհեստը, սրգեակ, մեղսակից է, աստուծոյ ընդդէմ է:

— Բայց ինչպէս ետ կանդնեմ նրանից, ասաց Մանօֆինան. ախրը, եթէ ես հիմի չըկատարեմ ինձ հրամայածը, Ինկվիզիցիան ինձ օր չի ցոյց տալ իմ երկրումը, կամ կարելի է կ'այրէ էլ հերետիկոսի պէս . . . էն ժամանակը սա, էս Աուլիլիանն ինչ պիտի անէ . . . սա ինչո՞վ պէտք է ապրի:

— Ինձ համար մի՛ հոգար, աղաղակեց սիրենան, ես կարող եմ քեզ հետ փախչել էլ, մեռնել էլ:

— Իսկ ընկերութիւնը, հարցրուց աւազակը, մի՞թէ ես կարօ՞ղ եմ նրանից դուս գալ:

— Ի հարկէ, չէ, ասաց Ֆրանչիսկեանը, որ շատ լաւ հասկանում էր, թէ չէ կարող յանկարծ ասանց փեղափոխուելու խլել էս կոպիտ բնութիւնը իրա արմատացեալ սովորութիւններից: Բու՛ Մանօֆինա՛, չես դուրս գալ քոյ ընկերութիւնից. բայց որովհետեւ մին լաւ գործը քաւում է շատ վատ գործեր, դու միւսանգամ էլ չես սպանիլ անմեղներին, և կըհետեւիս ազատել նրանց, որոնց ետեւից ընկել է Ինկվիզիցիան:

Լազալը մին փոքր ժամանակ պատասխան չտուեց. յայտնի երևում էր, թէ նա չէ իմանում ինչ անէ:

— Իսկ եթէ ես էդպէս վարւիմ, ասաց նա վերջապէս, այսօրինքն ընկերութեան կամքի դէմ, դու՛ կընե՞րէ՞ք ինձ իմ խարեութիւնը, արժանապատիւ հայր, էնդուր որ ես պէտք է հեռանամ, և չ'անեմ, ինչ որ պահանջում է ինձանից մեր ընկերութիւնը . . . ես, տեսնում էք, հարցնում եմ էդ բանը էնդուր

որ, եթէ էդ թողութիւնը կրտաք ինձ դուք, հողիս հանդարտ կըլինի:

— Դրա պատասխանը ես ինձ վրա եմ առնում, իսկ վարձատրութիւնը Խնկվիղիցիայի հալածանքից ամէն մէկ աղատածի համար, վարձատրութիւնը, որ անդին է, քունը կըլինի:

Մանօֆինան բոլորովին յաղթուած և Սիրենան չորեցան Քրանչիսկեանի առաջը և նա կամաց գրեց իրա ձեռերը նրանց գլխին:

— Սա մեղ նշնեց հիմի, քչիչալով ասաց սիրենան Մանօֆինային վեր կենալու:

Իսա աղջկայ մէջ էլ, որ մինչև էս օր անճնատուր էր իլած միայն իրա անսանձ կրից կամքին, էս աշխարքի աչքից ընկած անառակ սիրոյ երկրպագուի մէջ զարթեցաւ սուրբ զգացմունք, և կատարուեցաւ փրկարար փոփոխութիւն:

— Հիմի դու տեսնում ես, ասաց նա Մանօֆինային, թէ ինչքան անբաղդ պէտք է լինէինք, եթէ էս տիրուհին դանկը իրա նշանածին ոչ կենդանի, այլ մեռած:

— Հա, պատասխանեց 'ի գութ շորժած Մանօֆինան, հա . . . տեսնում ես Աուլերինայ, հիմի իմ հողւոյ մէջ մին բան կայ, որը որ ես չեմ կարող դուս ասել . . . հէնց գիտենաս մին լաւ բան է . . . լոյս է, Աուլերինայ . . . հա, ես հէնց գիտենաս բոլորովին նորից ծնայ . . . հա, կ'ազատեմ, կ'ազատեմ Խնկվիղիցիայից, ինչպէս հրամայեց Քարժողեալ . . . ակորը 'ա է հրամայում . . . հէնց ինչպէս մտք եմ անում էս բանի վրա, իսկոյն սիրտս աւելի քաղցրանում է . . . ես, գիտես, ես . . . մեր ընկերութիւնն էլ կըթողնեմ . . .

— Թող Մանօֆինա, թող . քաղցած չենք մեռնիլ, չենք կորչիլ, հաւատա՛, չենք կորչիլ:

Արանից յետոյ Մանօֆինան և Սիրենան միասին հեռացան:

Իս բոլոր անցքի ժամանակը Իստէվանը և Դոլօրէսը կամաց լաց էին իլում:

Արքայ էս անցքը վերջացաւ Քրանչիսկեանը մօտեցաւ նրանց և ասաց՝

— Հիմի գնանք հստեղաց, որդիք, վաղը կըմտածենք քեզ համար ապահով տեղ ճարել, իմ աղջիկ:

— Իս կարծում եմ, ասաց Իստէվանը, աւելի լաւ կըլինէր, եթէ մենք բոլորովին հեռանաինք Իսպանիայից:

— Հեռանալ, ասաց Ղաօլօրէսը . . . իսկ հայրս: Ղաօտեղից փախ-  
չել երբոր նա բանտսուսն է . . . : ոչ երբէք . . . :

— Տայց դուք չէք կարող նրան փրկել, պատասխանեց Ղա-  
տեւիւնը . Ղաօք միայն ձեր գլուխը կրկորցնէք: Նրան փրկելու  
կ'աշխատիմ ես, ես կրմնամ էստեղ, իսկ դուք կրքնակուիք ուրիշ  
երկրումը անվտանգ:

— Աս դուրս կ'երթամ խաղանիայից միայն իմ հօրս հետ,  
ասաց Ղաօլօրէսը այնպիսի ձևով, որ ցոյց էր տալի նրա կտրակիան  
միտքը:

„ Խեղճ, աղնիւ երեխայ, ի՞նչ միճակ է քեզ համար պատրաստ-  
ւում, „ մտքումը ասաց Ֆրանչիսկեանը:

— Վաղը, ասաց նա յետոյ, վաղը ես քեզ կըտանեմ կար-  
մելիտեան կուսանոցը, իմ աղջիկ:

— Ղաօ էլ, Ղաօտեւիւն, զգուշ կացիր, ասաց Ղաօլօրէսը իրա նը-  
շանածին. Ինկվիզիցիան քեզ թշնամի է:

Երբոր նրանք հասան վարժապետի դուռը՝ առաջ Ղաօլօրէսը  
ներս մտաւ . Ղաօտեւիւնը երկու մտքի կանգնեցաւ դրան մօտ:

— Ղաօ էլ արի, որդեակ, ասաց նրան Ֆրանչիսկեանը, մենք  
կ'անցկացնենք էս գիշերը աղօթքով, իսկ վաղը դուք կըբաժանուիք  
կարելի է երկար ժամանակ:

Արիտասարդը գնաց վարժապետի ետեւից լուռ, և դուռը փա-  
կուեցաւ:







VII

ԴՕՆ ԷՍՏԵՎԼՆ ՊԷ ԱԼԲԿԼԱՍ,

Մեր պատմած անցքերի ժամանակից շատ առաջ Խաչանիացւոց ատերութիւնը Խնկվիղեցիայի վրա դառել էր յայտնի և զօրեղ: Իսա դարհուրելի դատարանի դէմ սարքուում էին դաւաճանութիւններ, համարձակ գրուում էին Պապին գանգատներ, բայց ոչ դաւաճանութիւնները, ոչ գանգատները ոչ ինչ օգուտ չբերին: Նրանց հետեանքը իլան մին քանի մասնաւոր կիսատ հրնարքներ, միայն էս կամ էն Խնկվիղեթօրի հեռացներ: Օրօրինակ Ֆիլիպպ Ա.ը հանեց պաշտօնից մեծ Խնկվիղեթօր Վէսային և նրա սիրելի Կորդուլե Խնկվիղեթօր Վուցերօյին, որոնց անդթութիւնը հասել էր էն աստիճանը, մինչև որ մատնում էին մահաւան պատիժի էն մեղապարտներից շատերին, որոնք զղջում էին իրանց Տոչորաւիւնը, ասելով թէ նրանց զղջումը սուտ է (1), և նոյն ժամանակումը Խնկվիղեցիան լըրութեամբ դիզում էր Խաչանիայ-

---

(1) Արբոր մեղապարտներից մինը յանձն էր առնում ամէն բան, ինչ որ նրանից պահանջում էին, և առանց ընդդիմութեան յանձրն էր առնում բոլոր ապաշխարանքը, բոլոր անարգութիւնը, որ դնում էին նրա վրա, Խնկվիղեցիան իրա կանոնների զօրութեամբ պարտաւոր էր աշտիէլ հսպիսի զղջացողներին. բայց Խնկվիղեցիան իրանը չըթողեց էս տեսակ դէպքերումը՝ նա պահանջում էր

ոււր լիայտակոյտներ, ամայացնում էր նրա քաղաքները և գեղերը, սպառեցնում էր նրա հարստութիւնները և սպանում էր նրա վառաց և արհեստից սէրը . . .

Իստիվան դէ Արկասը, ծագել էր էն երեւելի մաւրիտանեան տոհմերից, որոնք դեռ Ղրէնադի առնելից առաջ յօժարակամ ընդունել էին քրիստոնէական հաւատը (1) և Ինկվիզիցիայի շատ թուրք թշնամիներէցն էր:

Ծախել, վառվառն կրից տէր Իստիվանը ունէր էն տեսակ այրական և աղնիւ գեղեցկութիւն, որը որ աւելի ցոյց է ապի մըտաց բոցավառութիւնը քան թէ մարմնոյ ուժեղութիւնը: Նա էր նազելի. նրա խոշոր սև աչքերը, հեղ և հանդարտ երբ ոչինչ չէր վրդովում նրա հոգին, վառւած էին զարմանալի կրակով վաքը ինչ վրդովելից: Նրա երեսի երկու կողմից կոխուած էին մինչև վիզը թանձր կոհակածև սև մաղեր, և նրա ազդու կերպարանքին տալիս էին աւելի ազդուութիւն: Իստիվանը հեռու էր ամէն տեսակ քանատիղմից: Նրա դատողութիւնները էին պարզ և անպաճոյճ, և նա իրա հազուագիւտ պերճախօսութեան ձիրքով խօսում էր պարզ, զարմանալի և զօրեղ:

Դեռ ևս նրա հայրը՝ Կաստիլիոյ երեւելի աստիճանաւորը՝ համարձակ դէմ էր կանգնում Ինկվիզիցիայի կործանիչ զօրութեանը,

զղջացողից, երբոր կարելի էր ընում, մեծ դրամական տուգանքներ: Սուր զղջացողներին՝ Ղէսան և Ղուցերօն դատապարտում էին այրելու կամ յաւիտենական բանտարգելութեան:

(1) Իս տեսակ ցեղեր շատ կային: Իսպանիոյ կաթոլիկ իշխանները առանձին կանոնադրութիւններով տուին նրանց մեծ արտօնութիւններ, և գտան նրանց մէջ նախանձայոյղ քրիստոնէաներ և հաւատարիմ հայատակներ: Բայց Իսպանիայի Ֆանատիկները նրանց սերունդին խայտառակ անուն կպցրին *Soyrudo* — խոզ, իսկ Ինկվիզիցիան Ղէսայի ժամանակուժը և նրանից յետոյ հալածում էր նրանց իբրու հերետիկոսների: Բայց էս հալածանքի պատճառը յայտնի է՝ քրիստոնէութիւն ընդունած մաւրիտանեան տոհմերի ժառանգները շատ հարուստ էին, և Ինկվիզիցիան միշտ սիրում էր հարստութիւն:

և Նաստիվանը հաստատ միտքը դրեց գնալ նոյն ճանապարհով :  
 Դժուար չէ հասկանալ, թէ ինչ իշխանութիւն ստացաւ  
 այսպիսի մարդը հնապիսի հոգւոյ վրա, որ ունէր Վօլօրէսը : . . .  
 Նրանց հոգիները, — հոգիները համացեղ իրարու հետ, —  
 ստեղծած էին էն մարութ և վսեմ սիրոյ համար, որ կարող է լինել  
 միայն երկու միատեսակ կատարեալ բնութեանց մէջ. էն ազ-  
 նիւ սիրոյ համար, որ իրա ամենակարող զօրութեամբ, հէնց կար-  
 ծես թէ, միացնում է երկու կեանքը 'ի մի :

Իրա սրտի ընտրածի վրա ունեցած էս տեսակ անմեղ զգաց-  
 մունքների պատմութիւնը Վօլօրէսը միամտաբար պատմեց վարժա-  
 պետին, և վարժապետը գոմեց :

Իսկոք գիշերը, որը որ Պրանչիսկեանը, Նաստիվանը և Վօլ-  
 օրէսը անցկացրին միասին հեռաւոր բնակարանումը, որ մին անգամ  
 էլ թարցրել էր իրա մէջ նահանգապետի աղջկան Սեւիլայի Ինկ-  
 վիդիթօրի հետազօտութիւնից, անցկացաւ աղօթքով և բարեպաշ-  
 տական խօսակցութիւնով :

Վաւուտը, երբոր կանթեղի լուսի հետ խառնուեցաւ առա-  
 ւօտուայ նուաղ լոյսը, մին սքսին ծեծեց Պրանչիսկեանի դուռը՝  
 Նաստիվանը և Վօլօրէսը ակամայ սարսափեցան :

— Մի վախենաք, ասաց վարժապետը, էտ երեւի մեր ընկեր-  
 ւերից մէկն է :

Եւ նա բաց արաւ դուռը. ներս մտաւ մին ջահիլ հոգե-  
 րական, փաթըթուեցաւ վարժապետին և գլուխը դնելով նրա կուրծ-  
 քի վրա ասաց՝

— Ես քո որդին եմ 'ի Տէր . . . քեզ մօտ հարկաւոր բան  
 ունիմ, իմաստուն գաստիարակ :

— Ի՞նչ եղիցի քո գալուստը, ասաց վարժապետը, համ-  
 բուրելով նորակի ճակատը էն սուրբ սիրով, որով համբուրում  
 է մայրը իրա քնքուշ սիրական որդուն :

Նսախը, որդեակ, և պատմէ՛, թէ ինչն է բերել քեզ ինձ մօտ :  
 Ծահիլ հոգեորականը նստեցաւ, բայց ոչինչ պատասխան չը-  
 տուեց :

— Մի վախենար, որդե՛ակ, մի՛ վախենար սրանցից, ասաց Պրան-  
 չիսկեանը ցոյց տալով նշանածների վրա : Սրանք էլ իմ որդիքս են :

— Ես վստահացայ, ասաց նորակը, քու տուած խրատներից  
 մէկը գործ դնել : Ի՞նչ ասում էիր մեզ, թէ միայն ընկերի բա-

բոյական երջանկութեան համար հոգալը բաւական է, թէ մարդոց այնքան տկար, այնքան ցաւերի ենթարկեալ մարմինն էլ պահանջում է հոգացողութիւն: Աւ ահա ինձ անարժանիս յաջողեցաւ հաւաքել բաւական առատ ողորմութիւններ և սարքել միաբանութիւն, որի նպատակն է հոգալ վշտացելոց համար: Մեր ընկերութեան մէջ մտան բարձրանձնամտացութեամբ վառեալ շատ երեւելի տոհմերից ջահիլ մարդիք: Մենք արդէն շինել ենք Վաղիկսումը հիւանդանոց: Հիւանդներին ծառայութիւն ենք անում մենք ինքներս և կրջանանք մարմինները բժշկելով հոգիներն էլ բժշկել:

— Բարձր և բարի միտք, ասաց Գրանչիսկեանը: Վեղեցիկ է կեանքը եթէ ունի այսպիսի աղնիւ նպատակ:

— Միայն մին հոգս կայ, որ ինձ վրդովում է. մարդկային հիւանդութիւնները անթիւ են նրանցից որ մինը պէտք է մենք մերժենք:

— Վարդկային ծանր հիւանդութիւնների մէջ կան էնպէսները, որոնք մարդու սրտի մէջ շարժում են ոչ թէ կարեկցութիւն, այլ սարսափ և զղուանք: Վարդիկ վայրենաբար թողնում են էս տեսակ հիւանդութիւնով բռնուածներին: Ուրեմն հոգացէք նրանց համար, էս երեսից դցած տարաբաղդների համար:

— Աղեցի ըստ բանի քում, հայր իմ, աղաղակեց երիտասարդ հոգևորականը: Բո խորհուրդը ինձ կանգնեցրուց ճշմարիտ ճանապարհի վրա:

— Հա, նեղացածներից մենք կրջոկենք էնպէսներին, որոնք աւելի տարաբաղդ են, էնպէսներին, որոնց ոչով չի վստահանում մօտենալ, և մեր մխիթարութիւնները, մեր հոգացողութիւնները կը հանգստացնեն նրանց վշտացեալ հոգին . . . Խորհակալ եմ հայր իմ, շնորհակալ եմ իմաստուն խորհուրդիդ համար. վշտացեալները կ'օրհնեն քեզ էտուր համար (1):

Նրանց խօսակցութիւնները քաշեց էլե մին փոքր ժամանակ: Երիտասարդ հոգևորականը պատմեց իրա դաստիարակին նոր միա-

(1) էս հիւանդանոցը յատուկ շինուեցաւ Ե.Օ. դարումը: Նրա մէջ ընդունում էին բորոտներին և էն բռնուածներին զարհուրելի հիւանդութիւնով, որը Աւրոպա բերին Քրիստօփոր Բօլօմպոսի ընկերները. նրա հիմնադիրը, որին յարգում է կաթօլիկութիւնը, նուիրեց իրա բոլոր կեանքը ընկերին ծառայելու և մարդկային նե-

բանութեան կանոններ, հարցնում էր նրա միտքը ընդհանուրի և մասնաւորի համար, իրա հետեւողներից երեւելիների անունները յիշեց և շտրհակալութեամբ լսում էր Պրանչիսկեանի ճշմարիտ օգտակար մտքերը:

Արջապէս զանգակի ձայնը յայտնեց առաւօտեան ժամերգութիւնը. միասին աղօթք անելից յետոյ, վարժապետը ասաց նշանածներին՝

— Հիմի, որդեակք, ժամանակ է ձեր խոստանալուն:

Քեզ, իմ դուստր, ես հէնց էս օր կրտանեմ Արամելիտեանների մօտ, ուր կարող ես հանգիստ սպասել մինչև մերկէ վերջը, որ վրդովել է քո անդորրութիւնը: Իսկ դու, երիտասարդ, դու այժմ գիտես իմ բնակարանը, էն էլ գիտես, որ աս բաց է ամէն տարաբաղդի համար:

Վօլօրէսը անխօս դարձրուց իրա տխուր բայց հնազանդ աչքերը դէպ 'ի պատի վրա բաղմեցրած Վստուածածնի պատկերը: Վստեվանն էլ ոչինչ չ'ասաց, մեայն նրա դէմքը ցոյց էր տալի հոգւոյն սաստիկ վրդովումը. նա տխուր մտիկ տուեց իրա նշանածին, պինտ ճիւտեց նրա ձեռքը, յետոյ ճիւտեց Պրանչիսկեանի ձեռքը և շտապով տունից դուրս վազեց:

( ) Բնորդի գունաթափ թշերի վրայից գլորուեցան երկու խոշոր արտասունքներ:

Պրանչիսկեանն էլ դուրս գնաց իրա աշակերտի հետ, և փոքր ժամանակից յետոյ յետ եկաւ մինակ գաւազանը ձեռին:

Նրա բացակայութեան ժամանակը Վօլօրէսը չորած Տիրամայր պատկերի առաջը աղօթք էր անում: Արբոր լսեց նրա ոտքի ձայնը շուտ եկաւ և տեսնելով, թէ նա բոլորովին պատրաստ է ճանապարհ գնալու, շտապով վեր կացաւ տեղից և իրա կուրծքի մէջ թաքցնելով ծանր հեկեկանքը կամաց ասաց՝

— Աս պատրաստ եմ, հայր, գալ քո ետեկից:

ղութիւնները թեթեացնելու: Նա և նրա հետեւողները գտան էն հիւանդութիւնների բժշկելու շատ յուսալի գեղերը: Նա հիմնեց իսպանիումը վաթսուներից աւելի հիւանդանոցներ, որոնց մէջ եղկելի հիւանդների հոգացողութեան սուրբ պաշտօնը կատարում էին նրա սարքած միաբանութեան անդամները:



VIII

ՄԼՆՕՓԻՆԵՅ.

Գնանք հիմի Մանօֆինի մօտ, որին թողինք վարժապետի համոզման ազդեցութեանց տակ:

Ին թաղեց, ուր կատարեցաւ նրա ներքին փրկարար փոփոխութիւնը, գնաց նա իրա սիրականի հետ դէպ ՚ի Վարդաւանեան միաբանութեան պալատը: Ճանապարհին երկուսն էլ մտածմանց մէջ և լուռ էին, միայն Մանօֆինան ժամանակ առ ժամանակ սինդ ճխտում էր սիրենայի ձեռք, իբրու թէ իրա դիտաւորութեան մէջ աւելի հաստատուելու համար:

Ին ըստէին, երբ հասան աւերակների մօտ, դահլիճումը ուր սովորաբար լինում էին ընկերութեան ժողովները, միայն Մանդամիենաօն էր և մին քանի պառաւ գողացած բաների պահողներ: Մեծաւորը նստած էր կոտրած սիւնի վրա և համբուժ էր դուպլօններ (ոսկի դրամ), որոնք մին բուռ կրչինէին. պառաւ կանայքը խորը քնած էին գետնի վրա:

Երբոր Մանօֆինան և նրա սիրականը մտան դահլիճը՝ մեծաւորը գլուխը բարձրացրուց և ուրախ ձայնով ասաց Սիրենայի ուղեկցին՝

— Ե՛, էս դու ես, Մանօֆինայ. արդարև ճարպիկ: Միշտ օւրիշներից առաջ է գալի: Ի՞նչպէս անցկացաւ Ղօն Ղատէվանի բանը . . . Նրա բանը վերջացրին . . .

— Չէ, պատասխանեց Ղուլեւրինայի սիրօղը հաստ ձայնով:

— Ի՞նչ, ողաղակեց մեծաւորը, ի՞նչ ասացիր . . . Աւրեմն նա կենդանի է:

— Ահնդանի և առողջ է, պատասխանեց Մանօֆինան նոյն ձայնով:

— Ի՞նչ է նշանակում, բարեկամ: Չը լինի թէ քո դաշնակիր էնպէս աղօթել են, որ դու չընդարացիր հանել նրան իրա բնից:

— Չեն աղօթել, մեծաւոր, այլ պարզ, . . . Ինչպէս, գիտէք . . . միտքս փոխեցի . . . Ինչուր որ . . . է՛հ, ինչ հարկաւոր է հասնել վրա խօսել . . . Իսկ հիմի ես եկել եմ միայն ձեզ ասելու, մեծաւոր, որ ես ձանձրացել եմ խաւարացիների և հիմի մտադիր եմ ՚ի սպառհրաժարուիլ ընկերութիւնից. ահա փողն էլ որ ինձ տուել էք:

Իստ ասելով նա դրեց բարկացած Մանդամիենայի գալի առջև դուպլօններով լիքը քսակը:

— Իստ գժուել ես, Մանօֆինայ, կամ, հեռի մեղանից, չը լինի թէ անիծած սատանէն քո կերպարանքով եկել է քեզ կորցնելու համար:

— Ա՛յ, մեծաւոր, ես չեմ գժուել, և ձեր առաջը սատանայական երեոյթ չըկայ: Իստք տեսնում էք ի՞նչ էնպէս, ինչպէս առաջ էիք տեսնում. միայն ես եկել եմ միտք բարով ասելու ձեզ, և խոնարհարար շնորհակալութիւն անելու էն շնորհաց համար, որ միշտ ունեցել էք ինձ վրա . . .

Մանդամիենայի բարկութեամբ ունքերը տօթեց, մին ըստի շարի լուռ կացաւ, և յետոյ աչքերը անկած մտիկ տալով Միրենային, որ խոնարհ կերպարանքով գեանին մտիկ տալով կանգնած էր Մանօֆինայի մօտ, ասաց նրան աւելի փաղարուշ ձայնով՝

— Իսկ դու, Կուլեւրինայ, դու խօս մեզ չե՞ս թողնիլ, Կուլեւրինան ձայն չըհանեց:

Ի՞նչ ինչ . . . դու էլ, աղաղակեց մեծաւորը էս անգամ սպառնաձայն: Եւ իսկ եթէ դու մեղանից հեռանաս, ուտելու բան չես ձարել . . . քեզ և քու խելագարին չի յաջողուիլ բան ձարել. բայ ՚ի Դեւոյեայից (1), էն էլ երբ:

— Կարելի է բաւականանալ մէլօպիայով էլ, պատասխանեց

---

(1) Մին տեսակ ապուր, որ իսպանիոյ կրօնաւորները բաժանում էին աղքատներին, էս Մալօպիայ բառը է խանդարած Մեծիշօռի բառին, այսինքն խառն:

Արեւնան, աւելի մօտենալով Մանօֆինային:

— Դո՞ւ էլ ՚իսպառ գնում ես մեզանից:

— Գնում եմ, մեծաւոր:

— Երկուսդ էլ յիմար էք:

Ո՛չ Մանօֆինան և ո՛չ սիրենան ոչինչ պատասխան չըտուին: Մանդամիենտօն յանկարծ վեր թռաւ կոտորած սիւնի վրայից և սկսաւ դահլիճումը շտապ շտապ ման գալ, մրմռալով մին քանի անհասկանալի խօսքեր:

Դա միջոցումը հասաւ ժամանակը, երբոր ընկերութեան անդամները սովորաբար հաւաքում էին պալատը իրանց չարութեան գործերը կատարելից յետոյ: Դահլիճը սկսաւ լքուել և քիչ քիչ հաւաքուեցաւ մեծ ժողով: Երանց մէջ էին Աուէրպօ — դէ — Խիէրրօն էլ, Գարարատօն էլ, և մին քանի սիրուն Արեւնաներ: Բայց մեծաւորը խորը մտածմանց մէջ ընկղմած ոչովին չէր մտիկ անում:

Արջապէս նրան մօտեցաւ Աուէրպօ — դէ — Խիէրրօն և կամաց քաշելով շապիկ թւից խորին հնազանդութեան ձայնով ասաց՝

— Մեծաւոր, քո բոլոր որդիքը հաւաքուել են, նրանք կատարել են քո հրամանները:

— Բոլորը չեն կատարել, պատասխանեց Մանդամիենտօն խոժոռադէմ մտիկ տալով Մանօֆինային, որ Արեւնայի հետ միասին կանդնած էր ուրիշներից հեռու: Ըմէնքի աչքերը դարձան դէպ ՚ի հին աւազակը:

Բայց Մանօֆինան աչքերը վեր չըթողեց էն թափանցիկ հայեցուածների առաջը. նա բոլորովին հանդարտ մտիկ էր տալի իրա հին ընկերներին:

— Իդ ի՞նչպէս կարելի է, լսուեցաւ ամբօխի մէջ: Մի՞ թէ սա անհնազանդ է գտնուել:

— Ընհնազանդ է գտնուել, ասաց Մանդամիենտօն և դեռ կամենում էլ է հրաժարուել մեր ընկերութիւնից. Աուէրպօն էլ նմանապէս . . . ստանան գիտէ, էս ինչ բան է . . . բայց ամէնից վտար՝ դաւաճանութիւնն է իրա պարտաւորութեանը: Մանօֆինան չըկատարելով իրա վիզն առած յանձնարարութիւնը անպարտ է արել իրան էլ, մեր բոլոր պարտաբան ընկերութիւնն էլ . . .



Ոչ որ մենք կանգնած ենք պատուի համար (1): Արքայ խօսք տու-  
 ինք պէտք է կատարենք, թէկուզ մեռնինք էլ: Աւ ի՞նչ կ'ասեն  
 երեւելի պարոնները և տիրուհիները, որոնք մեզ արժանի են անում  
 իրանց հաւատարմութեանը: Ի՞նչ կ'ասէ մեր հայր Ինկվիզիթօրը:  
 Ի՞նչ կ'ասեն մեզ համար նրանք ամէնքը, տէր Աստուած, Ա՛յ  
 Մանօֆինայ, Մանօֆինայ, խելքդ դու խդ ժողովէ, փոխէ միտքդ:

Արքայ Մանդամիենտօն վերջացրուց իրա նորաձև խօսակցու-  
 թիւնը, հին աւաղակին մօտեցան մին քանի ծերեր կեղծաւոր բա-  
 ռեպաշտութեան կերպարանքով, հնախի ծերեր, որոնց անունը,  
 ինչպէս կարդացողները կը յիշեն, ընկերութեան լեզուաւ ասում  
 էին Ծո՛ւել Է՞ս:

— Աղբայր, տոաց նրանցից մէկը Մանօֆինային, մի՞ թէ  
 դու իրաւի մեղանից հեռանում ես:

— Հեռանում եմ, կիսաձայն պատասխանեց Մանօֆինան:

— Աւ ոչինչ բան չէ կարող էդ քո դիտաւորութիւնը փոխել:

— Ոչինչ:

— Ի հարկէ՞ ոչինչ, աւելացրուց Աուլբերինան:

— Մանօֆինան գո՞ղ է, յանկարծ աղաղակեց Ղարաբատոն,  
 ընկերութեան մէջ նոր ընկալած երիտասարդը:

— Մանօֆինան գող չէ, պատասխանեց հին աւաղակը. նա յետ  
 տուաւ ստացած փողերը, բայց նա յայտնում է ամենի առջևը,  
 թէ զզուել է ընկերութեան մէջ մնալուց, և թէ չի ցանկանում  
 այսուհետև ունենալ ձեր արտօնութիւններից ոչ մինը:

Միրենայի սիրողը խօսում էր հանդարտ: «Աա բողբոլին էն  
 չէր, ինչոր էր մին քանի ժամ առաջ:

— Ծո՛ւել դցենք դրան, Ծո՛ւել (2), աղաղակեց Ղարաբատոն:

— Աղբայր, խոժոռադէմ ասաց մեծաւորը, մեր պատուար-

(1) Էս է ծուռը դատողութիւնը պատիւի համար, որ ընդհանուր  
 էր Ղարդունեան ընկերութեան զարհուրելի անդամների մէջ: Ինչ  
 տեսակ ուղում է լինի շարադործութիւն կատարելու համար փող  
 ստանալից յետոյ՝ նրանք անշուշտ պարտաւորութիւն էին համարում  
 իրանց համար կատարել տուած խօսքը:

(2) Մեղապարտել անղական իշխանութեան մօտ: (2)

Ժան ընկերութիւնը երբէք չ' մատնուամ ծառի իրա անդամներին ,  
Թէ և շատ յանցաւոր էլ լինին : Աթէ նրանք չեն կատարում  
իրանց պարտաւորութիւնը չրպաշարելից կամ ծուլութիւնից , ըն-  
կերութիւնը զրկում է նրանց անդամութեան կոչումից և արտաք-  
սում է - եթէ նրանք վատահանան դաւաճանութիւն անել , ընկե-  
րութիւնը խաւարեցնում է նրանց , բայց երբէք չի ուղարկում Մա-  
տէոյին մօտ (2)

— Մեծաւոր , առայ Մանօֆինան , ընկերութիւնը իրաւոր-  
ներին երբէք չէ մատնում , իրարն էլ նրան չէ մատնում : Այս  
մատնիչ չեմ իլեւ և չեմ լինիլ :

— Այլա ինչի՞ համար , առայ Մանդամիենտօն սիրտը փափ-  
կելով , ինչի՞ համար ես ուղում հեռանալ մեզանից . ինձանից դու  
տժգոհ լինել չես կարող . ուրիշներն էլ քեզ վատութիւն չեն ա-  
րել . ուրեմն լաւ չի՞ լինիլ որ դու մնաս մեզ մօտ :

— Ամենեկին , պատասխանեց Մանօֆինան , կրտսեկան եղա-  
նակով :

— Բայց գիտե՞ս դու , բարկանալով առայ Մանդամիենտօն ,  
որ ընկերութեան ամէն յանցաւոր անդամը պէտք է պատժուի :

— Ընկերութեան ամէն յանցաւոր անդամը պիտի զրկուի իրա  
կոչումից . զրկեցէք ինձ էս կոչումից , և բանը կրկերջանայ :

— Այո , եղբայր , էնպիսի պատահմունք էլ որ խաւարեցնում են :

— Խաւարեցնում են միայն մատնիչներին , իսկ ես մատնիչ չեմ :

— Սակայն . . .

— Սակայն ես կարող եմ մատնիչ դառնալ . . . Ա՞դ ես  
ասում . . . հարցրուց Մանօֆինան բարկանալով . Թող մին  
ուրիշը փորցէ ասել ինձ էդ խօսքը , էն ժամանակը կ'իմանայ , Թէ  
ես գիտեմ դաշնակ բանեցնել , Թէ ո՛չ՝ երբոր բանը հասնում է  
անպատուութեան :

Անդամներից մին քանիսը ձեռք դրին իրանց դաշնակներին .  
սիրենան էլ գողալով բռնեց իրա փոքրիկ անդալուղեան դաշնակի  
կոթը :

Բայց էն ըսպէին Մանօֆինին մօտեցաւ Պարաբատօն և ծաղը  
անելով փչիչաց ականջումը :

---

(2) գտեղծ :

— Աթէ ես իմ աչքովս չըտեսնէի, իսկի չէի հաւատալ, թէ դու կարող ես վախենալ, Մանօֆինայ:

Պաշտօնից դուրս եկած աւաղակը անարդանօք ժպտեցաւ:

— Ի՞նչ էք էգտեղ փշիչում, աղաղակեց մեծաւորը, մի՛ թէ չըգիտէք, որ ժողովի ժամանակ չէ կարելի ցած խօսիլ:

— Այս ասացի Մանօֆինային, պատասխանեց Վարարատօն, թէ նա վախկոտ է: Ախրը ինչի՞ չըկատարեց նա իրան յանձնած գործը, եթէ ոչ վախկոտութիւնից:

Հէնց ինչպէս նա էս խօսքը ասաց, Մանօֆինայի ուժգին հարուածը վեր դցեց նրան: Այն րոպէին Մանօֆինայի վրա թափուեցան մինչև քսան մարդ հանած դաշնակներով. բայց յանկարծ կանգ առան տեսնելով, թէ նա հիանալի արագութեամբ վերարկուն փաթթեց իրա ձեռին, աջ ձեռով հանեց դաշնակը և պատրաստուեցաւ պաշտպանել իրան, և թէ Միրենան փաթթեց ձախ ձեռին իրա վերարկուն, հանեց իրա դաշնակը և մէջքը տուեց Մանօֆինայի մէջքին, որ կարողանայ պաշտպանել նրան, եթէ ուղեւան ետեւից խփել:

— Հէնց էդ էր, ասաց Մանօֆինան:

— Այլ ինչի՞ էք սպասում, մօտ համեցէք, իսկոյն աղաղակեց Միրենան, որի աչքերը վառվում էին կատաղած վազրի աչքի նման: Մօտ եկէք, պարոն քաջասիրաներ, տեսէք, Դիպելը մոռացել ենք թէ ոչ:

— Մանօֆինայ, ասաց էն ժամանակը մեծաւորը, դու պէտք է բաւականութիւն տաս Վարարատոյին:

— Բաւականութիւն տալից ես չեմ փախչում, ասաց Մանօֆինան, միայն թէ ամենայն բանը կանոնով պէտք է լինի, մէկէ դէմ մէկը:

— Բեղ կ'օգնէ Աուլելիւնան, ծաղրելով ասաց ամբոխի միջից մինը:

— Աուլելիւնան տեղիցն էլ չի շարժիլ, ասաց Մանօֆինան, միայն դուք մի՛ իրաւնուիք. մենք բանը իստակ կրվերջացնենք:

— Մերմն հետ քաշուեցէք, բարեկամներ, ասաց Մանգամիւնտօն, նրանց գործն է նրանք պէտք է վերջացնեն: Մենք, որդիք, հեռու կենանք, իսկ դու, ասաց նա մին երիտասարդ չիվատոսի, էս րոպէիս դնա՛ պահապան կանգնիր, մտիկ տուր աչքից բան չըթող-

նեա, հէնց մին նշան տեսնես՝ խնայն խմայ տուր:

Սիվատուր դուս եկաւ դահլիճից

Խնայն դահլիճումը բողոները արք և կանայք կանգնեցան բալարածե, և մէջ տեղը մտան Մանօֆինան և Վարարատոն ձեռներին դանակներ:

Նրանք լաւ համեմատեցին իրարու հետ դանակները, որ իմանան, թէ զէնքերը բողոբովին միատեսակ են (1). յետոյ նրանք ձախու ձեռերը փաթթեցին վերարկուով, փոխանակ վահանի, և նրշանին սպասելով կանգնեցան իրարու դէմ:

Վարարատոն, որ աւելի տաք և անհամբեր էր, առաջինը ազաղակեց՝

— Իչ ինչի՞ ես մտում, սկսէ՛:

Իսկ խօսքից յետոյ վազեցին իրար վրա:

Մենամարտութիւնը սաստիկ էր. թշնամիները երբեմն յարձակւում էին իրարու վրա, երբեմն կռւնում էին, երբեմն յանկարծ կանգնում էին, յետ էին թաչում, որ յետոյ կարողանան նոր մէկանց յարձակուիլ: Իսկ արագ և անակնկալ շարժմանց մէջ, ուր իւրաքանչիւր թշնամին աշխատում է արդելել ախոյեանին ուղիղ հասցնել իրա հարուածը, Մանօֆինան Վարարատոյից աւելի հանգարտ և աւելի վարժ մենամարտութեան մէջ միշտ գերազանցում էր: Նա աւելի պաշտպանում էր իրան, քան թէ յարձակւում: Կարծես թէ խնայում էր իրա երիտասարդ թշնամիին, որ կատաղի բարկութեամբ յարձակուելով նրա վրա շատ անգամ մտաւնում էր իրան պաշտպանել:

Կուլեւրինան ակներեւ վրդովմամբ հողւոյ նկատում էր մենամարտութեան ընթացքը, նրա աչքերը վառւում էին, կուրծքը բարձրանում էր:

Մեծաւորը լուռ էր կացել, նրա կերպարանքը բողոբովին հան-

(1) Մենամարտութիւնից առաջ դաշնակները իրու հետ համեմատելը ընդհանուր սովորութիւն է բոլոր խապանիոյ ռամիկ ժողովրդի մէջ. էս կորգը պահում են գողերն էլ, արսորից աղատուածներն էլ և այլն: Եւ հասարակ դանակով մենամարտութիւնը խապանիոյ ռամիկների մէջ կատարւում է մենամարտութեան բոլոր պայմաններով:

դարա էր, միւս վիտներիցն էլ ոչով չէր խօսում :

Յանկարծ մե՛նամարտութիւնը վերջացաւ հնպէս, ինչպէս շատերը չէին կարծում : Գարաբատօն, որ յայտնի դադրած էր, հաւարեց իրա ուժի բոլոր մնացորդը և մին անգամ էլ վայրենաբար առանց զգուշութեան յարձակուեցաւ իրա ճարպիկ թշնամիի վրա : Ինչ բոպէին Վանօֆինան կարող էր նրան առաջի անգամնէրից շատ հեշտ սպանել, բայց չ'ուզեց ցոյց տալ իրա գերադանցութիւնը, որի վրա ներկայ իրողներից ոչով կարծիք չ'ունէր : Ես շուտով բարձրացրուց իրա ձախ ձեռք և աջ ձեռամբ հնպիսի ճարպիկութիւնով և հնպէս ուժով խփեց թշնամիի ձեռին, որ դանակը դուրս թռաւ և հեռու ընկաւ :

— Ա՛ֆէրիմ, ձայն տուին ամէն կողմից, ա՛ֆէրիմ Վանօֆինայ : Ա՛նուա՛նուա՛ր վերջացրիր, փառաւոր :

— Ընորհակալ եմ, եղբարք, լաւ խօսքի համար, պատասխանեց Վանօֆինան. եթէ ձեր կարծիքով բաւական է, ուրեմն ես արդար եմ :

— Հիմի ես տեսնում եմ որ դու վախկոտ չես, Վանօֆինայ, ասաց Գարաբատօն ձեռքը երկնցնելով. հաշտուինք, եղբայր :

— Վանօֆինան քաղցրութեամբ ձեռքը բռնեց :

Յետոյ նա մօտեցաւ Վանգամիենայիին և ասաց՝

— Հիմի ինձ արձակեցէք, մեծաւոր, ընկերութիւնից, այսինքն՝ ինչպէս դուք էք ասում, զրկեցէք ինձ կոչումից :

Վանգամիենատօն վերջապէս տեսնելով, թէ Վանօֆինայի մտքը անշարժ է, ոչինչ պատասխան չըտուեց, այլ առանց խօսելու հանեց իրա դաշնակը, ցցեց գետնին բերանի վրա, կտորեց և կտորները տուեց Վանօֆինային, որ փոխանակ նրանց տուեց իրա դաշնակը : Իսա ծէսով Վանօֆինան զրկուեցաւ ընկերութեան անդամի կոչումից և կորցրուց նրա գործերի մասնակցութեան իրաւունքը :

Յետոյ նրան երդում տուին բնաւ մատնիչ չըլինել ընկերութեան, ոչինչ բանով չ'աշխատիլ նրան փաստաւ և բայ 'ի իրա վրա յարձակուելից իրան պաշտպանելու համար չըհանել դաշնակ ընկերութեան ոչ մին անդամի դէմ : Իսա երդումը անելից յետոյ Վանօֆինան դուրս եկաւ դահլիճից իրա սիրեկանի հետ :



IX.

Ինկվիզիթի Սերտանոյ :

Մեր նկարագրած խրատութիւնի միւս օրը Ինկվիզիթ օրը ուշ վեր կացաւ : Արա գեղնած երեսի վրա ճիշդ երեւում էին հետք անցկացած գիշերւայ շուպտու թեան և էն անժամանակ քնին, որ չէ ուժ տալի, այլ նու ազգայնում է մարմնոյ զօրութիւնը :

Եւայց նրա ջղային վրդովմանց հետ, որոնք սրտաճառ ուած էին շուպտու թիւնից, միացել էին անրած . նեղի կրից ամնջանք և բարեկու թիւն նրանց վրա, որոնց առաջի օրը յանձնել էր իրա կամքի կատարումը : Եւ վերջիններից՝ ամէնից աւելի յանցաւոր էր երեւում նրա աչքին Ինքիկիզը :

Արբուհսի գեղնած երեսի վրա երբեմն երեւում էին ծիրա նեղոյն բիծեր, նրա խոշոր կապուտ աչքերը էին վայրենական, և երբեմն երբեմն բոլոր մարմնի վրա տարածւում էր սարսափելի դող :

Ինկվիզիթ վեր կենալից յետոյ, նա երկար ժամանակ սենեակի մէջ ման եկաւ, յետոյ նստեցաւ կրակարանի մօտ և աւելի զօրեղ և աւելի անամջատ անձնատուր իլաւ քիչս և մոլի մտածմանց՝ Եւ լօրէսի համար :

Արեւակայութիւնը նկարագրում էր էս աղջկոյ գեղեցկութիւնը այնքան պոյժառ, այնքան սրտաշարժ երանգներով, որ նա մին տեսակ խելացնորութեամբ աղաղակից՝

— (Մա. ինչպէս սիրուն էր նա, երբոր գունաթափ, մազերը ուտերքի վրա վաւած վախենալով յետ քաշուեցաւ ինձանից : Ինչ չէի տալ ես աշխարհումը, միայն թէ նա լինէր կստեղ, իմ առջև, իմ իշխանութեան տակ : Աստեղ քու հեկեքանքը՝ ի զուր

կրկնէին, գեղեցիկ օրհորդ . . . Իսկ բաղդը համարեալ թէ ձեռ-  
քուսն էր . . . .

Համարեալ թէ խեղճն էս խօսքից յիտոյ, կարծես թէ ցան-  
կալով փոխելի էն ծանր մտածմունքից, որ անդադար տանջում էր  
նրան, նա վէր թռաւ անդից, մտակցաւ արթնշուով վարագուրին, որ  
բաժանում էր նրա սենեակը դահլիճից, ուր սպասում էին նրա  
մերձաւորներից մին քանիսը, քաշեց վարագոյրը և ձայն տուեց իրա  
սեղրեասարին:

Սեղրեասարը եկաւ. սա էր այնուհետև աղքատ երիտասարդ,  
և Ինկվիլինժօսի մօտ ծառայում էր միայն աղքատութիւնից ա-  
զատուելու համար:

— Դձու ֆիլիպպ, ասաց նրան Մ. Բուռնիսը, մեր քաղաքի նա-  
հանգամայն երկէ բանոր դրուեցան, թէ չէ:

— Դրուեցաւ, ձերդ սրբազնութիւն, պատասխանեց երիտա-  
սարդը, յարգանքը դրախ տալով:

— Աս հիմի բանտո՞ւմն է:

— Չէր սրբազնութեան էդ հրամանն էլ իսկութեամբ կու-  
տարուած է:

Մ. Բուռնիսն աչքերի մէջ երեւցաւ կատաղի ուրախութիւն.  
— Կանչեցէք ինձ մօտ Խօղէին, ասաց նա:

Սեղրեասարը դուս գնաց:

« Գնեալ ես նրա վրէժը կ'առնեմ, մտածում էր Ինկվիլին-  
ժօրը մե՛ն սկ մնացած, հիմի լաւ պատեհ կայ . . . ասորը նա շատ  
սիրում է իրա հօրը . . . Ինչ անի՞ծած խիտաններն էլ 'ի հար-  
կէ սպանած կ'ըլինին նշանածին . . . Ինչուր կ'ործիք չըլայ. երկ-  
պատիկ տօն սխմբո. թիւն է, կրգուարձանատը . . . »

Իս մտածմունքները ընդմիջեցան Խօղէի գալովը: Տեսնելով  
իրա սրբելիին Մ. Բուռնիսը ժպտեցաւ և յայտնի ուրախացաւ:

— Բարով, Խօղէ, ասաց նա իրա սրբելին:

— Կարծեմ որ ձեր սրբազնութիւնը էս գիշեր լաւ չէք քը-  
նել, ասաց Սեղրեասարը նաղելի ձայնիւ:

— Հա, Խօղէ, ես վատ քնեցայ, էս գիշերը ես շատ մեծ  
տանջանքով անցկացրի:

— Չէր սրբազնութեան պալատումը էնպիսի մարդ էլ կայ,  
որ նմանապէս տանջանքով է անցկացրել, էս մարդը տանջում է  
հազարով էլ մարմնով էլ, և տանջում է միայն էնպուք համար:

որ ցանկանում է կատարել ձեր կամքը :

Ինկվիզիթօրի աչքերը բարկութիւնից փայլատակեցին :

— Ա՛յա քիչ մնաց որ մեռնէր, և յետոյ երբ եկաւ ձեզ մօտ արիւնաթաթաւ կիսակենդան, ձեր սրբազնութիւնը չ'ընդունեցիք նրա արդարանալու խօսքերը և դուրս արիք . . .

— Խօղէ, աղաղակեց Արքուէսը, դիտե՛ս դու, եթէ դու չէ՛ս ուրիշ սքովն համարձակէր խնդրել Ինքրիկէզի համար . . .

— Եթէ դուք բարեհաճէիք ա՛կանջ դնել նրան հանդարտ, շարունակեց սիրելին, էնպէս, ինչպէս որ ինձ էլ, — որովհետեւ դուք արդարագատ էք — ես միամիտ եմ էդուրումը, դուք կ'ափսոսայիք, թէ ինչի համար էնպէս վարուեցաք խեղճ Ինքրիկէզի հետ :

— Ա՛յա մաանիչ է, ասաց Արքուէսը :

— Ա՛յա պատրաստ է ձեզ համար կեանքը զոհելու : Ա՛յա միշտ իլել է և կըլնի ձեզ հաւատարիմ : Չեր սրբազնութեանը հիմն նա հարկաւոր էլ է : Ո՛վ կըլնի հիմն Եվլիլայի նահանգապետը :

— Չըլնի՛ թէ Ինքրիկէզի համար ես ասում :

— Յատուկ :

— Ի՞նչ ի՞նչ է, Խօղէ, էս օր դու դժուել ես ի՞նչ է :

— Ա՛մենեին չէ, Չերդ սրբազնութիւն, և էս ըստէիս կը հաստատեմ : Եվլիլան հիմն առանց կառավարչի է, դուք առանց օգնականի : Իսկ հիմնիւայ ժամանակին, երբ հերետիկոսութիւնը ամէն տեղ թափանցում է, ձեր սրբազնութիւնը առանց օգնականի չէք կարող կառավարուիլ :

— Դիցուք թէ . . . յետոյ ինչ, ասաց Ինկվիզիթօրը առաջ վանից աւելի կակուղ ձայնով :

— Ինչ է, ձերդ սրբազնութիւն, որ ձեզ ամենից լաւ օգնական, և ուրեմն, ամենից լաւ Եվլիլայի կառավարիչ կըլնի Ինքրիկէզը : Ո՛ւր կըգանէք դուք էնպիսի մարդ, որ նրանից աւելի հաւատարիմ լինի ձեզ . . . հիմն էլ նա կատարելով ձեր կամքերից մէկը, առաջ քիչ մնաց որ դաշնակի աակ մեռնում էր, յետոյ Գալագալիլիլերումն էր խեղդւում : Ուրեմն նա ի՛նչպէս լաւ կըծառայէ ձեր սրբազնութեան, երբ որ դուք բարերարէք նրան, ամբառնաք բարձր աստիճան . . .

Արքուէսի շրթանց վրա երևեցաւ ժպիտ. սիրելի ազգացութիւնը յողթեց նրա բարկութեանը :

— Ա՛յ, Ինքրիկէզը, Ա՛յա Եվլիլայի նահանգապետ, յանկարծ



ուրախութեամբ աղաղակեց Արքուէսը : Վիտե՞ս դու, Ասողէ, թէ  
էնչ բան է Անրիկէզը . . . . ախրը նա ոչնչեց էլ պահաս է . . .

— Ատով աւելի պատիւ կրինի ձեր սրբազնութեան համար,  
անշրդով ասաց Սիրահանը, երբոր դուք ոչնչեց կրչինէք է՞նչ :

Արա պատասխանն էր բարձրաձայն և երկար ծիծաղ :

— Աւրեմն, ձերդ սրբազնութիւն, երեխայի պէս քարտէլով  
պնդեց սիրահանը, կըհրամայէ՞ք որ ես կանչեմ Անրիկէզին ձեզ  
մօտ . . . . Հա՛ . . . . ախրը նա կըմեռնի վշտից, եթէ դուք  
նրան չըլտէք և չընտրէք :

— Այն, թող քո խօսքդ լինի, Ասողէ . . . կանչէ՛ նրան հասեղ :

Սիրելին համբուրեց Անիվիզիթօրի աջը և դուրս եկաւ :

Թաւում էր, թէ նա նազելով էր համբուրում ձեռք, բայց  
էն բողբոջին, երբոր նա խոնարհեցրուց իրա գլուխը, նրա աչքերի  
մէջ վառուեցաւ այնքան մեծ տակուծիւն, որ ամէն մարդ կարող  
էր նկատել, եթէ կարողանար մտիկ տալ նրա երեսին :

Անիվիզիթօրը մե՛նակ մնալով մտածեց՝ « Յիրաւի Ասողի դա-  
տողութիւնը վատ է : Արբոր Անրիկէզը իմ միջնորդութեամբ նա-  
հանգապետ կըդառնայ, նա իմ ամենախորր կամքն էլ կըկատարէ,  
նա իմ գահիձը կըդառնայ, և երբ ես նրան կ'ասեմ խօսի՛ — նա  
'ի հարկէ չի տարակուսիլ . . . . հա՛, յատուկ չի տարակուսիլ,  
ասաց նա յետոյ անձնատուր լինելով իրա մտքին, համարեա՛ թէ  
բարձր ,, : Աս խօսքից յետոյ ներս մտան Ասողէն և Անրիկէզը :  
Սերջինը գեռ ևս շատ գեղնած էր, գլխին և մէկ ձեռքին կապիչ-  
ներ կային, նրա կեղծաւոր հեղութիւնը տալիս էր նրա լղար հի-  
ւանդ գէմքին աւելի նեղացածի կերպարանք : Աս չարեցաւ Անիվի-  
զիթօրի առջևը և խոնարհեցրուց գլուխը :

Արքուէսը մտիկ տուեց իրա սիրելւոյն, էս հայեցուածքի  
պատասխանի փոխարէն նա տեսաւ Ասողի աչքերը, որանք իբրու-  
թէ ասում էին՝ « խղձա՛ կդ տարաբաղդին ,, :

— Քո յանցանքը ներում է, ասաց յետոյ Անիվիզիթօրը  
Անրիկէզին : Գոհացիր հոգուր համար Ասողից, նա քո բարեխօսն է :

— Անիվիզիցիայի սպասաւորը խոնարհութեամբ համբուրեց  
Արքուէսի աջը :

— Հիմի, շարունակեց Անիվիզիթօրը, պատմէ մեզ մանկա-  
մասնարար քո անյաջող փորցը :

Անրիկէզը չըմտաց, որ կրկնեն էս հրամանը, նա խսկոյն պատ

մնց նորին սրբազնութեանը Վարդանի յամուսնուելու բոլոր հան-  
գամանքը :

Երբոր նա վերջացրուց պատմութիւնը՝ Կնիվեղիթօրը, որ էլ  
ամբողջ չէր նրանից, ասաց կակուղ ձէնով՝

— Դ՛հ հարկէ, Ինրիկէզ, քեզ չը յաջողուեցաւ էս անգամը,  
բայց ես յոյս ունիմ, որ դու ուրիշ ժամանակ մեր համանները  
կրկնատարես լիովին. ես հաստատ աներկբայ էլ եմ էստարումը,  
էնդուր որ, հաւատում եմ քո անձնանուէր մտերմութեանդ: Ինչ  
էս բանը ապացուցանելու համար, և քեզ ցոյց տալու համար, թէ  
ես քեզ համարում եմ հաւատարիմ և հնազանդ ծառայ՝ կըլնու-  
գրեմ՝ Նորին Վարձրութիւնից, Թաղաւորից, սր քեզ կօրգէ մեր քու-  
ղաքի կառավարիչ :

— Բայց, հարցրուց Ինրիկէզը, կարծեաց և ուրախութեան  
մէջ տատանելով, մի՞ թէ կունս Վարդանի մեռել է :

— Չէ մեռել, քչիչալով ասաց Կոզէն, բայց համարեալ թէ  
մեռել է. նա Կնիվեղիցիայի բանտումն է :

Ինչ բուպէին ապրէշումէ վարադայրը բարձրացրուց Կնիվեղիցիայի  
ապատարներէից մէկը և յայանեց Վարդանին, թէ Սանդամիեն-  
տոն հրաման է խնդրում խօսիլ նորին սրբազնութեան հետ :

« Ի՛նչ, մտածեց Կնիվեղիթօրը, Ինտէվանը ձամբու դրամ է . . . »

— Կանչեցէք, ասաց նա յետայ ծաղր սիան դէմքով, կանչե-  
ցէք էստեղ Քարդանեան պարտաւորման ընկերակեան Տեճաւորին :

Սանդամիենտոն ներս մտաւ հպարտ ձեւով գտակը դըլսին.  
Նա իրա կոչմամբը ոչինչ բանով իրա գլուխը Կնիվեղիթօրից ցած  
չէր համարում :

Ինրիկէզը աչքով արաւ նրան՝ որ գտակը հանէ, բայց նա պա-  
տասխանեց նրան անարգարար մահիկ տալով. Կնիվեղիթօրը ժպտե-  
ցաւ և հարցրուց Տեճաւորին՝

- Չ՛ը, ինչ է, ամէն բանը պրծած է :
- Ոչինչ չէ պրծած, տխուր պատասխանեց Սանդամիենտոն :
- Ի՛նչպէս . . . Ուրեմն Ինտէվան դէ Սարկասը . . .
- Ինտէվան դէ Սարկասը կենդանի է և առողջ. ընկերակեան  
մէջ լուս է ընկել — լուս է ընկել իրա սարքուելու օրից այս ա-  
ռաջին անգամ — դաւաճան :

— Ստանան ինքը տանի ձեզ բոլորիդ էլ, աղաղակեց Կն-  
իվեղիթօրը կատաղութեամբ ոտները գետնին խփելով, հէնց գի-

տենաս օճիքը խօսք են կասել էս բանումը: Ա՛յ է քո դաւաճանք:  
 — Ես երդում եմ արել ոչովի չ'ասել, ես կարող եմ մի  
 այն ետ ասլ էն փողը, որ աւաճ էր էս յանձնարարութիւնը չը  
 կատարողին:

Ես ասելով աւազակը դրեց սեղանի վրա Եստէվանի սպա-  
 նութեան գինը:

— Ինչ է, հարցրուց Վ. քրուկար, մի՞թէ քո խնամանքից  
 ուրիշ ոչով յանձը չի առնիլ էս գործը:

— (՞) պատասխանեց մեծաւորը, յուսալի ճարտիկներու ետ  
 պակասուի չ'ունիմ, բայց, ձերդ սրբազնութիւն, մենք հիմի էն պա-  
 րոնի հետքը կարցրել ենք, ժամանակ պէտք է:

— Սպասեցէք, եթէ հարկաւոր է, բայց մտիկ արա՛ որ անպատ-  
 ճառ կատարուի: Հիմի վեր առ էդ փողերը. էդ առ հաւատչեան (բէ՛հե)  
 է, հասկնում ես... միայն առ հաւատչեայ... վարձը յետոյ Ե

— Եսորհս կալ ենք, ասաց մեծաւորը, փողը ետ վեր առ-  
 նելով. մին շարժից յետոյ կերուստէքը կը կատարուի ինչպէս  
 պէտք է. կարող էք միամիտ լինել, ձերդ սրբազնութիւն:

Ես խօսքերի ժամանակը կտոզէն կամաց գորս եկա սեղանից:

— Ես հանդ ապեաթի աղջկայ համար բան խօս չե՛ս լսել, հար-  
 ցրուց Վ. քրուկար: Չե՛ս կարող ինձ ասել, թէ ո՛ր է նա հիմի Ե

— Երա համար ես ոչինչ չը գիտեմ, պատասխանեց Մանդա-  
 միկնտուն: Չե՛ որ, ձեր սրբազնութիւնը նրա համար ոչինչ յանձ-  
 նարարութիւն չէք առել:

— Ո՛րեմն հիմի ասլես եմ: Ա՛յ թէ քեզ կը յաջողուի խնամալ  
 թէ ո՛ր ակզ է նա հիմի պահուած, և յետոյ կը բերես նրան ինձ  
 մօտ հասնող, դու կըստանաս էնպիսի վարձ, որ քո մտքում էլ խի  
 չէ անցկացել:

— Իսկ մտքել նրան խի է հարկաւոր չէ, հարցրուց անտալակը  
 անդորրամիտ:

— Միտքէլ, կատարու թեամբ կրկնեց Կնիվեղլթօրը, եթէ  
 դու համարձակուիս նրա մին մտղին էլ դիպչել, լաւն էն է  
 որ ինքդ քու փողը թող գցես: Մի համարձակիր նրան վստայ-  
 նել էլ, ասաց նա փոքր ինչ հանդարտ: Չէ որ քեզ մօտ, քո  
 բնկերութեան մէջ կան եանայք, որեմն բնորէ նրանցից է՛ն յան-  
 ձնարարութեան համար մէկին կամ երկուսին, որոնք առելի խելք են. ի  
 հարկէ նա կ'ունանց առելի շուտ կը հաւատայ, քան թէ քո խնամանքին:

« Ընդ, մարումը ասաց Մանդամիենտոն, եթէ հիմի կուլեւ  
ընեն մեզ մօտ լինէր, մենք էս դործը իսուաւոր գլուխ կըտանէինք, »

— Խոստանալով չեմ խոստանում, ձերդ սրբազնութիւն, ա-  
սաց նա յետոյ, բայց կըհեռուինք: Ընդը դուք գիտէք որ էս բանը  
իտքը բան չէ . . . դժուար է:

— Չերդ սրբազնութիւն, կամաց ասաց Ինրիկէզը, եթէ կը-  
բարեհաճիր, ձեր էդ կամքը ես կըկատարեմ: Ես ամէն միջոցները  
կ'ունենամ, երբ որ ձեր ողորմութեամբ կըդառնամ էս քաղաքի կա-  
ռավարիչ:

Ինկիլիզիթօրը նշանացի հրամայեց և Մանդամիենտոն դուս ե-  
կաւ. իսկ Ըրբուէսի և Ինրիկէզի մէջ սկսուեցաւ երկայն և մը-  
տերմական խօսակցութիւն, որ դժուար է հաղորդել ընթերցողաց:

Փողոցումը մին սքիւն յանկարծ քաշեց մեծաւորի կապայի  
թւից: Մանդամիենտոն դարձաւ և տեսաւ Ինկիլիզիթօրի սիրելի  
Ղառմինիկեան կրօնաւոր Խօղէին:

— Երևի թէ նորին սրբազնութիւնը մտացել է մին բան ա-  
տելու ինձ, հարցրուց նա Խօղէից:

— Նորին սրբազնութիւնը մտացաւ քեզ ասել, թէ ես չեմ  
ուզում, որ Ղառմ Խառնիլան դէ Արկաոր սպանուի, պատասխա-  
նեց Խօղէն:

- Թէ Ղառք չէք ուզում:
- Հա, ես, հասկանում ես:
- Ես ստացայ նորին սրբազնութիւնից առ հաւատչեաց էն  
դուր համար, որ յանձն առայ խոստրեցնել Ղառմ Խառնիլան դէ Ար-  
կասին, և ինձ ցանկալի է իմանալ, թէ ո՞վ է կարող արդելել  
ինձ կատարել նորին սրբազնութեան կամքը:

— Կարող եմ արդելել ես, ասաց Խօղէն հրամայողական  
ձայնով: Ես չեմ ուզում, որ Ղառմ Խառնիլանը սպանուի, — հաս-  
կանում ես, չեմ ուզում . . . . առ հաւատչեան ես ետ կը-  
դարձնեմ նորին սրբազնութեանը, իսկ դու դնա՛ տուն և իսկի միտք  
էլ մի՛ աներ Խառնիլանի համար:


Մանդամիենտոն մտածմանց մէջ մտաւ: Ես գիտէր թէ ինչ-  
բան մեծ իշխանութիւն ունէր Խօղէն Ինկիլիզիթօրի վրա, ինչ անէր:

- Եւթիւնը քաշեց մին ըոպէի չափ:
- Կարելի է, վերջապէս ասաց մեծաւորը, ինձ համար վատ  
լինի, բայց ես կըկատարեմ ձեր հրամանը:

— Դու մի վախենար, ես քո սրաշտպանն եմ, ասաց Խոզէն  
գնելով Մանդակենացոյի ձեռքը ոսկւով լքցրած քսակ, և անհետ  
ելաւ միւս փողոցուով:

« Ի՞նչ կայ, մտածեց մեծաւորը մտիկ տալով Մըբուէսի  
սիրելիւնց առած քսակին, էս խօ՛րն ընծայ է, խի ամենայն տուրք  
այսինքն, ես շատլաւ կարող եմ վեր առնել ինձ համար: »

Եւ գարգունեան պատուարժան ընկերութեան մեծաւորը հե-  
ռացաւ կիսաձայն երգելով էն խապանիական հին երգերից մէնը,  
որոնք խիտանները մինչև հիմի էլ երգում են Մնդալուզիայուով:



V.

### ՈՒՅՏ ԴՕՄԻՆԻԿԵԱՆ ԿՐՕՆԵՒՈՐԻ:

Անկեղտայի մօտ գեղեցիկ բլրի վրա, որի տակը ողողում էր  
 Գլադալեիվերը, կանգնած էր մեծ հոյակապ շինութիւն, որ մին  
 ժամանակ էր մին մաւրիտանեան իշխանապետի բնակարան: Այս շի-  
 նութեան մէջ, որ ներքուստ լի էր ամենայն տեսակ կենցաղավա-  
 րութեան ընտիր պիտոյիւք և դրօշից պատած էր հիանալի բնու-  
 թեան ճոխութեամբ, բնակւում էին երեսունի չափ Գամմինիկեան  
 կրօնաւորներ Ինկվիզիցիայի ամենամտերիմ ծառաներ:

Աս նրանց վանքն էր, մեծ Ինկվիզիթօրի առանձին հովա-  
 նաւորութեամբ պաշտպանեալ:

Գօթօրէսին յափշտակելու անցածուղ փորձից երկու ամիս յե-  
 րայ էն վանքումը պատրաստւում էր իառաւոր հանդէս. նրա եկե-  
 ղեցւոյ մէջ Արքուէսի սիրելի երիտասարդ Խօղէն պէտք էր հրա-  
 պարակական երդում անէր միանդամայն աշխարհից հրաժարելու:

Հանդէսի օրի լուսադէմից սկսած վանքումը ամէնքը ոտի վրա  
 էին, ամէնքը զբաղուած էին զարդարելով եկեղեցին, որ բոց  
 ՚ի նոր զարդարանքից պահել էր իրա հին մաւրիտանեան ձևը:

Երա սիւների սպիտակ մարմարինոր ծածկուեցաւ վարդի փուն-  
 ջերով, պատերը զարդարուեցան երկնեւերանգ ճութեղէններով: Տե-

բամբոսի պատկերի առջևը և ուրիշ տեղերումը վառուեցան անթիւ մամեր և ամէն տեղ տարածուեցաւ ծխանելեաց անուշահոտութիւնը :

Նկեղեցւոյ մէկ կողմումը մին քանի տափածան բարձրութեամբ շինած բեմի վրա դրած էր շքեղ հովանիի տակ թաւապատ աթոռ Սեփիւիոյ մեծ Ինկիլիլթօրի համար : Նորա աջ կողմումը փոքր ինչ ցած դրած էր աթոռ վանահօր համար :

Իննը ժամին մօտ եկեղեցւոյ մէջ , որ լեքն էր պերճ դուռւած կնանիքով և Սեփիւիոյ պատուաւոր քաղաքացիներով , հնչեց հանդիսական բարձրաձայն երգ : Իսկ Վոմինիկեան կրօնաւորների երգն էր , որոնք ձեռներին վառած մամեր բռնած երկու երկու ծանրաբայլ անց էին կենում եկեղեցւումը ժողովրդեան միջից և նրանց ետեւից դնում էր իրանց վանահայրը :

Շարականից յետոյ նրանք կանգնեցան երկու կարգ և նրանց մէջ տեղումը կանգնեցաւ վանահայրը :

Իսկոյն նրանցից երկուսը Խօղէի և մին իշխանի հետ , որ Խօղէի հօր տեղը պիտի բռնէր , դուրս եկան հն կարգից և փոքր ինչ հեռու չորեցան թաւիշեաց բարձերի վրա :

Մեծ Ինկիլիլթօրը իրա տեղումն էր :

Փոքր ժամանակից յետոյ սկսաւ սախրական երգումը և խորատը : Նրկուսի ժամանակն էլ շարած էր Խօղէն . նա Խապանիայ երևելի աղնուականի հարուստ շորերով զարդարած մեռելի պէս դեղնած էր . բայց նրա սև աչքերի մէջ դրուած էր մին տեսակ անասլոր արատաանու թիւն և նուրբ աչքով մտիկ տուողը կարող էր նկատել , թէ նրա դէմքումը երբեմն երևում էր մին տեսակ մուժուրակաթիւն :

Խորատից յետոյ վանահայրը մօտեցաւ Խօղէին և հարցրուց՝

- Ի՞նչ ևս ուզում էստեղ հեղութեան հովանիի տակ դու՝ որդիդ աշխարհական ունայնութեանց :
- Հողւոյս փրկութիւն , պապասխանեց Խօղէն :
- Բայց հրաժարում ես դու աշխարհի վայելչութիւնից և նրանց վրա բոլոր մտածմունքներից :
- Հրաժարում եմ :
- Վիտե՛ս , թէ ի՞նչ պատուիրան է դրւում քեզ վրա , և խօսք տալի՞ս ես տունից զանցառութեան կատարել :
- Վիտեմ և տալիս եմ :
- Ա՛րի՛ ուրեմն և եղիցի :

Արանից յետոյ ելիտ. Առնիկիեան կրօնաւորներ ընկեցին Առնիկի ձեռքից և տարան գեանափոր խորանը :

Իս մութ խորանումը, որ նման էր կամարակապ յենեակի, ոչինչ տեղից լոյս չէր ծագում : Արա օձոռքից քաշ արած էր կանթեղ, որ տարածում էր իրա չորս կողմը տխուր և աղետ լոյս, սենեակի մէջ տեղումը սև մահուտով ծածկած գեանի վրա դրած էր նմանապէս սև մահուտով պատած դագաղ, որի չորս անկիւնի վրա կանգնած էին վառած մամեր, դագաղի խուփի վրա խաչածև դրած էին մարդու երկու ոսկորներ և գլուխ երկու շաքք զարհուրատեալի փղոսկրի նման սպիտակ ատամներով, իսկ նրա առջևը մօտիկ կանգնեցրած էին մեծ խաչափայտ և խաչվառ, որոնք Առնիկիեաները կրում էին մեռել թաղելի ժամանակը :

Դագաղից փոքր ինչ հեռու կանգնած էին գրքակալ և սև մահուտով ծածկած սեղան, որի վրա դրած էին Առնիկի նոր կրօնաւոր համար պատրաստած շորերը :

Սերժապէս մին պատի վրա գրքակալին դէմուդէմ ամբացրած էր մեծ մետաղեայ տախտակ, այնպէս օղորկած, որ նրա մէջ երևում էին բոլոր վերոյ յիշեալ առարկաները :

Իս սենեակը, ուր սմին բան յարմարացրած էր նորընծայի երեակայութեան վրա որքան կարելի է աւելի ուժգին ներգործելու համար, աւուում էր Աստիւքանի փրկութեան :

Իս դամբարանի մէջ Առնիկի ուղեկիցները թողին նրան մինակ :

Արբ որ նրանք հեռացան՝ Անկիւղեթօրի սիրելին հանեց իրա աշխարհակուն հարուստ շորերը, և հագաւ իրա համար պատրաստած սքեմը, որ էր սպիտակ շապիկ և սև կապայ : Յետոյ նա հանեց իրա փետրազարդ դուակը և իրա թանկագին կոշիկները, առաջինի տեղ ոչինչ չըծածկեց, իսկ երկրորդի փոխարէն հագաւ կոշտ արեխններ, վերջապէս առաջուայ դօտիի փոխարէն կապեց թուկ — ՚ի նշան աղքատութեան :

Իս բոլոր շորերի փոխելու ժամանակը, որ քաշեց կէս ժամ, Առնիկի ձեռքը կնպէս էին դողում, որ կարծես թէ տենդումն էր. նրա սիրտը խփում էր ուժգին և անկարգ, իսկ երեսից վաղում էր սառը քրտինք : Հագնուելից յետոյ Առնիկն չօրեցաւ խաչելութեան առջևը և սկաւ հեկեկալով աղօթել :

Իս ժամանակը եկեղեցումը հնչում էր երգչօնի փառահեղ



ճայնը և Պատմնիկեաններն բարձրաձայն երգը :

Իսկ հնչմունքը և էս երգը , որոնք կիսատ էին հասնում դամբարանը , որոնք երբեմն կտրուում էին և երբեմն կրկին լսոււմ էին , աւելի սղաորում էին Խօղէի երեւակայութիւնը , որ առանց էն էլ սաստիկ վրդոված էր :

Այնպէս Մարութի սիրելին թուեցաւ , թէ նրա կուրծքի վրա ընկաւ սքմինի կրակի պէս տաք ձեռք , թէ սքմին քչիչալով ասաց նրա ականջումը , ասաց մին տեսակ անմարմնոյ ձայնիւ « Ղնա » , և թէ նա յանկարծ ընկաւ մին անդունդի մէջ , ուր օձաձե վազում էր բոցի դետ , որի վրա դարչահատ ծխոյ գունտերումը սունալով և աղաղակելով անց էին կենում զազրատեսիլ հրէշներ . . . . .

Արդ որ Պատմնիկեանները եկան Խօղէին կրկին եկեղեցին տանելու համար , նա համարեալ թէ անդգայ էր : Հազիւ սաք փոխելով և իրա ուղեկիցներն վրա յենլով մտաւ եկեղեցին :

Բայց հենց որ տեսաւ Մարութին , որ նստած էր իրա փառաւոր հովանիի տակ , կարծես թէ դիւ թու թեամբ նրա ուժը վերագարձաւ և նրա խոշոր սև աչքերը փառուեցան ատելութեամբ :

« Ես հեղութիւն չսքեցաւ (էս անդամին ոչ թէ թաւշեայ բարձի վրա , այլ սառը քարեայ գեանի վրա) և տուաւ վերջին երգումը :

Արդէսնի բարձր հնչմունքը կրկին լսուեցան և Պատմնիկեանները երգեցին Տէ Ղեւում (պէշ Կարոստ) :

Արդ ից յետոյ Խօղէին դրին դազաղը 'ի նշան կեանքից հրաժարուելուն և թաղման շարականներ երգելով տարան վանքի գերեզմանատունը :

Իստրով վերջացաւ հանդէսը :

Գերեզմանատանը մինակ թողած Կնկվիղթօրի սիրելին ծանր շունչ սաաւ , մտիկ տուեց շքահայ գերեզմաններին և մարդկանց սկրքներին և դուրս եկաւ իրա դազաղից :

« Մհ , երջանիկ է նա , որ կարող է թողնել էս կեանքը , էս բոպէին մտածում էր Խօղէն , անսպասակաբար երջանիկ է , չէ՞ որ մահը միացնում է . . . . Բայց ես չեմ կարող , ես դեռ չըպիտի մեռնիմ . . . ես դեռ պէտք է վրէժ առնեմ և կ'առնեմ անսպասաձառ : »

— Ֆերնանդ , մտապիտիմք բարձր ասաց նա յետոյ , շուտով , շուտով :

Իսկ բառերի ձայնը կարծես թէ նրա մտքը վրան բերեց և շտապով հեռացաւ գերեզմանատունից :



XI

ԻՆՆԱԼ ԻՕՒԹՈՒՄԻ ՍԵՐՐ:

Արդէն երկու ամիս էր, որ Ղաօլօրէսը կենում էր էն ապաստանարումը, որ ընտրել էր նրա համար վարժապետը, և երկու ամիս էր, որ նրա տարաբաղդ հայրը մաշում էր Խնկիկիցիայի բանտումը: Ղաօլօրէսի էս Թաքտեան տեղը դեռ չէին կարողացել գրանել ոչ սպասաւորները զարհուրելի դատարանի, որ համարձակում էր անուանել իրան սուրբ, ոչ Մանգամիենտոն իրա բոլոր խորհրդակիցներով և ոչ Լճնրիկէզը, որ Աբբուէսի հախանաւորութեամբ Սեպիլիայի նահանգապետ էր դառել:

Իս հետազօտութիւնների անյաջողութիւնը միայն աւելացնում էր Խնկիկիթօրի մոլեկանս կիբըրը. նա ջանք էր անում մուռանալ էս կիբըրը նոր նոր անդթութեանց մէջ, նոր նոր հալածանաց մէջ. բայց տանջանաց և պատիժների տեսարանը չըկարաց յաղթել նրա կրից: Իս տանջանքները և պատուհասները միայն մին սրտուղ ունեցան՝ Խապանիոյ անէծքը:

Նրա ցաւիլը, նրա սրտնեղութիւնը աւելանում էին, աւելի անտանելի էին լինում, երբոր նա մտածում էր, թէ նրա Ղաօլօրէսի համար սարքած դժօխային մեքենաները ինչպէս անտալելին էին կարգադրած: Նրա զարհուրելի մտքումը — բաւական էր, որ էս խեղճ աղջիկը տեսնէ իրա կաթոգին սիրեկան հօրը տանջանքի

խոշտանգանաց մէջ, ժայռակոյտի կրակի առջեւ, — և նա խնայն  
ամէն բանը կըրողէ, ամէն բանը յանձը կ'առնէ միայն նրան ա-  
զատելու համար, որ իրա համար այնպէս Թանկագին է աշխարհումը:

Մտաջուպ զեղև կեանքն էլ իրա բոլոր գինեմուլութիւնով  
Մըրուկսի համար ասելի գառաւ: Տխուր, բոլորովին անձնատուր  
կլամ Ղօլօրէսի վրա տուփական մտածմանց՝ նա վախճում էր եր-  
կուսիցն էլ:

Մին դարնանային հանդարտ գիշեր ամէն օրից ասելի ժողո-  
ված մտաւ իրա սրտակցը յուսալով գոնեա՛ մտրը Ժամանակ ա-  
զատ մնալ էն խօլական ցնորքներէից, որոնք անդադար և ամէն անդ  
նրան հաղածում էին: Բայց նրա անխալութիւնը չքիտտարուեցաւ:

Միհարմար աստղերը շողշողում էին կապուտակ երկնքի վրա,  
օդը տաք էր և լի նարնջենիի ծաղկանց անուշահոտութիւնով, շորս  
կողմից լուում էր միայն գաղանի շունչ անբեկերի, իբրև միացեալ  
ձայներ հաղարատը մեղմ և երկիւղած համբոյրների. բայց էս հե-  
ռաւոր աստղերի շողշողումը, էս օդի մէջ տարածուած անուշահո-  
տութիւնը, էս անբեկերի սրտաշարժ շրջներ Մըրուկսի հոգւոյ վրա  
էին վշում հանգստութիւն:

Ըստով, Թալիպոյած իրա ներքին անդադար պատերազմից,  
նասեցաւ, կամ, լաւ եւս ասել, ընկաւ մարմարեայ նստարանի վրա,  
որ դրած էր դարդարած հովանաւոր կանանչներէ մէջ:

Իստեղ նա գլուխը կռայրուց ձեռքին վրա և վարդի աչքերից,  
որոնց հայեցումը բոլոր նահանգի բնակիչներին դողացում էր,  
Թախտեցան սրտասուքներ: Աւժաթալի կամաց կամաց ընկաւ նա  
մին անասկ մտացութեան մէջ, որ նման էր հիւանդի նկրհման:

Յանկարծ նրա մօտ լուեցաւ որմնի Թեթե ստքի ձայն, և  
յեապ կցկոտը շնչառութիւն: Իսս ստքի ձայնը և շնչառութիւնը  
լսեց Մըրուկսը իրա մտացութեան մէջ, բայց նրանք Հաղատեցին  
նրան իրա հիւանդական Թմրութիւնից:

Արա առաջը կանգնած էր իրա սիրելի Խօղէն: Ակրճապէս  
Մըրուկսի Թմրութիւնը բոլորովին ցրուեցաւ և նա մտիկ տալով  
իրա սիրահանին ասաց Ժպտելով՝

— Դձու ես, Խօղէ: Մըրի՛ ման դանք միասին պարտիւղումը:  
Պատանան գիտէ, ինչ մտքեր կան էսօր իմ գլխումս. ես նեղացած  
եմ, շատ նեղացած . . . կարելի է դժասանքը մին վտրը սիրտս  
բայ անէ:

Խօզէն լիար ինչ հանդարտուած կատարեց Արքուէսի հրա-  
մանը և երկուսը միասին սկսան կամաց ման գալ պարտեղումը:

— Խօզէ, հարցրուց նա յետոյ իրա սիրելիին, դեռ ոչինչ չե՞ս  
խմացել:

— Աչինչ, ձերդ սրբազնութիւն, բնառ ոչինչ, պատասխանեց  
սիրելիին:

Աս հարցմունքը և պատասխանը օտարի համար անհասկանալի  
կրկնէնէր, բայց հարցնողը և պատասխանողը իրար հասկանում էին  
միայն նշանայի:

— Հիմի ի՞նչ պէտք է անել, աղաղակեց Խնկվիղիթօրը սաս-  
տիկ զայրացմամբ: Ինչ որ կարելի էր, բոլորը դորձ դրած է: Խնկ-  
վիղիցիայի ամենամտերիմ սպասաւորները . . . Խնրիկէզը . . . էն  
անիծած խխտանները, որոնք միշտ յաջողութեամբ կատարում են  
յանձն առածը, — ամէնքը փնտրել են ամէն տեղ . . . ամէն  
փանքերը անսողած են և ոչ մին տեղ ոչ համբաւ կայ, ոչ հետք  
. . . ջրինի թէ նա փախել է մին ուրիշ նահանգ: Բայց էդ  
ինչպէս է կարելի: Մի թէ նա, որ այնքան սիրում էր իրա հօրը,  
սիրտ է արել թողնել նրան հաստեղ իմ իշխանութեան տակ:

Ան որոնմունքը, որոնց համար խօսում էր Արքուէսը, իրաւի  
շատ աջալըծութեամբ էր դորձ դրած: Կարմելիտեան արքայութիւնն  
էլ, ուր պահուած էր Վօլօրէսը, բնկաւ էդ որոնման տակ. բայց  
նրան աղատեց մին յաջող դիտուած: Ան փանքը անսողելու դնաց  
ինքը Արքուէսը: Աս պահանջեց, որ իրան ներկայացնեն բոլոր  
կարմելիտեան կուսերին և բոլոր էս կոչման մէջ մտնելու համար  
էնտեղ բնակողներին: Աստ հրամանը կատարուեցաւ. բայց որով-  
հետեւ Վօլօրէսը ոչ մին կարգումը չէր, էնդուր համար մայրապետը  
հարկաւոր չըհամարեցաւ նրան ներկայացնել Արքուէսին:

Արքուէսի էնտեղ իլոճ ժամանակը խեղճ աղջիկը ամենեւին  
չ'իմանալով նրա գալուստը, փանքի մէջ շատ հեռուստը կողմումն էր,  
ուր նա աճ'եցնում էր իրա սիրելի ծաղիկները:

— Բայց, ասաց Խօզէն Խնկվիղիթօրի խօսքերը լսելից յետոյ,  
եթէ Վօլօրէս Արդօղօն իրաւ փախել է հաստեղից, այսինքն փա-  
խել է Խնկվիղիցիայի իշխանութիւնից, էնչե՞ դուք պէտք է չըզբէք  
Արքագոնից, Կաստիլից, Մալագայի և բոլոր ուրիշ տեղերի դա-  
տարաններին, և իրան թաղաւորին էլ: Թող ամէն տեղ նշանա-  
կեն սրկրներ Խնկվիղիցիայի կամքի մեղապարտ անհնազանդին փըն-

տրելու համար . Արան անպատճառ կրքանեն , և նա անշուշտ  
կըստամուխ . . .

— Չէ , չէ , սխալութեամբ պատասխանեց Քնկվիդիթօրը ,  
ինձ նրա պատիժը , նրա մահը հարկաւոր չէ . ինձ հարկաւոր է նա  
ինքը : ( ) չ , հերիք է , որ ևս միայն գտնեմ նրան . Ես նրան կ'ա-  
սեմ . . . Գու կարող ես վերկել քո հօրը , նա կ'աղաատի՛ եթէ  
դու գլուխդ կըտաս ինձ , — և նա կըհամաձայնի :

— Եւ իրա հօրը չի՛ վերկել , — շատ կամաց ասաց Իսողէն , մտիկ  
տալով Արքուէսին կատաղի գլե՛նի (Տարբարէլի) աչքերով :

— Ինչ ես քչիչում էդ տեղ , հարցրուց Արքուէսը :

— Ես ասացի , ձերդ սրբաղնութիւն , պատասխանեց սիրականը ,  
թէ պէտք է հնարել մին նոր , չըլտուած տանջանք և նրա տակը դը-  
ցել ծերունի Արդօղօին , երբոր գտնուի նրա աղջիկը , եթէ ոչ՝ նա  
չի համաձայնիլ ձեր կամքը կատարելու :

Յանկարծ կանանչների ետեւից երեւցաւ Քնրիկէզը :

— Ինչ ես ուզում , բարկանալով հարցրուց Քնկվիդիթօրը ,  
ինչե՞ր ես եկել էստեղ էս ժամանակին :

— Չեր սրբաղնութեան համար ես նոր համբաւ եմ բերել ,  
պատասխանեց նահանգապետը խորը գլուխ տալով :

— Ինչ :

— Համբաւ Գօլօրէս Արդօղօյի համար . . . . Ես խնայայ որ-  
տեղ է պահուած նա այժմ . . . .

— Ո՛ւր , ո՛ւր :

— Կարմեխտեանների վանքումը , որ Գվադալիվիլիի մեւ  
կողմումն է :

— Շատ ժամանակ է :

— Արդէն երկու ամիս է :

— Սա ես խօսում , աղաղակեց Քնկվիդիթօրը : Ես ինքս  
գնացի էն վանքը , և Գօլօրէսը էնտեղ չէր :

— Նա էնտեղ է , ձերդ սրբաղնութիւն . ես խնկութեամբ  
գիտեմ : Ես բոպէիս կըհաստատեմ , եթէ կըհրամայէք . . .

— Քնրիկէզ , աղաղակեց Արքուէսը ուրախութեամբ , իմ մը-  
տերիմ , իմ անդին Քնրիկէզ : Ինչպէս դուար դու նրա ապաս-  
տանարանը :

— Թաղութիւն տուէր , ձերդ սրբաղնութիւն , իմ մեղքին ,  
պատասխանեց Քնկվիդիցիայի սպասաւորը խորը գլուխ տալով Ա.Ր-

բուհսին, ես՝ Գոմինիկեան կրօնաւորի շորերով ծախեալ ներս մը  
սայ վանքը . . .

— Թողեալ լիցի, հազար անգամ թողեալ լիցի, ուրախու  
թեամբ ասաց Կնիվիզիթօրը: Պրծանք . . . հիմի դուք մերն էք, տի  
բուհի՛ Գօլօրէս Լըդօղօ: Հիմի տեսնենք էլի առաջուայ պէս  
հպարտութիւն կանես . . .

Երկար ժամանակ լուռ կեցան . վերջապէս խօսեցաւ Կնիվի  
զիթօրը, որի ուրախութիւնը փոքր ինչ հանդարտուեցաւ, և որի  
Գօլօրէսի համար ունեցած նեղութիւնով ճնշած կատաղի ֆանա  
տիզմը յանկարծ զարթեցաւ առաջուայ ուժովը, երբ նա իմացաւ,  
թէ էն աղջիկը խկոյն կըլենի իրա իշխանութեան տակ, երբոր  
ինքը կամենայ:

— Ի՛նչ . . . իսկ գործերը, հարցրուց նա Կնրիկէզին գնալով նրա  
և Քոզէի հետ դէպ ՚ի պալատը — հերետիկոսութիւնը ի՞նչպէս է:

— Հերետիկոսութիւնը օր ըստ օրէ զօրանում է, ձերդ սրբ  
բաղնութիւն, պատասխանեց նահանգապետը: Եդ ժամտախտը  
վանքերն էլ է մտնում:

— Պէտք է աւելի սաստիկութիւն բանեցնել, Քանի՛ մարդ  
է բռնած էս շարաթ:

— Քսանի չափ, ձերդ սրբաղնութիւն:

— Հէնց էդքան . . . և կարծեմ, թէ բոլորը սատանան  
գիտէ ուրքեր են . . .

— Նրանց մէջ կան երկու կամ երեք աստուածաբանութեան  
վարդապետներ, որոնք համարձակուել են բարելի մեկնութիւններ  
տալ . միւսները Մարտին Լիտերի հետևողներ են, թէև իրանց անձը  
ձեռացնում են նախանձայոյղ կաթ ուղիկ:

— ( ), աղաղակեց Լըբուհար, էդ տեսակ հերետիկոսները  
ամէնից աւելի վտանգաւոր են. նրանց միջումը կան էնպիսիներ, որոնք  
համարձակում են Կնիվիզիցիայի իշխանութեան դէմ յառնել:  
Մրանք են՝ Յովհաննէս Լիլիացին, Լուդովիկ Վրենադցին, Յով  
հաննէս . . . նա, որին ժողովուրդը անմտաբար ընծայել է այն  
պիսի յանգուզն անուն: Քայց նրանց ակնկալութիւնները չեն կա  
տարուիլ: Ես յոյսերն էլ, նրանք էլ կըլիջուին Կնիվիզիցիայի  
վէմի վրա:

— Քայց առ այժմ ժողովուրդը լսում է նրանց քարոզները,  
ասաց Քոզէն, առ այժմ հաւատում է նրանց:

— Արեւոր չե քաշիլ էդ, ասաց Խնկվիղիթօրը : Սուրբ Հայր պատր կրտեսնէ վերջապէս, թէ ինչ տեսակ մարդիք են սրանք, և նրանք, թէ և սրբազան աստիճանաւորներ են, կ'այրուին . . .

— Եդ քիչ է, ձերդ սրբազնութիւն, սառնութեամբ ասաց Արքուէսի սիրելին. սրմները բնաջինջ տներու համար պէտք է բոլորը արմատախիլ անել . քանի որ Իսպանիումը կրմնոյ դոնեան մին հերետիկոս, հերետիկոսութիւնը որ ըստ օրէ կրտարածուի նրա մէջ :

— Սենք արմատախիլ կ'անենք էդ սրմները, աղաղակեց Արքուէսը, մենք արմատախիլ կ'անենք նրանց էն հողերի հետ, որոնց մէջ բուսնում են :

Այսպէս խօսելով նրանք հասան Խնկվիղիթօրի բնակարանը :

— Դու մեզ հետ դալի՞ս ես, հարցրուց Արքուէսը իրա սիրելին մին ըսպէ կանգնելով դռան առաջը :

— Խնդրեմ ներէք ինձ, ձերդ սրբազնութիւն, ես վաղուեան համար պէտք է քարոզ պատրաստեմ :

— Քարոզեց յետոյ միասին կերթանք Արմեկտեան վանքը, լսում ես :

Խօղէն առանց պատասխան տալու գլուխ տուեց և դուրս գրնաց սարտեղից : Խնկվիղիթօրը և Ներիկէզը մտան ներս :

Փողոցումը Արքուէսի տան մօտ Խօղէին մօտեցաւ մին կին սև շորերով, և մտիկ տալով կրօնաւորի հագուստին տրամազին ձայնով ասաց՝

— Դուք, երևում է, Տէր, մեծ Խնկվիղիթօրի մերձաւորներիցն էք. հայր սուրբ, չէք կարօղ ինձ միջոց տալ Նորին Արքազնութեան հետ խօսելու :

— Դուք ո՞վ էք, զարմանալով հարցրուց Խօղէն. ինչի՞ համար էք ուզում տեսնել նորին սրբազնութեանը :

— Ես կամեցում եմ խնդրել իմ հօր համար, որ անիրաւացի համարուած է հերետիկոս, և հիմի բանտումն է . . . իմ հօր համար, որ էս քաղաքի կառավարիչն էր :

— Դօլորէս, աղաղակեց Արքուէսի սիրելին, հետաքրքրութեամբ մտիկ տալով ջահիլ աղջկոյ երեսին, որ կիսատ ծածկուած էր սև քողով :

— Դուք իմ անունը գիտէ՞ք, ասաց նա սարսափելով :

— Դօլորէս Արգօղօ, շարունակեց Դօմինիկեանը ցած և գորովական ձէնով, Դօլորէս Արգօղօ լիախիլ էս զարհուրելի տան

մօտից . հնտեղ պատրաստած է քեզ համար խայտառակութիւն  
և , կարելի է , մահ էլ :

— Ո՞վ . . . Քննե՛ց գիտէք դուք , հարցրուց օրիորդը զար-  
հուրելով :

Վասնինիկեանը բռնեց նրա ձեռքից և քաշելով տարաւ մեր-  
ձակայ թաղը :

— Որդեանկ իմ , ասաց նա , երբոր բուսական հեռացան Քնկ-  
վիղիթօրի պալատից . եթէ դու ուզում ես , որ քո հայրդ աղատուի ,  
Մըբուէսի աչքին մի՛ երևիր :

— Իայց , հարցրուց Վօլօրէսը մտերմութեամբ , որ աղբեց  
նրա մէջ Վասնինիկեանի երեսումը դրած կարեկցութիւնը և նրա  
գորովալից ձայնը , ի՞նչ անեմ . . . ի՞նչպէս կարող եմ ես աղա-  
տել իմ հօրը :

— Վաւ պէտք է թաքչիս մին տեղ , իսկ նրան աղատելու կը-  
հետեւիմ ես :

— Վա՛ւք , . . . բայց դուք ո՞վ էք , և ի՞նչ իշխանութեամբ  
դուք կ'աղատէք նրան :

— Ա՞ն ով եմ . . . ասաց Վասնինիկեանը դառն ժպի-  
տով : Կարելի է մին օր դու կ'իմանաս թէ ես ո՞վ եմ , բայց հիմի  
միայն կ'ասեմ , թէ քո առաջդ կանգնած է մարդ , որ քեզ հա-  
մար բարի է ցանկանում և որ մասնաւոր կարողութիւն էլ ունի  
քեզ օգնելու , մարդ՝ որ հասկանում է , թէ ի՞նչ է տարաբաղաու-  
թիւնը , հնդուր օր ինքը քաշել է :

— Վա՛ւք էլ , աղաղակեց Վօլօրէսը յափշտակեալ իրա ու-  
ղեկցի հետ ունեցած անյաղթելի համակրութեամբը :

— Իյօսքը հիմի ինձ վրա չէ , պէտք է հոգալ քո վիճակի հա-  
մար , որդեանկ իմ : Որտեղ ես ուզում թաքչիլ :

— Աս կրվերադառնամ Կարմելիտեանների մօտ :

— Ըստուած մի՛ արասցէ : Քնկվիղիթօրը իմացել է , որ դու  
էն վանքն ես ջոկել քեզ ապատանարան , և վաղը պէտք է երթայ  
հնտեղ քեզ միջացնելու համար :

— Աս ի՞նչպէս է կարացել իմանալ : Ախրը վարժապետը ,  
որ խնդրեց ինձ ընդունել էն վանքը , ո՛չ մին կուսի և ո՛չ մայրա-  
պետին էլ չ'ասաց թէ ո՞վ եմ ես :

— Ո՛հ , երեխայ : Մեթէ Քնկվիղիցիայի համար ծածուկ բան  
կայ : Իաց ՚ի գերեզմանից ոչինչ տեղ չի կարելի նրանից բան ծածկել :



— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած, հեկեկալով ասաց 'Վօլօ-  
րէսը :

— Ս'ազբ, աղաղակեց Քօղէն մոռանալով թէ վտղոցուքն են,  
վազբ, ահա՛ քո զոհերից մինն էլ :

— Վամաց խօսեցէք, հայր սուրբ, ասաց օրիորդը, դքմին կարօղ  
է մեզ տկանջ դնել :

— Ղշմարիտ ես ասում, քոյր իմ. Սեվիլիայումը ամէն տեղ  
լրտեսներ կան: Տայց մենք շուտով պէտք է բաժանուինք . . .  
Մ'ա՛, կրկին հարցնում եմ, ո՛ւր տեղ ես մտադիր քեզ համար ա-  
պաստանարան ընտրելու :

— ()՞, ինձ համար մի՛ նեղանաք, ես գիտեմ, ուր թաքչեմ .  
բայց, հայր սուրբ, կարօղ էք դուք, խոստանում էք աղատել նրան :

— Խոստանում եմ և երդում եմ էս բանի համար ինչ  
որ կարօղ եմ դորձ դնել: Այլ եթէ ես չ'աղատեմ քո հօրը, դու  
երբէք չես կարօղ աղատել, թէ և անձնազոհ լինիս :

— Հաւատում եմ ձեզ, հայր սուրբ, ասաց 'Վօլօրէսը աչ-  
քերը արտասուներով լքցրած և ճխտելով Քօղէի ձեռերը. հաւա-  
տում եմ բոլորով սրտիւ իմով . . . մենք էլի կրտեսնուե՛նք թէ  
չէ . . . ձեզ ո՛ւր դանեմ :

— Սէ՛, պատասխանեց Քօղէն: Տրիանի արուարձանումը Քի-  
տանների թաղի ծայրումը կայ մին պանդոկ, որի տէրն է Ալգուա-  
ղիլ անունը Մօկօ . . . Մն պանդոկին է ժողովարան մարդասպան-  
ների, գողերի, խիտանների, և հնախի կանանց, որոնց համար ա-  
նուն չկայ: Օղուելի և զարհուրելի է էս եղեռնագործութիւն-  
ների տեղը: Մնտեղ լուում են միայն լիբ խօսքեր, զարհուրեց-  
նող անէծքներ՝ և վայրենի ծիծաղ. հնտեղ ամենայն երեկոյ, հար-  
բած և գինովացած պատրաստում են աւաղակութիւն, սպանութիւն  
անելու, կանանց վախցնելու, սուտ մատնողութիւն անելու . . .

Քօղէն մէկ բոպէ լռեց:

— Այլ էն պանդոկումը . . . զարհուրելով հարցրուց 'Վօլօրէսը:

— Մն պանդոկումը, դո՛ւստր իմ, դու կը գտնես ինձ, պատաս-  
խանեց 'Վոմինիկեանը :

— Մտե՛ղ . . . ես պէտք է գնամ Կտե՛ղ . . .

— 'Մու խօմ յանձդ առել էիր էսօր գնալ Արբուէսի մօտ. —  
իակ նրա բնակարանը, հաւատա՛, հաղարաստիկ աւելի զարհու-  
րելի է էն աւաղականոցից, որ ես նկարագրեցի քեզ համար:

Արբ որ Խօզէն ասում էր էս խօսքերը, նրա աչքերը վառում էին մէկ տեսակ խաւարչտին կրակով, և նրա սպրանսած թըշերի վրա երեւցաւ մառգ կարմրութիւն. բայց յետոյ յանկարծ նա կարեկցաւ թեամբ մտիկ տուեց 'Ղօլօրէսին և ասաց նրան աւելի ցած, աւելի քողցր ձէնով՝

— 'Ղաւար իմ, դու համարձակ կարող ես գնալ էնտեղ, ուր կընշանակէ Խօզէն. քո հանդատութիւնը ինձ համար իմ անձնական հանդատութիւնից աւելի թանկ է: Պանդոկի տէր Ալգվազիլ Ղօհօն և նրա քոյր Չահիլ աղջիկը, որի անունը դրել են Չապա, բարեսիրտ մարդիք են և ինձ մտերիմ. դու կարող ես հաւատալ նրանց. և եթէ նրանք չեն թողնում հիմնիւայ իրանց արհեստը, պատճառն էն է, որ շատ աղքատ են:

— Բայց ի՞նչպէս, ասաց 'Ղօլօրէսը փոքր ինչ հանդարտութեամբ 'Ղամինիկեանի վերջին խօսքից, ի՞նչպէս հարցնեմ ես էնտեղ ձեզ համար:

— Հստ հեշտ. միայն կարող ես ասել Ղօհօյին կամ նրա քուերը, թէ կամենում ես տեսնել հայր Խօզէին:

— Եւ ես ձեզ կըտեսնեմ:

— 'Ղպատճառ: Միայն, որդեակ իմ, զգոյշ կացիր, միայն գիշերը դուրս արի, էն էլ էնպէս ծպտեալ, որ քեզ ճանաչել չըլինի. ամէնից լաւն էն է, որ գտնես շատ հասարակ աղջկայ շորեր:

— Չէր կամքը կրկնադարուի, հայր սուրբ:

— Հիմի բաժանուինք, ասաց Խօզէն, երբ մօտեցան Տրիանի կարմնջին: 'Ղու հատեղաց ո՞ւր կ'երթաս:

— Ենտեղ, պատասխանեց 'Ղօլօրէսը, ցոյց տալով 'Ղվադալկվերի միւս ասիը:

— Իսկ իմ ճանապարհն էս կողմն է, ասաց 'Ղամինիկեանը, ցոյց տալով խիտանների թաղը: Մնաս բարով, որդեակ իմ, յոյս ունեցիր ինձ վրա, բայց մի՛ մոռանար, որ ինձ համար հարցնել կարող ես միայն Ղօհօյից կամ նրա քուերից: Մնաս բարով:

Եւ խօսքից յետոյ նա գնաց դէպի խիտանների թաղը: 'Ղօլօրէսը գնաց դէպի վարժապետի տունը:





XII.

ԷՒ ՌԱՍՏՐՕ՝

Կամս Մրգօղջի աղջիկը , մտիկ չտալով Խօղէի բոլոր կարեկ-  
ցութեանը , լիովին միամիտ չէր իրա հօր միճակի համար , և ան-  
համբեր ցանկանում էր տեսնել վարժապետին , որի հովանաւորու-  
թիւնը հնրան հարկաւոր էր նրան հն բուսէին , և որին Կարմելե-  
տեանների մէջ մնացած բոլոր միջոցումը միայն մին անգամ էր  
տեսել :

Նրա էս ցանկութիւնը աւելի ստատկացնում էր էն հանգա-  
մանքն էլ , որ նա հնրան երկար ժամանակ չտեսնելով Ֆրանչիս-  
կեանին՝ ոչինչ չէր իմանում Կատէվանի մասին էլ : “ Չը ընի թէ  
բանտումն է նա , չը լինի թէ տանջանքումն է նա , , , . . . հստունք էին շատ  
անգամ կրկնում նրա մտքումը և նա զարհուրելով , արտասունք  
թափելով աշխատում էր հակառակը հաւատացնել իրան :

Արբոր Կօլօրէսը հասաւ Ֆրանչիսկեանի բնակարանի մօտ ,  
զարմանալով տեսաւ , որ էն տան փոքրիկ պատուհաններից բոլոր-  
լովին չէր երևում վարժապետի կանթեղե լոյսը . բայց պարտէղե  
փոքրիկ դուռը բաց էր , և խեղճ աղջիկը մտաւ պարտէղը : Նա  
դիտելիացրուց տան դուռը , բայց պատասխան չըկար և դուռը ոչ  
ով բաց չ'արաւ :

— Տէր Կտուած , նա տանը չէ , ասաց նա բեկեալ <sup>արցունք</sup> էս նոր  
տարաբաղդութիւնից :

Նա կրկն և կրկն դիտելիացրուց դուռը , բայց պատասխան չըկար :

Ղօշորէսը վստահացաւ ման գալ պարտեղումը, որ բաւական  
 մեծ էր, և որի մէջ առատութեամբ աճում էին պտղաբեր ծա-  
 ւեր և խաղող, ուր սովորաբար վաղում էին վարժապետի թոյլա-  
 տութեամբ շորից նեղացած ճանապարհորդները և երեխերը: Քայց  
 էս ման գալը սչինչ չ'օգնեց, պարտեղումը ոչով չէար. նմանապէս  
 որմին չէար, որ հարցանէր Գրանչիսկեանի համար, էնդուր որ նրա  
 բնակութեան մօտ չէար ոչ տուն, ոչ խրճիթ. կ'նչ պէտք է անէր  
 խեղճ աղջիկը:

Ղնալ Կարմելիտեանների մօտ.— բայց էնտեղ պատրաստ էր  
 նրա համար կորուստ: Ղնալ քաղաք, — բայց ուր, ում մօտ: Այր  
 ճանօթներիցը ո՛վ կը համարձակէր տալ նրան ապաստանարան, գի-  
 տենալով, թէ նրա հայրը Բնկիլիցիայի բանտումն է, և թէ ինքն էլ  
 էն դարհուրելի դատարանի հալածանաց տակն է: Ղնալ Ղօմիսիկեա-  
 նի ասած պանդոնկը. — բայց Խօղէն նկարագրեց էս շարադործների  
 բունը էնպէս, որ ներկայ բոպէխ նա չի համարձակուիլ էնտեղ  
 ապաստանարան լինարել:

Աս վստահացաւ էն բոլոր գիշերը անցիպցնել պարտեղումը  
 բայց երկնքի տակ, Արան չ'արգելեց էն միտքն էլ, որ նրա բոլոր  
 հագուստը բարակ ապրէշումեայ շոր էր և հիւսուածոյ վերարկու,  
 թէ գետի մերձակայութիւնը օդը խոնաւացնում էր, և թէ գիշերը  
 յանկարծ վեր կացած հիւսիսային քամից սկսում էր ցրտիլ:

Աս մտեց իրա երկայն մաղերը ուսերքի վրա, որ գոնեա՛ միքը  
 ինչ պաշտպանէ ցրտից, մաթթեց իրա գլուխը վերարկուով և ա-  
 դերասական աչքով մտիկ տալով երկնքին նստաւ բարձր ծառի տակ  
 յուսալով գոնէ մին բոպէ մտանալ իրա արտմութիւնը քնի մէջ:

Քայց քունը երկար ժամանակ չըխփեց նրա աչքերը: Յուրաք  
 քանի գնում էր աւելի զգալի էր լինում, և նրա ականջին ձայն էր  
 դալի, թէ որմին մօտենում է տանը: Յիրաւի ականջը չէր խա-  
 մուտ խեղճ աղջկան: Գրանչիսկեանի տան մօտ երբեմն երբեմն  
 լսւում էին ռաի ձայներ, — բայց սրանք ուշացած անցաւորների ռաի  
 ձայներ էին, և երբ նրանք հանդարտում էին, կրկին սկսում էր  
 տխուր լռութիւն, որ երբեմն ի միջում էր քամին, որ լիչում էր  
 ծառերի ծայրերին:

Ղօշորէսը քնեցաւ լուսադէմին, թալկացած դադրածու-  
 թիւնից և հոգւոյ սաստիկ յուզմունքից: Թախելիս նա համարեալ  
 թէ գողում էր ցրտից, բայց յետոյ քնի մէջ նրան թուեցաւ, թէ

բոլոր մարմնի վրա քիչ քիչ Թափուով է առողջարար ջերմութիւնը և նա տեսաւ զարմանալի կրակ :

Այս էր մին տեղ, հրաշակերտ շինուածոյ մէջ : Ան տեղ Թրու-  
չտուով էին ծաղկանոց և ուրիշ իրանոց ձևերովը անսովոր՝ բայց շքեղ  
առարկաների մէջ, որք զարդարանք էին տանը, հիանալի գեղեց-  
կութեամբ հրեշտակներ և օդային հողեր, իսկ որմնի աներեւոյթ  
ձեռք բարձրացնում էր գէպի հոյակապ կապոյտ գմբէթը իստա-  
ւոր ոսկի ջահ անթիւ մեղրամամներով, որոնք վառել էին ոգիները :  
Չահր բարձրանում էր աստիճան առ աստիճան, մամերը վառւում  
էին պայծառ պայծառ և վերջապէս բոլոր տան մէջ տարածուե-  
ցան խտորիչ լուսոյ հեղեղներ :

Բայց հէնց էս ոսկի ջահը դիպաւ գմբէթին՝ բոլոր դիւթա-  
կան պալատի մէջ զարհուրելի փոփոխութիւն իլաւ : Այրա ծաղ-  
կունքը և զարդարանքը կորան, հրեշտակների և օդային ոգիների  
թեւերը փշրուեցան ոսկի աւազի պէս, նրանց գեղեցկութիւնը փո-  
խուեցաւ այլանդակութիւն, նրանց մարմինները ստացան հրեշտային  
ձևեր միասին Թափանցելի դառնալով ինչպէս Թափանցական կար-  
միր քար և բոլոր պալատի մէջ տարածուեցաւ շնչասպառ տաքու-  
թիւն : Աօլորէսը կամեցաւ փախչիլ հնաեղեց, բայց նրա բոլորքը  
կխտուեցան հրեշները և նրանցից մէկը ուղղեց դէպ ՚ի նրա երեսը  
ապակի բոլորակ, որից դուրս էր գալի կիզողական տաքութիւն :  
Խեղճ՝ աղջիկը աղաղակեց և զարթեցաւ :

Աղղակի նրա երեսին ընկել էր արեգակը, որ վաղուց ծագել  
էր կապուտակ երկնքումը : Տաք ժամը մօտ էր . Աօլորէսը զար-  
մացած մտիկ տուաւ իրա շորս կողմը իբրու թէ քնումը ցրուած  
մտքերը հաւաքելու համար :

Շուտով նրա մտքումը կենդանացան անցեալ օրուայ բոլոր  
անցքերը, և տարաբաղդին կրկին տիրեց յուսահատութիւնը : Չի-  
որ նա ջահել էր, քիչ ծանօթ էր կեանքի հետ, անսովոր էր նե-  
ղութեանց :

Ան փոքր ժամանակ նա մնաց իրա զգացմանց ծանրութեան տակ  
ճնշածի պէս, յետոյ մտիկ տուեց տանը : Անտեղ ամէն բան նոյն  
դրութեամբ էր, ինչպէս երէկ, պատուհանները ծածկած էին, տան  
մէջ մեռեալ լուծիւն էր : Աւելի լաւ իմանալու համար Աօ-  
լորէսը վեր կացաւ, հաւաքեց իրա մազերը, ծածկեց դիւին մինչև  
՚ի աչքերը իրա վերարկուն, մօտեցաւ Ծրանչիսկեանի տանը և նոր

մէկանց դիտելիսկայրուց դուռը : Դ դուր, տան մէջ ոչով չկար :  
Վալորէսը աւելի լաւ հասկացաւ իրա միճակի բոլոր թշուառութիւնը . նա մնացել է անապատտան, առանց մին կտոր հացի, առանց պաշտպանութեան Խնկիլիզիցիայի հալածանքից :

Նրա բոլոր յոյսը մնացել էր Վազէի հետ պանդոկումը տեւտութիւն անելու վրա , բայց ինչպէս գնայ նա էնտեղ ցերեկով , էն փողոցներէից , որոնց մէջ ամէն քայլումը կարելի է հանդիպել զարհուրելի դատարանի սքիւրներին :

Արջապէս նա միճուեց էն օրը անցկացնել վարժապետի պարտիզումը : Արկար ժամանակ ման եկաւ ստուերախիտ ծառերի տակումը , ջանալով մոռանալ իրա քաղցածութիւնը , բայց քաղցածութիւնը քանի դուռմ էր աւելանում էր : Թաքուն գնաց Վալորէսի մօտ , ափով ջուր առաւ և քիչ խմեց : Աւանդ , ջուրը չըկազդուրեց նրա տկարացած ուժը :

Դստ անվերջ օրումը շատ մարդէք անց կացան Պրանչիսկեանի տան մօտից , մին քանիսը մտան էլ պարտէզը , բայց նրանցից սուր չէր կարծում , չէր կասկածում , թէ Վալորէս Արքօզոն Վալորէսիայի հարուստ իշխաններից մէկի ազնիւք , էն քաղաքի հին կառավարչի դուստրը անց է կացրել էս պարտէզումը ողջ գիշերը չոր գետնի վրա և հիմի թաք է կացել էնտեղ խիտ ծառերի մէջ յանցաւորի պէս :

Արջապէս էս օրը անց կացաւ : Արեգակը մտաւ հորիզոնի տակ և Վալորէսին թուեցաւ , թէ կարօղ է հիմի դուրս գալ իրա ամայի ապաստանարանից :

Ամէնից առաջ պէտք է մտածել շորերի համար , որ կարօղանայ նրան թաքցնել Խնկիլիզիցիայի սպասաւորների սուր աչալըջութիւնից : Նա յոյս ունէր իրա թանկագին ապրշմեայ շորերը և հիւսուածու վերարկուն փոխել հասարակ շորի հետ Ռոստրոմը , որի անունը երբեմն լսել էր :

Բայց թէ ի՞նչ էր Ռոստրո (1) , դուք էս ըտպէիս կ'իմանաք , բնութեցօղք :

Խիտանների թաղէ ծայրումը ԺՎ դարումը կար մեծ ծուռ հրասարակ , մին քանի շրջակայ ցեխոտ քուչաներով , որոնց մէջ

---

(1) վաճառանոց ուամկաց :

չինամ էին քաղաքի սպանդանոցներ: Աս հրապարակի մին կողմումը  
 աների մօտ շինամ էին մսալաճառների տախտակամամ կրպակներ  
 խրճիթների նման: Արանց առաջը մեծ երկաթեայ կեռերի վրա միշտ  
 քաշ արամ էին եղան, ոչխարի և խողի լեարդեր, թոքեր, պօլօճիկ-  
 ներ և ուղեղներ: Անտեղ էլ մեծ կեղտոտ ջրով լքցրամ տաշտերի  
 մէջ լող էին տալի նոյն կենդանեաց դուխները, ստերը և այլն:   
 Աս բոլոր զգուելի առարկաները հարուստները չէին առնում, և  
 տարածելով չորս կողմը գարշահոտութիւն՝ պատրաստում էին  
 Սեփիւկայի բամբակների համար:

Հրապարակի մէջտեղումը անհարթ փորփրամ քարայտակի  
 վրա ամէն տեսակ կտորտուքսի կոյտերի առջևը երկար շարքով նրս-  
 տոտամ էին գջլտամ շորերով պառաւ կնանիք:

Ասպիսի պառաւներ և նրանց առջևը ամէն տեսակ ծախելու բա-  
 ներ կարող էք հիմի էլ տեսանել Սեփիւկայի Քասաբոյի: Հիմի էլ  
 կրտեսնէք հստեղ հին ջնջոցներ, որոնք պէտք կ'ուզան միայն պատ-  
 րոյգի համար, թանկագին շորեր էլ, որոնք կարելի է մին երեւել  
 տիկինի էին, փայտեայ աման էլ, որի մէջից խիտանենք բան են  
 ուտում, արծաթեայ ոսկեզօծ սուրբի պատկեր էլ, որի առաջընա եր-  
 կրպագում է, կրտեսնէք հին մինչև յետին ծայրը մաշամ տղամարդի  
 գտակներ էլ, բուստի մանեակներ էլ, միա խարվելու շամփուրներ,  
 նրբաման վերարկուներ, թանկագին սափորներ, անունը չըտալու ա-  
 մաններ, գեղեցիկ զարդարամ ատրճանակներ, տուն աւելելու խո-  
 զանակներ, պատկերներ, և էլի Աստուած գիտէ ինչեր:

Աս տեսակ սպրանքների զանազանութեան վրա դուք աւելի  
 չէք վարմանալ, երբոր կ'իմանաք, թէ Սեփիւկայի Քասաբոյի շարքի  
 կանայքք միայն իրանց սեպհահան սպրանքը չեն ծախում, այլ և  
 յանձնառու են լինում ծախել ուրիշների ամենայն տեսակ սպ-  
 րանքն էլ: Արանց մօտ գալիս են երբեմն դաղտնի քողով ծածկուած  
 հարուստ տիրուհիներ էլ, որոնց բաւական տմարդութեամբ նե-  
 ղացնում են սպորտքատերերը, աղքատներ էլ, որոնք մին կտոր հացի  
 համար տալիս են իրանց յետին ցնցոտիքը:

Մեր նկարագրամ անցքի ժամանակումը Սեփիւկայի Քասաբոյի  
 վաճառականութիւնը հիմիկուանից շատ ընդարձակ էր, էնդուր որ  
 Անկիլիզիկայի արհաւիրքների ժամանակը էնտեղ ծախում էին հե-  
 րետիկոսների կայքերի մեծ մասը, որոնք հասնում էին նրանց մատ-  
 նօղներին: Աստեղ վտասհացաւ դնալ մեր Վօլօրիսն էլ:

Առաջ նա ուղեց յետ փախչել աղաղակներից և դարչահա-  
տութիւնից, որոնք էս զղուելի վաճառանոցի մշտնջենական սեպհա-  
կանութիւնն էին, բայց յետոյ շորերը փոխելու անշուշտ կարիքի մը  
աւածմունքը յաղթեց էս դիտաւորութեանը, և խեղճ աղջկիւր մօտե-  
ցաւ չարչիներից մինին, որ միւսներից աւելի ջահիւ էր, և որի դէմքը  
աւելի յուսալի էր երեւում: Բայց բոլոր շրջակայ պառաւանները տես-  
նելով, թէ իրանց ընկերոջ մօտ կանգնեցաւ մուշտարի, խիոյն հա-  
ւարուեցան Վօլօրէսի զլխին:

— Տիրուհի, ասաց նրանցից մէկը, գնեցէք ինձանից էս մարդար-  
տեայ քառամանեակը . . . փառաւոր թանկագին քառամանեակ  
է: Սա մին արքայազնուհւոյ էր, և նրա մեռնելից յետոյ ինձ ծա-  
խեցին, ևս ձեզ էժան կրտամ, կիսագնով . . .

— Ինչի՞դ է պէտք քառամանեակ, աղաղակում էր միւսը, լաւն  
էն է, գնէք ինձանից նրբաման հիւսուած . . . էնպէս լաւն է, որ  
խիլի տեսնուած չէ. ձրիի պէս կրտամ, հաւատա՛ ձրիի պէս:

— Ի՞նչ ևս պարծենում քո հիւսուածներով, ասաց երրորդը,  
ևս աւելի լաւն ունիմ:

— Սատանիք, մատանիք գնեցէք, աղաղակեց չորրորդը, գէտէք՝  
սա կրօնիկէ ձախորդութիւնից և չար աչքից . . .

Աս փերջի կնկայ գոված առարկան հասարակ ոսկի մատանի էր, վը-  
րէն փոքրիկ մարդոյ ձեռի նամանութեամբ, որի մատները մին նոր տեսակ  
ծաղուած էին: Իսպանիոյ ռամիկները հաւատում էին, թէ էս տեսակ  
մատանիները ունին էնպիտի զօրութիւն, ինչ որ ասում էր չարչին:

Վօլօրէսը թէև շատ տրտում էր, բայց էս պառաւի խօսքերի  
փրա ժպտեցաւ: Նրա բաղդիցն էր, որ էս ժպիտը ոչ որ չըտեսաւ,  
և թէ ոչ՝ խեղճ աղ ջկան վատ կրլինէր իրա անհաւատութեան համար:

— Ուրեմն դուք նրանցից ոչինչ չէք ուզում գնել, ասաց էն  
չարչին, որին մօտեցել էր Վօլօրէսը, ուրեմն գնեցէք ինձանից գո-  
նեա՛ էս փոքրիկ արձանը . . . սա, տիրուհի, ինձ հասել է մին  
բարեպաշտ մարդից: Վիտէք, նա ուզում էր օգնել մին խեղճ մար-  
դու, և փող չ'ուներ . . . էնգուր համար ծախեց ինձ, գիտէք,  
մենք նրան շարժապետ ենք ասում, և եթէ որմինի նրանից բան կը-  
հանի, նրա համար լաւ կրլինի . . .

— Սարժապետից, աղաղակեց Վօլօրէսը, մի՛ թէ դուք ձա-  
նայում էք նրան:

— Արքուհի՛ Մարիամ, ասաց փերեղակը, մեզանումը մարդ



կան, որ նրան չըճանաչէ: Աթէ երեխերբից հարցնէք, նրանք էլ կըճանաչեն: Ախր՞ վարժապետը ողորմած է նրանց վրա էլ:

— Կարելի է ձեզ յայտնի լինի, թէ ուր է նա հիմի, ասաց Պօլօրէսը:

— Ի՞նչ ես տսել ձեզ չեմ կարօզ, պատասխանեց չարչին, վարժապետը էստեղ էլ է, էնտեղ էլ է, և Վստուած գիտէ, ուրտեղ է: Իսկ երբ հարկաւոր է, նա իսկոյն էնտեղ է:

Իրեղձ աղջկայ իրա պաշտպանին համար մին բան իմանալու յոյսը անհետացաւ: Աւ նա միտքը բերեց, թէ պէտքէ շտապել շոբերը փոխելու:

— Չեր փոքրիկ արձանը, վախենալով ասաց նա, գնելու փող չ'ունիմ, բայց ինձ հարկաւոր են հասարակ շորեր, ինչոր հագնում են անանի քաղաքացուհիք: Աւ եթէ համաձայն էք փոխել իմ շորերիս հետ. . . .

— Չերերի՞ հետ, Տիրուհի, ասաց չարչին, սուր աչքով մտիկ տալով Պօլօրէսին գլխից մինչ ՚ի ոտքը, և իսկոյն զարմանալի ճշտութեամբ հաշուեց մտքումը, թէ ինչ կ'աժէ առաջարկած հագուստը:

— Չեր հիւսուած վերարկուի՞ հետ էլ:

— Հա՛, ՚ի հարկէ . . . փոխանակ իմ հիւսուած վերարկուիս կրտսք մին հասարակը . . . .

— Չարչի աչքերը փայլատակեցին, Վա աւելի տնտղեց Պօլօրէսի կերպասեայ կապան և միամտուելից յետոյ, թէ նա կոպարեալ է, ինչպէս ասում են դերձիկ կանայքը, թէ նրա կուրծքը և կրտսերը նոր են, — մնտրտելով դտաւ իրա առջևի կիտուածի մէջ մին կապայ ծիրանագոյն բրդեայ ճոթից և հասարակ սևագոյն ապրշմեայ վերարկու:

— Ըրդի տակից նոր են դուրս եկել, ասաց չարչին, տալով շորերը Պօլօրէսին, — և հէնց գիտենաս ձեզ վրա են ձեւած:

— Հա՛, կարծեմ որ իմ չափսին կ'ուզան, պատասխանեց օրիորդը:

— Աս գիտեմ, որ շնորհակալ կըլինիք . . . Սրեմն վեր էք առնում:

— Աթէ դուք համաձայն էք . . . .

— Արէ՛ն ինչ կ'ուտար:

Պօլօրէսը զարմանքից փէտացաւ: Նրա շորերը տասն ան-

գամ Թանկագին էին իրան առաջարկածից:

— Ինչի՞ մտածմանց մէջ մտար, շարունակեց փերեզակը, ի՞նչքան . . . .

— Բայց, Տէր Աստուած, վրէժն ի՞նչ կարող եմ տալ, երբոր ես ասացի, Թէ փող չ'ունիմ:

— Հա՛, Թէ որ հղպէս է, ուրիշ բան է . . . մենք նեղացնողներին չ'ենք: Գուք վեր առէք էս շորերը, իսկ վրէժն տալուն մը նայ ձեզ վրա պարտք . . . կը հատուցանէք երբոր փող կ'ունենաք:

— Բայց ո՛ւր կարող եմ ես շորերս փոխել:

— Ա՛յ, հնտեղ, իմ տանը: Իմ բնակարանն էլ հստեղ է . . . . Իստ ասելով նա տարաւ Վօլօրէսին մին կեղտոտ մութը սենեակի, որ էս կնկայ մասվաճառ մարդու կրպակի ետեւն էր:

Սենեակի մէջ գետնի վրա փռած էր անկողինն և դրած էր մին արկղ, որի մէջ մասվաճառի կինը սրահում էր իրա խառուխուռը:

Երբոր Վօլօրէսը շորերը հանում էր, փերեզակը նկատելով նրա վրա նրբաման քող, ասաց՝

— Գիտէ՞ք, տիրուհի, գուք խօ՛ փող չ'ունիք, ուրեմն տուէք ինձ վերագիր էս քողը. սա արդէն մաշուած է, և ինչի՞ պէտք ձեզ համար. հիմի սա յարմար չի գալ ձեր այժմեան հագուստին:

— Գուք ճշմարիտ էք ասում, սրատասխանեց Վօլօրէսը, հետեւելով յաղթել էն զգուանքին, որ աղդում էր նրան փերեզակի ազահութիւնը. — վէր առէք իմ քողը, միայն տուէք ինձ նրա փոխարէն մին բան, որով կարողանամ ծածկել վեղս, եթէ ո՛չ. ձեռն շորը հնպէս կոշտ է . . . .

Մասվաճառի կինը բերեց նրա համար բարակ կտաւեայ Թաշկինակի, որ Թէպէտ նոր չէր, բայց խտակ լուացած էր. Վօլօրէսը վեր առաւ:

Շորերը փոխելից յետոյ Վօլօրէսը մտիկ տուեց փոքրիկ կսկած կլայեկի տախտակի վրա, որ չարչի տանը հայելի տեղ էր բանում:

Կոշտ և ծանր շորերը բաւական լաւ Թարցնում էին օրիորդի մարմնոյ բարեկազմութիւնը: Վօլօրէսը փաթթուեցաւ իրա նոր վերարկուի մէջ և գուրս եկաւ սենեակից:

— Խնդրենք միւսանգամ էլ շնորհ բերէք, ասաց նրա ետեւից չարչին:

Բայց Վօլօրէսը չըլսեց էս վերջի խօսքերը և շտապով գնաց դէպ ՚ի խիտանների Թաղը:



XIII

ԻՒՏԱՆԻ ԹԻՆՈՒՄՆԵ

Կարգացողը 'ի հարկէ մետքը կը բերէ , թէ երբոր Վնրիկէզին Սեփեկայի նահանգապետ կարգեցին , նրա առաջի բանն 'իլաւ շատ մարդիք բանալ զնեւ : Վնկվեղեցլայի էն զոհերի կարգումը , որոնք տանջւում էին միայն լիւտերականութեան կարծիքի համար , կային մին քանի տատուածարաններ , որոնք երևելի էին իրանց ուսմամբ և բարեպաշտութեամբ , և մին քանի կանայք վառվառն հողւով , վատահ և կրթեալ հանճարով :

Իս հանգամանքը ստիպեց վարժապետին աւելի վախենալ լաստիվանի վեճակի համար , և նա համոզեց Վալորէսի նշանածին զնալ նրա հետ միասին փոքր ժամանակով Սան — Վիկար , ուր նա ցանկանում էր այցելութիւն անել աղքատներին :

Իստուր համար Վալորէսը սշուի չըգտաւ Պրանչիսկեանի տանը , իսց այսու ամենայնիւ , Պրանչիսկեանը այս նպատակաւ ճանապարհորդութիւններ շատ անգամ էր անում : Նա միօրինակ պատրաստութեամբ համնում էր ամէն տեղ , ուր նրաներկայութիւնը կարող էր օգուտ բերել : Իսկ նրա անսահման մարդասիրութիւնը միօրինակ բարերար էր ամենեցուն և իւրաքանչիւրոց համար , - քրիստոնէից և չրէից համար , խիտանների և մաւրերի համար , ոմանց նա սիրուիւմ էր խաղաղութեան և սիրոյ խօսքերով , ուրիշ

ներին տալիս էր օգտակար խորհուրդ, կամ օգնում էր, ինչով կարող էր:

Դատուր համար նրա անունը ջերմեռանդութեամբ էին յիշում բոլոր Մեդալուղիայում: Միմիայն « վարժապետ », անունը տալիս տարաբաղձների երեսը պարզում էր թեթե ժպիտով, և երբ Մեդալուղեան դեղերումը համբաւ էր տարածւում, թէ Ֆրանչիսկեանը գալիս է նրա առաջը դուս էին գալիս բաղմնութեամբ: Հիւանդները սպասում էին նրանից առողջութեան. մայրերը բերում էին նրա մօտ իրանց մանկուհիքը, որ օրհնէ նրանց բաղձաւոր ապրելու. աղքատները բնկնում էին նրա ոտքը և կաթոզին սրբատով համբուրում էին նրա հանդերձը:

Ի դուր ասում էր նա նրանց « մի ինձ, որդիք, մի ինձ, այլ նրան, մեր Մարչին, գոհութիւն և սէր », — ժողովուրդը չէին հեռանում նրանից:

Հենց հասկա իլաւ նրա հիմնկուայ Մէն — Ի խիտր գնալն էր: Մին օր, երբոր Դատիվանը սովորականից աւելի էր զարմացել Ֆրանչիսկեանի վարժապետութեանը վրա, հողեորականը ասաց նրան՝

— Հիմի դու տեսնում ես, որդեակ, թէ ինչպէս հեշտ է դարձում էս ժողովրդեան մէջ բարութեան զգացմունքը, և կարող ես դատել, թէ ի՞նչ կրլինէր, եթէ սրանց հետ ուրիշ կերպով վարուէին, երբոր դրանց վրա ազդէին ոչ թէ Ֆրանսաիական միջոցներով, ոչ թէ տանջանքի երկիւղով, այլ հեզ համոզմամբ և բարեբարութեամբ:

— Հա՛, պատասխանեց Դատիվանը, դժուար չէր լինիլ էս վառվառն և պուհտական ժողովրդին բաղձաւորել:

— Իսկ էս էլ պէտք է աւելացնես, որդեակ, էս հանձարեղ, էս բարի ժողովուրդը եթէ ուրիշ հանդամանքներումը լինէին, սրանց համար անհնարին չէին լինիլ խորին և ճիշտ միտքեր. նրանք կրլինէին առաքինի, եղբայրական սիրով կրքնակուէին իրարու հետ. իսկ այժմ Ինկվիզիցիայի դժնէութեան տակ ի՞նչ են սրանք: Այ՛ եթէ իմ կոչումը չըլլինէր . . . .

— Օգուշ կացէք, հայր իմ, ասաց Դատիվանը, դառն ժպիտով, նոցին սրբազնութիւն Ալֆօնս Մանրիկը և Պետր Աբրուէսը կարող են ձեր աստիճանին մտիկ չլաւ, ինչպէս մե՞ծ Ինկվիզիթօր Տօրկուհմազան մտիկ չլաւաւ Կալագորիոյ և Սեզովիոյ

եպիսկոպոսներէ աստիճանին (1) :

— Տօրկուեմադան , պատասխանեց Ֆրանչիսկեանը հառա-  
չելով , տանջող էր , բայց գոնեա՛ չէ կարելի բամբասել նրան ա-  
նառակութեան մէջ : Վիտեա , թէ նա ի՛նչ էր անում իրա կա-  
տայի ֆանատիզմի մէջ : Հերետիկոսի վճիռը գրելիս նա չորսձ ա-  
ղօթք էր անում և խարաղանով ծեծում էր իրա անձը (2) :

— Ա՛հ , հայր իմ , կըհաւատա՛ն արդեօք էս բանին , կըհա-  
ւատան արդեօք հիմիկուայ անգթութեանց մին քանի դարերից յե-  
տոյ , երբ ուրիշ տեսակ դատողութիւն կ'ունենայ ժողովուրդը :

— Կըհաւատան , բայց կըցաւին զո՛հերի համար . մեր ժամա-  
նակի մոլորութիւնները դաս կըգառնան ապագայից համար . . . .

Իսս խօսակցութեան վերջին մեր ճանապարհորդները հասան  
մին փոքրիկ գիւղ , որ Խաղանիոյ ուրիշ շատ գիւղերի նման շինած  
էր բարձր սարի վրա . էս տեղումը կոչին մին քանի տասնեակ ցածր  
տներ կարմիր կամ կանաչ գունով ներկած և փոքրիկ եկեղեցի  
բարձր զանգակատունով :

Քառական ուշ էր , երբ ճանապարհորդները մտան այս գիւղը :  
Գիւղացիք իրանց տափերից յետ դարձած հանգիստ իրիկուայ հաց  
էին ուտում իրանց տներումը և գիւղի նեղ ձախուծուռ քուչումը  
երևում էին մին քանի կիտատկոր երեխէք , որք խաղում էին կի-  
սորաց գոների առջևն : Իսս մանկուները , որոնք վարժապետին տեսել  
էին իրանց կենաց մէջ մին կամ երկու անգամ , չըճանաչեցին նրան

(1) Մեծ ինկվիզիթօր Տօրկուեմադայի էս երկու եպիսկոպոսներէ  
դատապարտելու հանգամանքը տե՛ս մեր Թարգմանած Ինկվիզիցիայի  
պատմութեան մէջ մասն V, գլուխ 4 :

Ծանո՛ լարէ՞ :

(2) Տօրկուեմադի ֆանատիզմը հաւատար էր նրա անգթութեանը ,  
կամ լաւ ևս ասել նրա անգթութիւնն էր ծնունդ ֆանատիզմի :  
Հերետիկոսներին դատապարտելից առաջ Մըրադոնեան Ֆերդի-  
նանդի խօստովանահայրը սովորաբար մին փոքր ժամանակ պաս էր  
պահում և էնքան ծեծում էր իրա անձը խարաղանով , մինչև բո-  
լոր մարմինը արևնաթաթախ էր լինում :

և դէմ չըվագեցին : Ճանապարհորդները առանց որմինից ճանաչուելու անցան քուչի կէսը , յանկարծ նրանց մտադրութիւնը ընկաւ մին պղտիկ և հին տնակի վրա :

Իս տնակի մէջ կար մին ժողով , էնտեղից լուում էին արանց և կանանց ձայներ , որոնք ինչպէս երևում էր , խօսում էին և վիճում էին մէկ մեծ բանի վրայ : Յայտնի երևում էր , թէ տան մէջ մին անսովոր բան է անցկենում :

Յանկարծ աղաղակը մին փոքր լուեց և ճանապարհորդները պարզ լսեցին կնիկաբամաթի սուր ձայնով ասած հետեւեալ խօսքերը՝

— Ախրը շատ ժամանակ չէ , որ ես տեսի Պարլոյին , էս օր առաւօտ : Եւ բոլորովին առողջ էր :

— Իստեղ մին տարաբաղդութիւն կայ , ներս մտնենք , ասաց Պրանչիսկեանը բաց անելով տան դուռը , որ հազիւ էր կանգնած կրնի վրա :

Իստեղ մինը գնաց նրա ետեւից :

Խորձիթը , ուր նրանք մտան , շատ կեղտօտ էր . նրա մէջ մեռելի մամերի լուսի մօտ հաւաքուած էին քսանի շափ խիտաններ , ոյր , կին և երեխայ : Նրանք շրջապատել էին մին բաւական ջահիլ խիտանի , որ նստած էր աթոռի վրա : Իս խիտանը զարդարուած նոր շորերով շատ դեղնած էր և ըստ երևութիւն քնած էր : Արժապետի և նրա ուղեկցի մտնելիս ժողովականները հետ չըքաշուեցան խիտանից , բայց պառաւ կնանիքից մինը բերեց Պրանչիսկեանի համար փոքրիկ աթոռ , որ մին սեղանի հետ միասին բաղկացնում էր խորձիթի բոլոր հէ՛կը : Պրանչիսկեանը նստաւ , Իստեղ մինը կանգնեցաւ նրա մօտ :

— Իս ի՞նչ են անում էստեղ , հարցրուց Ղօլօրէսի նշանածը Պրանչիսկեանին :

— Թաղումն է , պատասխանեց վարժապետը :

— Բայց ո՞ւմն են թաղում էստեղ :

— Ա՛յ , էն նստած խիտանին : Ախրը նա մեռել է : Տէս էլ ինչ կըլենի :

— Իս խօսքից յետոյ սենեակի միջև տղամարդկերանցից մինը մօտեցաւ մեռելին , դրեց նրա ծնկան վրա Մանդօլինա (պղտիկ գիտառ) և սկսաւ բարձր ձենով խոստովանել իրա յանցանքը , ինչքան արեւ էր իրա ընկերներից վերջինի թաղման օրից դէս : Իս խոստովանքից յետոյ նա ասաց մեռելին՝

— Հիմի, Պարլո՛, եթէ ինձ պէտք է պատուել, խաղա՛ և խը-  
լացրո՛ւ ինձ, եթէ չէ՝ — ժած մի՛ դար և ես կ'իմանամ, որ իմ  
մեղքը ներած է։

Յայտնի բան է, որ մեռելը չըխաղաց և խիտանը շատ ուրախ  
հեռացաւ։

— Օգորմանալի թաղումն է, քչիչալով ասաց Ղասէվանը  
իրա ուղեկցին։

— Ղա դեռ սկիզբն է, որդեակ, պատասխանեց Տրանչիսկեանը։  
Հիմի միւսներն էլ նրա օրինակին կը հետեւին։

Եւ յիրաւի, բոլոր ներկայ գտնուողները կարգաւ մօտեցան մե-  
ռելին և հրապարակաւ խոստովանեցան իրանց մեղքերը։

Ղա հանդէսի ժամանակը վարժապետը, որ բժշկականութեան  
տեղեկութիւն ունէր, անբժիթ մտիկ էր անում մեռելի երեսին։  
Երբոր խոստովանութիւնը վերջացաւ, նա կամաց ասաց Ղասէ-  
վանին՝

— Ղա մեռելի անդամները սնց որ է փախուկ են երևում,  
երեսի գոյնն էլ հասարակ մեռելի պէս չէ։

— Գորդ որ, կիսաձայն պատասխանեց Ղասէվանը, նմանա-  
պէս նուրբ աչքով մտիկ տալով նստած մեռելին։

Բայց ոչ մինը չըխարացին շարունակել իրանց նկատողութիւն-  
ները։ Խիտանին՝ որի վրա կատարում էին թաղման ծէսերը, մօ-  
տեցաւ ջահիլ աղջիկ և սկսաւ նրա առջևը խաղալ սիրադրդիւ պար-  
մին քանի բուպէից յետոյ տան միջի բոլոր համազգիքը ձեռք ձեռքի  
բռնած պար բոլորեցին և սկսեցին խաղալ։ Առաջ նրանց պարը  
հանգարտ էր, իբրու թէ յարմարելով ածելու հանգին, բայց յե-  
տոյ նրանց շարժմունքները զօրացան և բոլորը սկսան պտուտ գալ  
սենեակի մէջ։ Ղա զօրմանալի վալը (պարը) քանի գնում էր  
արագանում էր. յանկարծ պար եկողները աղաղակեցին, ձեռքերը  
բաց թողին և հաւարուեցան խաղացող աղջկերանցից մինի գլխին։  
Տրանչիսկեանը և Ղասէվանը նմանապէս մօտեցան տեսնել, թէ  
ինչ է պարի ընդ միջելու պատճառը։ Պատճառ էն էր, որ  
էն աղջկայ գօտիկը բանտ էր ընկել մեռելի կրկնոցի մե-  
տաղեայ կոճակին և քաշել էր իրա ետեկից։ Մին փոքր ժամանակ  
նա մնաց համարեալ թէ անշունչ, յետոյ յանկարծ վազեց և մե-  
ռելը վեր ընկաւ։

— Ա՛խ, վառ նշան է քեզ համար, իմ գեղեցիկ, ասաց մին

պատաւ կին:

— Հա՛, ասաց միւսը, Մարիկայ, քո գլխին լաւ բան չի գալ . . . . ախրը եթէ մեռելը վեր ընկնի մէկի վրա, էստեղ լաւ բանի յոյս չէ կարելի ունենալ . . . . էստուրից մահ էլ կը պատահի:

— Աչինչ չի ընել, աղաղակեց խօսողի հարեանը, եթէ Մարիկան բոլոր գիշերը չըհեռանայ Պարլոյից:

— Մեռելի՛ց, ասաց ջահիլ աղջիկը, ամենեին, թէ և աշխարհը ինձ տան . . . . չէ՞ որ գիշերը կըգան սպանիչը Պարլոյին տանելու: Իչի ուրիշ բան է, եթէ որմին մնար էստեղ, ախրը մինակ . . .

— Ի՛ն է է, ասաց մին ջահիլ բարձրահասակ տղայ, քաղցր աչքով մտիկ տալով աղջիկան, թէ կարելի լինէր, ես կըմնայի քեզ հետ, Մարիկա, հսկելու:

— Ա՛չ քեզ, ո՛չ ուրիշն չէ կարելի, պատասխանեց Մարիկան լալով: Իսկ քան թէ ես մնամ մէնակ Պարլոյի հետ լաւն էն է մեռնեմ:

Իսս միջոցումը Գրանչիսկեանը մօտեցաւ մեռելին, կռացաւ և բարձրացրուց նրան: Մեռելի երեսին բացուել էր փոքրիկ վերք, որից արիւն էր դուրս գալի: Իսս տեսնելով վարժապետը ասաց խիտաններին՝

— Արդէք, դուք 'ի զուր էք խղճում Մարիկային. Պարլօն դեռ կենդանի է:

Խիտանները վախենալով յետ քաշուեցան: Նրանք առանց վախի պարտէին գալի մեռելի բոլորքը, բայց շունչի եկած մեռելը ահ գցեց նրանց վրա: Երբոր նրանք կարծեցեալ մեռելից յետ քաշուեցան, վարժապետը և Իստէվանը նստեցրին նրան առաջւոյ պէս աթոռքի վրա, յետոյ վարժապետը հանեց իրա գրպանից փոքրիկ շուշայով սպիրթ (ոգի), որ միշտ հետն ունէր, և մօտեցրուց Պարլոյի թթին, իսկ Իստէվանը սկսաւ ուժով մերսել նրա ձեռերը: Մին փոքր ժամանակից յետոյ կարծեցեալ մեռելը աչքերը բաց արաւ, և նրա երեսը յանկարծ սաստիկ կարմրեցաւ: Վաթուածքի առաջը առնելու համար, որ էն ըսպէին գալու վրա էր, Գրանչիսկեանը երեսի վերքի արեան ընթացքը շատացրուց, և հրամայեց Իստէվանին մերսել ոտները:

Իսս հնարքները օգնեցին. Պարլօն արձակ շունչ քաշեց և զարմանալով մտիկ տուեց չորս կողմը:



Խիտաններին մին քանիսը տեսնելով, թէ նա խկապէս կենդանանում է, դուրս վազեցին և ցրուեցան գիւղումը էս անցքը պատմելու, խկ միւսները չորեցան:

Պարջոյի ուժը յետ եկաւ. նա վեր կացաւ աթոռից և համբուրելով Ֆրանչիսկեանի ձեռք, ասաց՝

— Իս էլ չէի ապրել, եթէ դուք չըլինէիք, հայր սուրբ:

— Ինչուր համար գոհացիր Աստուծանից, պատասխանեց վարժապետը . . . . .

Իս միջոցումը խիտանները դուրս վազեցին խրճիթից, հրատարակեցին էս հրաշքը, և գիւղի բոլոր բնակիչները, նաև երեխները հաւաքուեցան էն տան առաջը:

Խիտաններին բաժնուելու ժամանակը Ֆրանչիսկեանը բաժանեց նրանց վոքը ինչ վող և խորհուրդ տուեց աւելի առաքինի ապրել: Ի խոր սրտէ շարժեալ խիտանները խոստացան ուղղել իրանց վարքը: Արանք միշտ ջերմեռանդութեամբ լսում էին էսպիսի խորատները, բայց յետոյ իրանց բնածին հակամիտութիւնների, իրանց արմատացեալ սախրութիւնների և իրանց աղքատութեան աղղեցութիւնովը շուտով մոռանում էին:

Հէնց մեր ճանապարհորդները դուրս եկան էն անից, գիւղի բնակիչների խուռը ամբոխը շրջապատեց նրանց: Սակայն էս բազմութիւնը շուտով ցրուեցան և ամէն մարդ, ովոր կարիք ունէր յայտնել վաժապետին, միջոց ճարեց խօսել նրա հետ: Ֆրանչիսկեանը ոչ մինի խրնդիքը անտես չարաւ: Ոմանց սորվեցրուց հիւանդութե գեղեր, ոմանց հանդարտեցրուց և մխիթարեց, խիտա աղքատներին բաշխեց վող, — որը որ էնքան հազուագիտ էր Խապանիացւոց գիւղականաց մէջ, որ շատերը մանր արծաթները շատ թանկագին բանի պէս ծակում էին և իրանց շորերի վրա կարում էին կոճակների տեղ: Մխիթարելով տարաբաղդներին և օգնելով աղքատներին նա խորհուրդ էր տալի ամէնքին, չըտրանջալ հանգամանքի վրա, այլ համբերութեամբ հնազանդել իրանց վիճակին, էնդուր որ, ինչպէս նա ասում էր, վիշտը և տրտունջը միայն աւելի ծանրացնում են տանջանաց բեռը:

Արժապետի էս տեսակ ճշմարիտ և իրկարար դատողութեան վրա Իստեվանն էլ էր զարմանում, որի կարծիքը շատ բանումը անհամաձայն էին նրա իդէաների հետ:

— Հա՛, մտքումը ասում էր նա, էսպէս պէտք է լինին բա-

բեկարգօղները, նրանք պէտք է ընթանան անընդմէջ, հաստատ, բայց ծանր և զգուշ:

Վիւղացւոց և Ֆրանչիսկեանի մասը բարով ասելու տեսարանը շատ սրտաշարժ էր. ամէն կողմից օրհնութիւններ էին լսոււմ, ոմանք լաց էին ըլլում, ոմանք չորում էին . . . .

— Ֆրանչիսկա — ասաց մին ջահիլ մարդ իրա կնկան, երբոր վարժապետը բաւական հեռացած էր, — մեր երեխան բաղլաւոր կը լինի . . . ախրը վարժապետը նրա վրա մտիկ տուեց, և նրա ձեռքն էլ պաշտարաւ:

— Իստարի մենք կարող ենք լաւ առատութեան յոյս ունենալ, ասաց միւս գեղացին, վարժապետը մեր արտերի կշտից անցկացաւ:

— Իսկ ես ուրախ եմ, ասաց երրորդը, էնգուր որ մեր հայրը կանդնեցաւ իմ դրան առաջը. ես իսկապէս գիտեմ, որ իմ առնալ կրակ չի ընկնի:

— Հայր մեր, ասաց Ֆրանչիսկեանին գիւղի ծայրումը մին ջահիլ կին երկուորեակ երեխէրքը դրկին՝ Դու իմ մարդուն ճանաչում ես . . . նրան էս օրհնումս դրին Ինկիլիզիցիայի բանաջ, իսկ նա անմեղ է:

Վարժապետը տխրած աչքը բարձրացրուց դէպ 'ի երկինքը:

— Արդեա՛կ, ասաց նա յետոյ էն կնկան, յոյսդ դիւր Մատուծոյ ողորմութեան վրա . . . Նա ձեռաց չի թողնիլ տարաբաղդներին . . . Նա, ես գիտեմ, կ'օգնէ ինձ էլ, ազատել քո մարդին բանտից . . . և հաւատա՛ս, իմ դուտոր, ես քեզ չեմ մոռանալ . . . .

Իստ մտիթարական խօսքերով վերջացաւ վարժապետի էն գիւղի այցելութիւնը, նա բաժանուեցաւ իրա օրհնաբան գիւղացիներէից և Իստիվանի հետ գնաց դէպ 'ի էն տաղաւարները, որոնք գիւղից վտրը ինչ հեռու շինել էին հովիւները: Նրանք մնացին էն գիւղեր էն տաղաւարներէ մէկումը:



XIV.

ԵՒԻ ԽՕՉԻ:

Հիմի վերադառնանք Վօլօրէսի մօտ, որին Թողինք պանդոկի ճանապարհումը :

Խիտանների Թաղի ծայրը հասնելից յետոյ նա առանց դժուարութեան գտաւ հն իրան հասկացրած տունը, որի վրա կար նշանահիար :

Ին ըոպէին պանդոկումը գեռ շատ հիւրեր չբկային : Արա մէջ նստած էին մին քանի Վամինիկեաններ, և առանձին սեղանի մօտ մին մարդ և մին կին բաւական հին շորեր հագած : Իս վերջինները ուտում էին սոխ սև հացի հետ, և ծարաւը կոտրելու համար նրանց առաջը դրած էր պնակով շատ ստոր գինի :

Վօկոյի պանդոկումը, ուր վառած էին մանր ճրագներ, որոնք սովորաբար շարած էին վնում պատկերների առջևը, ձկնուձուձն չբկար : Իս հանդարտութիւնը փոքր ինչ սիրտ տուեց Վօլօրէսին, և խեղճ աղջկիը վստահացաւ ներս մանել :

Սեփիլոյի սրիկանների (լօթիների) ժողովատեղի շէմբից ոտը ներս դրած Վստէվանի նշանածը ուղղակի մօտեցաւ Չապոյին, որ նրա բաղդից կանգնած էր իրա խահանոյի դրան մօտ : Չապան իսկոյն ճանաչեց Վօլօրէսին, երբոր նա ետ գցեց իրա վերարկուն :

որով մինչև երեսի կէտը ծածկած էր: Ղօլորէսն էլ լաւ մտիկ տալով Ղօկոյի քուերը ճանաչեց թէ ով է նա, և երկու քայլ յետ թռաւ:

Մեկնայի նահանգապետի աղջիկը տեսաւ, թէ մտեցել է էն աղջկայ մօտ, որ քիչ ժամանակ առաջ դործիք էր էն դաւաճանութեանը, որ քիչ մնաց նրան կորցնում էր, էն աղջկայ մօտ, որ բերեց Ղստէվանի անունով շինուի բարեազիրը:

Ղօկոյի քոյրը պաղատական աչքով մտիկ արաւ նրա երեսին, և յետոյ յանկարծ արխարար բռնեց նրա ձեռից և իբրու թէ համբուրելով ուրախ ձենով ասաց՝

— Արջապէս եկար դու մեզ տեսութիւն, Ղննա՛, քիչ մը նայ որ քեզ չըճանաչէի, քուրիկ, երբոր դու ներս մտար. ախր ինչքան ժամանակ է մենք ջնք տեսնուել: Ղնանք, հոգիս, իմ սենեակը, ասաց նա քաշելով Ղօլորէսին խահանոցը, դու ինձ կըպատմես իմ սիրելի մօրաքուեր համար, քո սիրելի եղբարց համար:

Ղօկոյի հիւրերի հետաքրքիր հայեցումներից թարգմտեց յետոյ Ղօլորէսը վրդոված և ախուր նստաւ խահանոցի անկիւնումը դրած աթոռի վրա: Ինչ ըսպէին Չապան կուացաւ և նրա ակննջից ասաց՝

— Բոլորովին հանգիստ իլէք, տիրուհի՛, ես աւելի շուտով իմ կեանքս կըզոհեմ, քան թէ քեզ կըմտանեմ . . . միայն խնդրում եմ ձեզանից, խօսեցէք ինձ հետ իմ ճօրագուեր լրտ, ձեր եղբարց լրտ, եթէ ոչ, կարծիք կըտանեն:

Արբոր նա էս խօսքերն ասում էր, Ղոմինիկեաններից մինը գինի պահանջեց: Չապան խկոյն կատարեց նրա հրամանը: Ղիւնին տալից յետոյ նա անցկենալով սոխ ու հաց ուտող կնկայ մօտից, իբրու թէ անչափ ուրախացած, ասաց նրան՝

— Աթէ դուք գիտենայիք թէ ինչ լաւ աղջիկ է իմ քոյրը, . . . և ինչպէս լաւ պատահեցաւ, որ նա եկաւ ինձ տեսնելու:

Ինչ կինը ժպտեցաւ և ոչինչ պատասխան չըտուեց. շատ չանցկացած էն կնկայ հետ նստող մարդը վտղը տուեց և դուրս գնաց պանդոկից, կինն էլ նրա ետեւից. բայց գնալիս նա մէկ ըսպէ կանգնեցաւ Չապայի մօտ և կամաց ասաց նրան՝

— Աթէ քո քուերը հարկաւոր լինի օգնութիւն, դու գիտես, ուր տեղ կարելի է գտնել ինձ և իմ ընկերոջը, . . .

Չահիլ աղջիկը զարմանալով և վախենալով մտիկ տուեց նրա երեսին:

— Այս գիտեմ, ո՞վ է քո քոյրը, ասաց կինը առանձին շեշտ խփելով ով բառին:

— Ղանեւս սքովինի մի՛ ասէք, թէ նա ո՞վ է, ասաց Վօկոյի քոյրը:

— Ղեռ խրատներ էլ է տալի, ասաց անծանօթ կինը, դեղեցկութեամբ ուսերը բարձրացնելով: Մի թէ, ինձ յայտնի չէ, որ եթէ լեզուիցս թռցնեմ, մեղաւոր կըլինիմ վարժապետի մօտ, որ նրան սիրում է իրա հարազատ աղջկայ պէս. ես ինքս էլ սիրում եմ նրան քուեր պէս: Միայն դու մտիկ տուր, չըմտանաս. եթէ մե՛նք հարկաւոր կըլինինք նրան, խփոյն արի մեղ մօտ, . . . խի առ այժմ մնաս բարով:

Այս խօսքից յետոյ նա և իրա ընկերը, որ էս խօսակցութեան ժամանակը սպասում էր դրան մօտ, դուրս գնացին պանդոկից:

Այս կինն էր — սիրենան, նրա ընկերն էր Վանօֆինան:

Չէ՛նց նրանց ետեւից գռները ծածկուեցան, Ղովինիկեաններից մինը, որ փոքր ինչ հարբած էր, կանչեց իրա մօտ Չապային և ասաց՝

— Այս ինչի՞ցն է, որ մեղ չ'ես ցոյց տալի քո քուերը, տիրուհի: Ի՛նչ, նա էլ քեզ պէս սիրո՞ւն է:

— Ի՛նչ ցոյց տալ, պատասխանեց Վօկոյի քոյրը, նա մարդու երեսին մտիկ տալն էլ վախենում է:

— Մեկի լաւ . դու ինձ կամք տուր գոնեւ մին աչքով նըրան տեսնել . . . .

— Արտեանէք յետոյ, երբ կըհանդատանայ . ախի՛ր նա, Մստուած գիտէ, ի՛նչքան է ման եկել . . . դադրել է:

Այս խօսակցութիւնը ընդմիջեց քսանի չափ արհեստաւորների գալը, որոնք իրիկուայ հաց պահանջեցին: Օտրմանտի արագութեամբ էս նոր հիւրերի առաջին հրամանները կատարելից յետոյ, Վօկոյի քոյրը մօտեցաւ Ղօլօրէսին, որ հիմի փոքր ինչ միամըտուել էր նրա կողմանից:

— Չապայ, կամաց ասաց նրան Աստիվանի նշանածը, դու ճանաչո՞ւմ ես հայր Խօղէին:

— Հայր Խօղէի՞ն, նմանապէս կամաց պատասխանեց Չապան, ինչպէս իմ եղբայր Վօկոյին: Ի՛նչպէս մարդ է էս հայր Խօղէն, տիրուհի, անասելի բարի. նա երէկ եկաւ էստեղ և ասաց ինձ իմաց տալ իրան, երբոր դուք հարցնէք նրան:

— Ո՞՛հ, ասաց Ղաօլօրէսը, ազատ շուէնք քաշելով, ուրեմն նա ինձ չըխափեց:

— Իսկ ինձ, տիրուհի, ասաց Չապան համարեալ թէ լաց ըլելով, հիմի ինձ էլ հաւատում էք . . . վերջապէս ինձ ներում էք . . .

— Ներում եմ, պատասխանեց Ղաօլօրէսը, թէ և դու ինձ մեծ չարիք հասցրիր:

— Ո՞՛հ, ես ինքս չէի հասկանում, թէ ինչ էի անում էն ժամանակը: Ինձ հրամայում էին, և ես հնազանդում էի . . . հնազանդում էի էն դուր համար, որ չըկարչիմ . . .

— Ինչ՞ էր ինչ . . . քեզ կանչում են, դնա՞ք հիւրերի մօտ: Չապան տարաւ ինչ որ պահանջում էին և էլի եկաւ Ղաօլօրէսի մօտ:

— Աս քաղցած եմ, կամաց ասաց Ամս Մ. ըզօղօյի աղջիկը, և ոչ չառ քաղցած եմ, Չապան:

— Տէր Մտուած, և մինչև հիմի բան չէիք ասում: Ի՞նչ կամենաք, Տիրուհի:

— Ինչ որ դու կ'ուզես: Աս դեռ էս օր ոչինչ չեմ կերել:

Աօհօյի քոյրը էն բուսէին բերեց մին սկահակ շօկօլադ, որ նա միշտ պատրաստած պահում էր մուշտարիների համար: Հէնց նա խմեց էն շօկօլադը, պանդուկից լսուեցաւ բաւական բարձր շշուճ: Ղաօլօրէսը մտիկ տուեց կիսաբաց դռնից:

Ինչ որ հիւրերը կանգնած էին յարգանօք, և նրանց միջից նազաբայլ, նաև գոռոզաբար, անց էր կենում Ինկվիզիթօրի սիրելի Խօզէն: Այն պատիւը տուին նրան երկու կամ երեք Պրանչլակեան կարգի կրօնաւորներ էլ, որոնք նրանից վոքը ինչ առաջ մտել էին պանդուկը: Խօզէն ուղղակի մտաւ խահանօքը:

— Մ. ըզէն էստե՞ղ էք, ասաց նա տեսնելով Ղաօլօրէսին:

— Մ. ըզէն, պատասխանեց Ամս Մ. ըզօղօյի դուստրը համեստութեամբ: Ո՛վ, հայր իմ, հո բառը վոքը ինչ նման է երգիծանքի: Չլինի թէ դուք արդէն վաշխմանել էք, որ խոստացաք ինձ օգնութիւն և հովանաւորութիւն:

— Ա՛ս, հարցրուց Մ. ըրուէսի սիրելին, երբէք, ևս իմ խօսքից յետ չեմ կանգնում և կրկատարեմ: Ինձ միայն զարմացրուց ձեր գալը: Չէ որ դուք ինձ երէկ ասացիք, թէ ունիք յուսալի ապաստանարան . . .

— Հիմ, իմ հայր. բայց նա, որի մօտ ես յոյս ունեի ապաստան գտնել, նա հասեղ չէ . . . նա, կարելի է, մեռած էլ է. Այլ ես անցեալ գիշերը անցկացրի բայց երկնքի տակ: Ասկայն ես կատարեցի ձեր հրամանը շորերի մասին, այ՛ մտիկ տուէք:

— Ղուբ խոհեմութիւն էք արել, իմ դուստր: Հիմի առաջուանից աւելի մեծ վտանգներ են սպառնում ձեզ, սակայն դուք մի՛ վրդովիք, ես հնարքներ գործ կ'ածեմ, և — յաւելացրուց նա դառն ժպիտով, — 'ի հարկէ ոչոք կ'ստեղծ չի տանիլ թէ Ղուբի նիկեան կրօնաւոր Ասողէն գտել է ապաստանարան էն աղջկայ համար, որին հալածում է Ինկիլեղեցիան:

— Բայց, հայր իմ, ասաց Ղալօրէսը անհանդուստութեամբ, ի՞նչ ապաստանարան էք մտադիր ընտրել ինձ համար:

— Արեւում է, դու ինձ չես հաւատում, Ղալօրէս, հարցրուց Ասողէն մտիկ տալով նրան հնազանդ հայեցումքով, որի մէջ հոգւոյ այնքան բարութիւն, այնքան կարեկցութիւն էր երևում, որ Ղալօրէսի աչքերը արտասուէնքով լքցուեցան:

Ո՛ր, ներեալ ինձ, ասաց նա ձեռնամուծ: Հիմ, ես մեղաւոր եմ ձեր առաջը, հայր իմ . . . տարարադդութիւնը ինձ կ'ստեղծուի է արել, և ես մի՛ն վայրկեան կ'ստեղծեցի ձեզանից . . . բայց ձեր հայեցումքը ցրուեց իմ կ'ստեղծները, դուք չէիք կարող հնազանդ կաթաղին մտիկ տալ ինձ, եթէ ցանկայիք իմ կորուստը . . .

— Խեղճ, միտմի՛տ երեխայ: Ղու հաւատում ես իմ հայեցումքին, միայն մի՛ն հայեցումքին: Բայց ի՞նչն է քեզ երաշխաւոր, թէ ես էն մարդկերանցից չեմ, որոնք բարութեան քողի տակ ծածկած ունին վագրի սիրտ: Մի՛ թէ ուրիշ ոչինչ, մի՛ թէ ոչինչ նախադրացումն չէ ասում քեզ, թէ ես քեզ սիրում եմ եղբոր պէս, թէ քո նեղութիւնը իմ սեպհական նեղութեան պէս դժուարատար է ինձ համար:

— Տնօրինեցիք իմ վիճակը, ինչպէս կ'ամիք, ասաց Ղալօրէսը, չորեւրով էս չնշխարհիկ մարդու առջևը: Աս իմ անձս յանձնում եմ ձեր իշխանութեանը, հայր:

Ղու միտմի՛տ գեղնած և լիոքը ինչ լղար երեւից վաղեցին երկու կըստ արտասուք:

Մին քանի ըստէ լռութիւն տիրեց:

— Աս, ասաց յետոյ Ղալօրէսը լիոքը ինչ քաշուելով, մի՛ն խնդիրք էլ ունիմ ձեզանից:

— Այ՛ն, պատասխանեց Արօղէն, համարեա՛ թէ հասկանալով թէ ի՛նչ է ուզում խնդրել աղջիկը :

— Այո, հայր իմ, նշանած եմ մին ջահիլ տղայի հետ . . .  
Ղօն Աստիճան դէ Արդասի հետ . . . .

— Գիտեմ, ասաց Ինկիլիլիթօրի սիրելին, խեղդելով իրա սրտումը ծանր հառաչանքը : Այդ մասին միտմիտ կայ, դօն Աստիճանը վտանգից ազատ է :

— Ուրեմն դուք նրա՛ն էլ էք ազատել, հարցրուց աղջիկը ուրախութեամբ :

— Այո չէ, այլ Աստուածային հախախնամութիւնը . . .

Այս երկար խօսակցութիւնը, որ կիսաձայն շարունակուում էր ջահիլ Ղօմմինիկեանի և ջահիլ աղջկայ մէջ, ամենեւին կասկածելի չ'երևեցաւ պանդոկի բաղմամբիւ հիւրերին, — էնքան մեծ էր էն ժամանակը Ինկիլիլիցիայի յարգանքը : Այս հիւրերը, որոնց ծառայում էր ճարպիկ Պապան, հանդարտ ուտում և խմում էին : Խօսակցութեան վերջին և կաւ Աօկօն : Արօղէն կանչեց նրան իրա մօտ և ասաց՝

— Դու պէտք է ճանապարհ գցես ինձ և էս աղջկանը մինչև քաղաքի ծայրը :

— Գլխին վրա, հայր իմ, պատասխանեց Աօկօն խորը գլուխ տալով միայն համարձակուում եմ յայտնել, ես կարծում եմ . . . այսինքն ինձ թուում է . . . էստեղ շատ հիւրեր կան, ուրեմն անցկենալ նրանց մօտից էս տիրուհիի հետ յարմար չ'ի լինիլ . . .

— Արանց մօտից անց կրկենանք միայն ես և դու, ասաց Արօղէն, իսկ նա դուս կ'երթայ փոքրիկ դռնից . . . էն դռնից, որ բացուում է գէպի մեր փոքր քուչան :

Այս ասելից յետոյ Ղօմմինիկեանը դուրս գնաց պանդոկից : Հիւրերը առաջուայ պէս ոտի կանդնեցան նրա անց կենալիս . . . մինքանի ըսպէից յետոյ քուչումը նրա ետեից հասաւ Աօկօն : Արանք միասին գնացին փոքր քուչան, ուր սպասում էր նրանց Ղօլօրէսը :

— Հիմի դուք չէք վախենում յանձնուիլ ինձ, ասաց նրան Արօղէն :

— Ամենեւին, հայր իմ, պատասխանեց Աստիճանի նշանածը կուռը նրա կռանը անցկացնելով :

Այլ նրանք կամաց գնացին մութը քուչայից, Ղօլօրէսը և Ինկիլիլիթօրի սիրելին կարգով, իսկ Աօկօն նրանց ետեից :





XV.

ԿԱՐՄՆԻ ԻՏԵՆՆ ԿՈՒՍՆՆԵՆՅ ՎԱՆԻՔԻ :

Երբոր Վալորէսը վախենալով նստած էր Կոկոյի պանդոկումը , Կարմելիտեան կուսանաց վանքումը բաւական հետաքրքրութեան արժանի տեսարան էր : Բայց էս տեսարանը նկարագրելից առաջ , ներեցէք մեզ ծանօթացնել ձեզ էն կուսանոցի մայրապետի հետ :

Դա մայրապետն էր բարեկազմ գեղեցիկ կին , փոքր ինչ սպրտնած երեսով , մութ կապուտ աչքերով , սև երկայն թերթերունքներով և վարդագոյն կարմիր պաօշներով , որոնց կազմութիւնը յայտնի ցոյց էր տալի նիւթասիրութիւն , բայց նրա մէջ տիրող կիրքն էր հպարտութիւնը : Նա պարծենում էր իրա հին ազգատոհմի վիհազնութեամբ , որի ազդեցութիւնը տուեց նրան մայրապետի կոչումը թէ և տախաւին ջահիլ էր : Նա աւելի պարծենում էր նա իրա աստիճանով , որի արտօնութիւնները նրա աչքումը քիչ էր մնացել , որ հաւասարուել էին թագաւորի արտօնութեանը . էնգուր համար և կուսանքի միջոցն էլ սիրում էր նրանց՝ որոնց կեղծաւորութիւնը աւելի էր յարգում նրա անձնասիրութիւնը :

Դա մայրապետի անունն էր Փրանչիսկա Վերմ , որ քսան և չորս տարեկան էր :

Ին երեկոյին , երբ Վաստէվանի նշանածը հաւատարով անձնա-

աւար եղաւ Խօղէի հովանաւորութեանը, Գրանչխակայ Վերմ նստած էր իրա աւելի սիրական Կարմելիտեաններէ մէջ: Նա նստած էր փառաւոր Թաւիշեայ գահէ վրա, որ գրած էր բարձր բեմի վրա շրքեղ հովանիի տակ: Նա շորերը իրա կոչման համեմատ էին. կուրծքի վրա քաշ էր արած մեծ սոկի խաչ, գօտիի վրա զմբուխ տեայ և խոշոր մարգարակ տէր ողորմեա և մատի վրա փայլում էր մեծ անդամանդեայ մատանի: Նա սիրական կուսանքը ձեռագործները ձեռքերին նստուած էին բեմի աստիճանի վրա: Արանք խօսում էին Գօշորէսի վրա:

— Գուք ի՞նչ կասէք, Աւարայ, հարցրուց Գրանչխական կուսերից մէկին, ի՞նչ էք կարծում, ի՞նչը ստիպեց էդ աղջկան իրա շէլ մեղանից:

— Նա, պատասխանեց Կարմելիտեանը, հաւատացէք, ես չեմ իմանում, ի՞նչ պէտք է կարծել: Սակայն կարելի է նրան հստեղ բերել էին հոգևոր կորուստից և երկուստ սիրոյ գայթակղութիւններից ազատելու համար և նա կրկին անձնատուր իլաւ նրանց...

— Զրկարծեմ, ասաց մայրպետը: Նա շատ համեօա էր, և մանաւանդ ինձ յանձնեց նրան շատ հաղուագիւտ բարեպաշտ մարդ:

— Ի՞նչքան ամուսնելի է, ասաց մին շատ ջնջիլ կոյս, ինչ պէս ամուսն է, որ նա զոհ մատնեց իրա անձը աշխարհային ալէկոծութեանց: Ո՛ր կարելի է հստեղից աւելի բաղգաւոր լինիլ:

— Գոհացէք, դուստր իմ, բաղգից՝ որ գտնեա՞ դուք ինքներդ կարող էք կենալ հանդարտ և բարեբաղդ, փոքր ինչ սաստկութեամբ ասաց մայրպետը:

Զահիլ կոյսը Թաքցրուց իրա հառաչանքը և խօսքը փոխելու համար ասաց Գրանչխակային ցոյց տալով նրան իրա ձեռագործը՝

— Ի՞նչ գրք սկալի ծածկոցը հաւանում էք, Թէ չէ: Այս կարծեմ որ մեր Սեփիլիայումը հօպէսները շատ ջրկան:

— Ես պատուական է, պատասխանեց մայրպետը: Ոսկի ծաղիկները կարած են խիստ լաւ: Կատարինէ, ասաց նա յետոյ մին ուրիշ կուսի, որ Թաքուն տնտղում էր մին գիրք, էդ ի՞նչ է ձեռքիդ:

Կատարինէն կարմրեցաւ և գիրը գրպանը դրեց:

— Ծոյց տուէք ինձ, ի՞նչ Թաքցրէք, ասաց Գրանչխակայ Վերմը սպառնական ձէնով:

Կատարինէն, որի ծագումն էր հին և երկելի ազգատոհմից, և որ փոքր ինչ երես առած էր մայրպետից, նեղանալով տուեց

դիւրը մեծաւորին:

— Իս լիւտերական աստուածաշունչ է, ասաց մայրապետը:

— Ի լիւտերական . . . յանկարծ աղաղակեցին մին քանի կուսանք:

— Իս ո՞վ տուաւ ձեզ, Աատարինէ, հարցրուց Ֆրանչիսկայ

Ի կրմը:

— Իմ հօր եղբայրը, պատասխանեց Աատարինէն. նա բերել էր Ֆրանչիսկայից, ուր գնացել էր նա իրա զօրքով . . . . .

Մայրապետը մտածմանց մէջ մտաւ:

Յանկարծ դահլիճի մէջ լուեցաւ զանգակի ուժղին ձայն:

— Աւրա, ասաց Ֆրանչիսկայ Ի կրմը, որ էս զանգակի ձայնից զարթեցաւ իրա մտածմունքից, տեսէք էն ո՞վ է: Ես էսօր ոչովի գալուն չեմ սպասում . . .

— Իրաւ, էդ ո՞վ պէտք է լինի . . . և էսքան ուշ . . . ինչե՛ համար էս ժամանակիս . . . ի՛նչ կարիք պէտք է ունենան մեզ մօտ . . . ասում էին իրարու Աորմելիտեաները, որոնք էնքան սովոր էին միայնակեցութեան, որ ամենայն հասարակ դիպուած նրանց համար խորթ էր թուում:

Աարան վեր կացաւ իրա տեղից և պատրաստուել էր մայրապետի հրամանը կատարելու, բայց դեռ դրանը չըհասած, ասորչմեայ վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ մին Աորմելիտեան կոյս, ձեռին բռնած մեծ արծաթեայ սկուտղ, որի վրա դրած էր նամակ: Աարան առաւ կուսի ձեռից սկուտղը, մօտեցաւ բեմին, չըքեցաւ աստիճանի վրա և բարձրացրուց սկուտղը հնպէս, որ մայրապետը առանց դժուարութեան վեր առնէ նամակը: Ֆրանչիսկայ Ի կրմը վեր առաւ, բաց արեց և դեռ մինչև վերջը չըկարդացած յանկարծ վեր թռաւ իրա տեղից և ասաց իրա սիրելիներին՝

— Բոյրեր, նորին սրբազնութիւն մեծ Ինկվիզիթօր Ա.Ր. բուհը արժանացրել է մեզ իրա այցելութեանը, մենք պէտք է առաջ գնանք նրան:

Նամակ բերող կոյսը Ֆրանչիսկայի նշանացի հրամանովը դուրս գնաց դահլիճից և խկոյն մայրապետը իրա բոլոր սիրելիներին ընկերութեամբ գնաց վանքի դուռը ընդունել նորին սրբազնութիւնը:

Շուտով եկաւ Արքուէսն էլ դահաւորակով: Իրօղէն հեարջէր: Ես հիւանդութիւն էր պատճառել, բայց կարդացողներին յայանի է, թէ ո՞ր էր նա էդ ժամանակը:

Երբ Ինկվիզիթօրը հասաւ Կարմելիտեաններին, մայրապետը և բոլոր կուսանքը չորեքան և ընկալան նրա օրհնութիւնը, յետոյ տարան նրան վանքի մեծ դահլիճը, ուր խնայն դրուեցան երկու փառաւոր դահլիճներ — մինը Արքուէսի և մյուսը մայրապետի համար: Արանք բաղմեցան: Արքուէսը ժանկոտուած էր, նրա աչքերից բարկութիւն էր կաթում:

— Աս պէտք է ձեզ հետ առանձին խօսիմ, ասաց նա Պրանչեսկային, բարկութեամբ մտիկ տալով նրա սիրելիներին:

Պրանչեսկայ լերմը նշանացի հրամայեց, և կուսանքը դահլիճից դուս գնացին:

Ինկվիզիթօրը վեր կացաւ տեղից, իրա ձեռով կողակց դուռը և կրկին նստեցաւ մայրապետի մօտ:

— Սեղէք, ասաց նա յետոյ սպառնալից ձէնով. իմ էս վանքը վերջն անգամ դալուս, ես հարցրի ձեզանից, թէ չըկայ արդեօր ձեր կուսերի կամ ունկնդիրների մէջ հնախիտի աղջիկ, որին ես տեսած չըլինիմ: Դուք ինձ ասացիք թէ չըկայ:

— Աս ձեզ ճշմարիտե ասացի, ձեր սրբազնութիւնը տեսել էք և կրճանաչէք բոլորին:

— Բայց ինչի՞ համար թաքցրիք ինձանից մին աղջիկ, որին դուք էն օրից փոքր ինչ առաջ ձեզ մօտ սպաստանարան էիք տուել:

— Աս նրան ձեզանից չեմ թաքցրել. երբոր դուք եկաք մեզ այցելութիւն, էն ժամանակը նա սենեակների մէջ չէր պատահել. բոլորն էս է: Իսկ նրա համար ես չըխօսեցայ ձեր սրբազնութեան հետ հնդուր, որ նա ոչ կուսերի և ոչ ունկնդիրների կարգումը չէր, որոնց համար դուք հարցրիք:

— Իսկ եթէ ինձ յատուկ նա էր հարկաւոր:

— Միթէ կարօղ էի ես էդ կարծել:

— Մի և նոյն է կարող էիք թէ չէ: Ինչ աղջիկը հստեղ է, և ես կամենում եմ էս ըստէիս տեսնել նրան:

— Ինչ աղջիկը հստեղաց փախել է, — փախել է չըգիտեմ ինչի՞ համար և ինչ պատճառաւ, որովհետեւ ես նրա հետ վարուում էի բուեր պէս:

— Փախել է՞, մոլեգնաբար աղաղակեց Ինկվիզիթօրը, դուք հիմի ասում էք, թէ նա փախել է հստեղաց: Այլ դուք յոյս ունիք այդպիսի դարտակ ստայօդ խօսքով ինձ խաբել: Դժուրէս Արքուէսը հստեղ է, և դուք էս ըստէիս կըհրամայէք նրան հստեղ

դալ . . . լսում էք թէ չէ :

— Դձօրէս Արգօղճ, ասաց մայրապետը : Ինչ աղջկայ ա-  
նունը , որի համար դուք հարցնում էք , բոլորովին հղալիս չէր :  
Նրա անունն էր Մարիամ . . . նա որք էր . . . նրան յանձ-  
նեց ինձ բարեպաշտ քարոզիչ Ալեյի Յովհանէսը , որին ամէնքը  
վարժապետ են անուանում :

— Յովհանէս Ալեյի՞ն , կրկնեց Խնկվիզիթօրը : Թէ որ հղ-  
ալիս է , ես էլ չեմ զարմանում , թէ էս դորժումը , հէնց զի-  
տենաս , ամէնքը խօսք են կտպել իմ դէմ . . . Յովհանէս  
Ալեյի մեր թշնամիների համարբումն է :

— Իսոյց նա ինչ է արել ձեզ , ասաց մայրապետը , միայն  
ամէն բանի դէմ առանց նպատակի վիճելու կանացի ցանկութիւնից  
ստիպուելով :

— Նա ինձ ինչ է արել . . . և դուք հարցնում էք  
էդ բանը ինձանից՝ Մեվիլիայի մեծ Խնկվիզիթօրից , երբ զիտէք որ  
նա և նրա հետեւողները քարոզում են ժողովուրդին Խնկվիզիցիայի  
հակառակ հոգւով , և ամէն բանումը մեզ հակառակ են գնում :

— Ինչ անենք , որ քարոզում են . չէ՞ որ իշխանութիւնը  
ձեր ձեռին է . . . .

— Դուք աշխատում էք փախչել հնգուրից , ինչ որ պարտա-  
ւոր էք կատարել : Կրկնում եմ՝ հրամայեցէք էն աղջկան , որի հա-  
մար ես հարցրել էի ձեզ , էս բոպէիս գալ հստեղ :

— Ես արդէն յայտնեցի ձեր սրբազնութեանը , պատասխանեց  
մայրապետը նեղանալով , թէ էն աղջիկը փախել է վանքից . . .  
կամենում էք դուք հաւատալ իմ խօսքին , թէ ոչ :

— Տրանչիսկա . . . աղաղակեց Խնկվիզիթօրը սպառնալից աչ-  
քերով մտիկ տալով նրան :

— Պէտք Արբուհս , պատասխանեց Տրանչիսկայ Վերմը , որի  
երեսը յանկարծ վառուեցաւ սաստիկ կարմրութեամբ , — մի՛ թէ  
դու կարծում ես , թէ ես պարտական եմ պահել քու սիրեկան-  
ներին : Փնտրէ՛ նրան ինքդ քու սքիւրներով :

— Դձօրէսը հստեղ է , և ես ուզում եմ նրան տեսնել ,  
ասաց Արբուհս որոտաձայն :

— Դձօրէս Արգօղճն վանքումը չէ , պատասխանեց Տրանչիս-  
կան սառն դժնէութեամբ , և եթէ հստեղ էլ լինէր նա , ես չէի  
տալ նրան ձեզ . . . լսում էք թէ չէ , տէր մեծ Խնկվիզիթօր

Անվերայի:

— Անդրան . . . դու գիտես, ումն ես ասում էի խօսքը, դու գիտես ես ճշ եմ:

— Աս մինակ մին բան գիտեմ, թէ դուք էնպէս մարդ էք, որի համար ոչ խղճմտանք կայ, ոչ պատիւ:

— Այլ մտայե՞լ էք, թէ ես իշխանութիւն ունիմ դատելու և պատժելու: Միտքդ չե՞ս բերում քս գործերը, որանք կարող են քեզ թանկ նստել:

— Իսկ ո՞վ վաւրուց ինձ, ո՞վ դցեց ինձ անդունդի մէջ, եթէ ոչ դու . . . . .

Մայրապետը երկար ժամանակ խօսեցաւ տաքացած: Այն խօսելու ժամանակը ինկիլիզիթ օրը պատահամբ տեսաւ մին աթոռի վրա լուտերական աստուածաշունչը, որ մտայմամբ թողել էր էնտեղ Պրանչիսկայ Լերմը: Արբուէսի գլխումը ծնաւ դեռ բոլորովին չըկազմած բայց չար խորհուրդ և նա կամայ թաքցուց աստուածաշունչը իրա վերաբիւրի տակը:


Պրանչիսկան ատելութեամբ բորբոքած չըտեսաւ էս գողութիւնը:

Աս բոպէին Պրանչիսկան հիանալի գեղեցիկ էր. նրա աչքերը վառւում էին, նրա երեսը փայլում էր կենդանի կարմրութեամբ, նրա կուրծքը սաստիկ բարձրանում և ցածրանում էր. . .

Արբուէսի աչքերը ակամայ տնկուեցան նրա վրա: Բիչ քիչ էս վավաշոտ և երբեմն սիրեցեալ կնկայ կերպարանքը առ ժամանակ հանեց նրա մտքից Աօլօրէսի պատկերը. Կնկվիզիթօրի բարկութիւնը հանգաւ և նրա տեղը բռնեց ուրիշ զգացողութիւն. . .

— Պրանչիսկա, ասաց նա բռնելով նրա ձեռքիցը . . .





XVI.

ՄԵԼՕԳԻԱՅ

Արժատեար Լսակ վանի հետ միասին Մեմլիայի շրջակայ շատ  
 աղքատ գիւղերին այցելութիւն անելից յետոյ, կամեցաւ հարստ  
 վերջացնել իրա ճանապարհորդութիւնը: Աս համարեալ թէ բո-  
 լորսին յոյս չունէր ազատել Կանս Երգողոյին հն կորուստից, որին  
 դատապարտել էր նրան Ինկիլիզիան, որ արգէն պատրաստում էր  
 իրա զորհուրելի փայտակոյտները. բայց նա կամենում էր գտնէ փոր-  
 ցել: Ընճնական ասրահալութեան համար չէին հոգում ոչ նա և  
 ոչ Լսակ վանը, որ նոյն կարծիքը ունէր Վալորէսի հօր համար:  
 Երկուսն էլ միայն հնդուր համար էին վախենում կորցնել իրանց  
 ազատութիւնը, որ նա հարկաւոր էր ուրիշներին փրկելու համար:

Երեկոյեան վեց ժամի մօտ էր, երբ նրանք մտան Մեմլիայ:  
 Փողոցներումը խառնուած էին շատ բազմութիւն. էս ժամանակին  
 Վալորէսի կեանները և Մեմլիայի ուրիշ հոգևորականները բաժանում  
 էին աղքատներին Մեշտիայ և աղքատները մէկ մէկու առաջքը  
 կտրելով վազում էին նրա համար:

Տրանսիսիտները և նրա ընկերը մօտեցան **Շարհայ** (1) (դե լա Մէրէյի) վանքին, որի դռանը հաւաքուած էին խիստ շատ աղքատներ:

— Կանդներք էստեղ մին ըօպէ, ասաց Արժապետը, մինչև որ էս ողորմելիները կշտանան:

Նրանք հեռացան փոքր ինչ ժողովուրդից և կանգնեցան սլափի մօտ, որտեղաց կարօղ էին տեսնել բաժանելը: Անքի դըրանը բազմութիւնը սաստիկ խռնուած էր. ամէն մարդ ուղում էր առաջ անցնել, ամէն մարդ խօսում և աղաղակում էր, և էս խօսակցութեան ձայնը, էս աղաղակները խռնուելով իրարու հետ դառնում էին զարհուրելի գոռում: Կարծես թէ էստեղ վազում էին ուտելիքի վրա ոչ թէ մարդկանց ամբոխ, այլ քաղցած շների փաղանգ:

Յանկարծ էս գոռումը փոխուեցաւ ուրախական աղաղակների և բոլոր բազմութիւնը, կարծես թէ, դառաւ մին մարմին հազարաւոր գլուխներով միևնոյն կամքով և միևնոյն նպատակի վրա պրծած:

Անքի դռները բացուեցան, երկու ջահիլ և առողջ ունկընդիրներ դուրս բերին հաստ փայտի վրա քաշ արած մեծ պղնձեայ կաթսայ, որի մէջ դեռ եփ էր գալի մէլօպիան: Հէնց նրանք դուսեկան բազմութեան մօտ, խկոյն տարածուեցան դէպ ՚ի նրանց ամէն կողմից ձեռեր փայտեայ պնակներով, որոնց մէջ ածում էին բաժինը, և էն ըօպէին ամէն կողմից լսուեցան սրածայն աղաղակներ և վայրենի գոռումներ: Կարծես թէ բազմութիւնը ուղում էր խլել կաթսան նրանց ձեռքից. բայց էն ըօպէին եկաւ երրորդ ունկընդիրը ձեռքին մեծ շերեփ բռնած և բարձր ձէնով բղաւեց՝ — Մ. լա Քիլա — տեղերդ: Բոլորը յետ քաշուեցան մրմաւլով շների պէս,

(1) Շարհայ կարգի անդամները Բօմբեիկեանների կանոններովն էին վարում: Եւս կարգը նոր սկսելիս շատ օգտակար էր. նրա անդամները ողորմութիւն էին հաւաքում և յետոյ գործ էին ածում Աստվածեան երկրներումը մնացած քրիստոնեայ գերիների աղատութեան համար: Նրանցից մին քանիսը ուղարկած լինելով Մլժիր էս տեսակ աղատութեան համար իրանք մնացին գրաւ էն գերիների տեղ, որոնց չըկարացին փողով ազաւել: Յետոյ էս կարգը սկսաւ ողորմութիւնները իրա համար բանեցնել:



որանց բերնից ոսկորները խլել են:

— Ամէնքիդ կըհասնի, լուռ կացէք, կրկին աղաղակեց ունկընդիրը, որի շորերը հնապէս կեղտոտ էր, որ չէր կարելի զանազանել թէ ինչ կտորից կամ ինչ գունից է:

Իսա դիւթական խօսքերը մունձ կացրին ժողովողին: Քաժա նուսը սկսաւ, ամէնքի պնակները միաչափ էին, և հնդուր համար ոչ ունի գրկողութիւն չ'էլաւ:

Քայց ինչ բանի էին սպասում նրանք հարան մեծ անհամբերութիւնով . . . . ինչ զատ էր էս Մէլօպիան:

Իր զգուելի խառնուրդ վանքի ճաշի աւելցուքսի, — խառնուրդ մին կտոր ճրագուով կամ եղով պղտոր ջրի մէջ եփած հացի կըտորտանքի, կրծած ոսկորտանքի, ձկան գլուխների, բանջարեղինաց կեղևների և այլն: Ի հարկէ հսպիսի կերակուրը կըվայելէր միայն շներին, բայց քաղցածութիւնը ամէն բան ուտել կըտայ և բոլոր էս ժողովուրդը զարհուրելի քաղցած էր . . . ամէնը ուտում էր իրա բաժինը մեծ ախորժանօք մին բնախը և անուշահամ բանի պէս: Քայց նա՛ որ նրանց կերածը գիտէր, տրտմութեամբ էր մտիկ տալի իսպանիոյ ժողովողի վրա, որ հասել էր հարան զարհուրելի աղքատութեան:

— Տէ՛ր Աստուած, ասաց Իսաէվանը, 'ի զուր աշխատելով հասկանալ, թէ ինչն'ց է շինած էս զգուելի կերակուրը, որ էրած ճրագուի գարշելի հօտ էր տարածում, — և սրանք ուտում են էս:

— Ա՛չ թէ մէնակ սրանք, որդեակ, տխրութեամբ պատասխանեց Ֆրանչիսկեանը, ո՛չ թէ մէնակ սրանք են կերակրւում շուռայլ ճաշի էս տեսակ մնացորդներով, այլ և հստուրով կերակրւում են գոնեան շորերդ մասը բոլոր իսպանիոյ բնակիչներին:

— Մի՛ թէ, աղաղակեց Իսաէվանը:

— Իս զազրալի կերակուրը, շարունակեց վարժապետը, տալիս են աղքատներին. բայց կայ ուրիշ տեսակ Մէլօպիայ էլ . . . հարուստների համար:

— Ի՞նչ ինչ է, հարցրուց Իօլորէսի նշանածը:

— Դու կամենում ես իմանալ, որդեակ, թէ ինչ է, լսէ՛ք Երբ որ հարուստը հիւանդանում է, շատ անգամ խորհուրդ է հարցնում իրա խոստովանահօրից: « Իս տանջւում եմ », ասում է հիւանդը: « Ախտ դիր », պատասխանում է խոստովանահայրը: Իս ուխտը սովորաբար էն է, որ հարուստը խոստանում է մին

վայր ժամանակ ողորձ-վիճակ ապրել :

Բայց թէ ի՞նչ էր էս ողորմութիւնը , որդեակ : Խաղանիւայի ամէն վանքումը հարուստը ստանում է առողջարար և առատ սեղան ձրի . բայց յետոյ , երբ առողջանում է , նա մեծ գանձ է ընծայում վանքին , ուր կերակրւում էր ողորմութիւնով (1) և հասրով վերջանում է ուխտը :

Ինչ բոպէին եկաւ մին ուրիշ աղքատ էլ իրա բաժինն ստանալու :

— Աւշացել էք , հայրիկ , էլ ոչինչ չէ մնացել , սասց նրան մին աղայ Միգալուղացւոյ (2) անարժան աղահուծեամբ սրբելով իրա բաժինը :

(1) Իստեակ սեղաններով աւելի հռչակաւոր էին Մադրիսումը Կրօնաւճիճները . նրանց մօտ հաւաքւում էին առանց ուխտադրութեան էլ , շատ անգամ միայն սրկրամուղութեան ախտից շարժեալ , Դանֆենայ ասած կերակուրի սիրողները (որ էր սխտորով եփած լեւրդ ու թոք) : Հիւրերը ՚ի հարկէ ճաշի համար քող չէին պաշէ , բայց նրանցից ամէն մէկը ճաշից յետոյ թողնում էր Տին Բոն ՚ի նշան շորհոյալու-Ռեան . էս Տին Բոնը երբէք Վաղղիական հինգ Տրանքից պակաս չէր լինում :

Հիւրօնիմեանները աւելի կտրական էին վարւում . նրանք առանց ամաչելու պանդոկ բաց արին , ուր հիւրերին տալիս էին լաւ դինի և պղպեղով պատրաստած աղիքներ . Կերակրի օրերը ժողովուրդը հաւաքւում էր էս պանդոկը մեծ բազմութեամբ :

Ուխտադրութեանց մէջ պատահում էին շատ անգամ ծաղրական բաներ , նաև էս նորերումս : Օրօրինակ . 1816 թուին մին ջահել և երեւելի աիկին ուխտ էր դրել մին շաբաթ մելօսիայ ուտել հնդուր որ մին անասնամարտ Օպայ անունով անակնունելի եղանակաւ աղատուեցաւ մահի ձեռից ցուլի հետ պատերազմելիս :

(2) Միգալուղիայի բնակիչները ուրիշ աղգերից շատ աւելի չափաւոր էին ուտելումը : Մշանց նրանց տեսնելու դժուար է հաւատալ թէ ինչքան պօհղիա ունին նրանք , և ինչպէս թիչ հոգս են քաշում երկրային վայելչութեանց համար : Մին կտոր հաց , սիգարայ և մտածելու կամ , լաւ ևս ասել , երեւակայելու կարողութիւն — էսքանք բաւական է Միգալուղացւոյ բաղդաւորութեան համար :

— Մեջախայի համար է վատ, գոռողարար պատասխանեց աղքատը անարգանք մտիկ տալով բոլորի վրա, և խոհոյն սկսեց էն պէս ուրախութեամբ երգել, որ հէնց գիտենաս թէ էս բոպէիս է վեր կացել շոյլ սեղանից:

— Տէր Աստուած, ասաց Աստեվանը, հիմի սա պէտք է մինչև էգուց քողցած մնայ: Հա՛, պէտք է խոստովանել, թէ Անդալուզեայումը հասարակ ժողովուրդը մեծ թշուառութեան մէջ է:

— Թշուառ է, պատասխանեց Ֆրանչիսկեանը, ճշմարիտ է. բայց նրա էս վիճակը աւելի տանելի է նրա համար, քան ինչպէս մեզ է թուում: Աշուղ Անդալուզեային ծոյլ և անհողս է, ինչպէս էն մարդիկ, որոնց գլխաւոր բնութենական թիւնն է ելեակայել: Մրանից ջոկ նա ունի հարստութիւն, որ իրա արժանաւորութիւնը ճանաչելու հետեանքն է: Հիմի նա կամ իրա գլուխը տալիս է պարտպութեան կամ դառնում է թախառական: Քայց երբոր լուսաւորութիւնը կրտարածուի խաղանիումը, նրա մտքի հազուագիւտ բնութենական թիւնները և սրտի գերազանց յատկութիւնները լիովին կրբացուին:

— Ասպիտի մարդիքն էլ, աղաղակեց Աստեվանը, կոպիտանում են ազիտութեան մէջ էսքան երկար ժամանակ:

— Ինչ անենք, սրգեակ, պատասխանեց վարժապետը յոգուց հանելով, մեղը նրանցը չէ:

— Հայր իմ, ասաց Աստեվանը, զարմացմամբ մտիկ տալով Ֆրանչիսկեանի ելեակին, որի վրայ կենդանա գրուած էին տխրութիւն, աղնուական ատելութիւն և մարդկութեան սէր: Հայր իմ, ինչի՞ համար էք բնարել էգ հողեւորական կոչումը:

— Մարանչելու համար, պատասխանեց Ֆրանչիսկեանը, լիովին ճանաչելու համար էն ծածուկ ժանտախար, որ լափում է խաղանիան, և քար դնելու համար էն նոր շինութեան հիմքումը, որ մին որ պէտք է բարձրանայ Ֆանտալիզմի և հալածանաց աւերակների վրա: Քայց ժամանակը դեռ չէ հասել, շարունակեց նա արամութիւն, և դեռ ամպերը մթացնում են արեգական, որ մին որ պէտք է լուսաւորէ խաղանիան . . . . Աւաղ, աղգի վերսճնիլը դարելու գործ է: Քիչ է պատահում, որ մարդ իրա անկած ծառի պտուղը քողէ: Այն նրան, ո՛վ որ միայն իրա համար է ցանում, և սպարում է հասնող վարձ ստանալ:

Այս խօսելու ժամանակը աղքատները աւաւրտեցին իրանց իրիկ:

նահապետը և բուշան ակաւ կամաց կամաց դարտակուիլ : Արժապետը և Ղատկիւնը սկսան գնալ : Արքոր նրանք անց էին կենում աղքատներին մին պղտի խումբի մօտից, որոնք մէլօպիայից յետոյ երգում էին Սեփեթիւններ (1), Ֆրանչիսկեանք իմացաւ որ որմին բռնեց նրա թեից. նա շուռ եկաւ և տեսաւ սիրենային :

— Հայր սուրբ, ասաց նա վախենալով, ես համարձակուեցայ . . . . ես ձեր տանն էի, բայց ձեզ տանը չըգտայ :

— Ի՞նչ է պատահել, հարցրուց Ղատկիւնը, հասկանալով, թէ խօսքը Ղօլօրէսի վրա է :

— Տասիւ տիրուհին, որին դուք, հայր սուրբ, վեր էք առել ձեր հովանաւորութեան տակ, շարունակեց սիրենան մօտիկ տալով վարժապետին, մին քանի որ կայ, որ եկել էր Չապայի մօտ նրա եղբոր պանդոկը . . .

— Ի՞նչպէս, ասաց վարժապետը, մի՞թէ Ղօլօրէսը վախել է կարմեղիտեաններին վանքից :

— Արգիտեմ, պատասխանեց Ղուկիւնան, բայց ես իմ աչքովս տեսայ, որ նա մտաւ պանդոկը :

— Այլ դու հաստատ գիտե՞ս, որ նա էր, հարցրուց Ղատկիւնը անհանգստութեամբ :

— Ինչպէս, ինչպէս հաստատ գիտեմ, որ մին որ պիտի մեռնեմ : Աս նրան խեղոյն ճանաչեցի, թէ և հասարակ շորերով և շատ դեղնած էր :

— Տէր Ատուած, էլի ինչ նոր տարաբաղդութիւն է հասել նրան, աղօղակեց Ֆրանչիսկեանք :

— Շուտով գնացէք, հայր սուրբ, ասաց Ղատկիւնը, շուտով գնացէք էն պանդոկը, կարելի է մին բան իմանաք նրա համար էնտեղ :

— Պանդոկը, քեզ հե՞տ, պատասխանեց վարժապետը, մի՞թէ դու մտապեղ ես, որ էնտեղ սովորաբար հաւաքուում են ինկվիզիցիայի սպասաւորները : Աս կ'երթամ մինակ, կամ աւելի լաւ

---

(1) Իսկի մին Խապունիացի չըկայ, նա և գիր չ'իմացողն էլ, որ ընդունակութիւն չ'ունենայ աւանց պատրաստելու յօրինել և երգել ոտանաւորներ, որ ասում են Սեփեթիւնայ : Աս ընդունակութիւնը նրանք ժառանգութիւն են ստացել Մաւրեթից :

առաջ դրկենք սրան: Կուլեւըինա, ասաց նա Սերենային, էս ըս-  
պէիս գնա՛ Կոկոյի մօտ, իմացիր՝ թէ ինչ է էլել Կալօրէսին և  
արի՛ ինձ իմաց տուր:

— Որտեղ կը գտնեմ ձեզ, հայր սուրբ:

— Իմ տանը, պատասխանեց Ֆրանչիսկեանը, միայն գնա՛,  
մի՛ ուշանար:

Սերենան նետի պէս թռաւ. Սարժապետը և Դաստիվա-  
նը գնացին տուն:





XVII

Չափաների հանդես (Սասնաղջիկ) :

Մեծիկայի գլխաւոր հրապարակի մօտ մին հեռու թաղումը, որ սկսում էր մայր եկեղեցւոյ մօտից, կար մին փոքրիկ ցածր տուն, որի կարմիր աղուռից շինած պատերը և մին քանի ճարտարապետական զարդերը վկայում էին, թէ նա շինած է Ալգամբրայի (1) հետ մասին :

Դա տունը քուչայի վրա ոչ մին պատուհան չ'ուներ, միայն դրսի փոքրիկ դրան վրա կար քառանկիւնի գլխաշափ ծակ, որ ներսից ծածկւում էր մին քանի իրարու կայրած աղուռներով հնալէս պինդ, որ շատ սուր աչքն էլ չէր կարող նկատել, թէ էն ծածկած է : Դա միայակ տունը ուներ պաշտօգամբ, որի վրա ոչով չէր երևացել իսկ տան ետեր կար պարտէզ շատ բարձր պարիսպով : Դա պարտէզը իրա պարսպի բարձրութեամբը նման էր մեծ ջրհորի, արեգակը շատ քիչ էր ընկնում հնտեղ, բայց այնու ամենայնիւ Անդալուզիայի բարեբեր օդի զօրութիւնից նրա մէջ շատ լաւ բուսում էին ծաղիկներ և կանանչեղէն :

Մեր նկարագրած անցքերի ժամանակը էս տանը կենում էր

(1) Ալգամբրայի պատերը աղուռիցն էին : Դա անունը բարդուել է երկու Ալբարերէն բառերից, որոնք նշանակում են կարմիր քարէ կամ պարսպ :

մին հասարակահասակ և շատ բարեպաշտ կինն: Աս շուտ շուտ ժամն էր դնում, բայց նրա մօտ ոչով չէր դնում, բայց 'ի մին ջահել Քասինիկեանից — նրա խոստովանահօրից, ինչպէս ամէնքը կարծում էին:

Նրա միայնակեցութիւնը առաջ զանազան մեկնութիւնների և դարմացման առարկայ էր. բայց որովհետեւ էս կինը երբէք և ոչինչ բանով ինկիլեղիցիայի առջևը յանցաւոր չէր, էնդուր համար նրա մենակութիւնը համարեցին բարեպաշտութիւն, և սրանից յետոյ էլ ոչոր չէր համարձակում նրան բամբասել: Այլով չէր դիտում, թէ ով է նա, բայց շորերին և խօսելուն մօտիկ տալով հարեանները նրան համարում էին Քասինիայի:

Կէս օր էր:

Փոքրիկ ցածր սենակի մէջ, որի պատահանները պարտէզի վրա էին, բան անելով խօսում էին իրարու հետ երկու, կանայք: Մինը էր յիսուն տարեկան, համեստ կերպարանքով, որի վրա երևում էր մին անսովոր արտայայտութիւն: Արևում էր, թէ նրա դեղնած ճակատի վրա ծանրացած էր մին զարհուրելի գաղանիք, թէ նրա դէմքը կնճիւններով ծածկել էր երկար ժամանակեայ և ծանր պատերազմ բաղդի հետ. և թէ էս պատերազմը կուսցրել էր նրա մէջքը:

Իս կինն էր տանտէրը: Նրա անունն էր Խուանա: Միւս կինն էր Քալօրէսը: Իստեղ իրա ծիծօր մօտ Խօղէն թաքցրել էր Քալօրէսին:

— Արեկ իմ խեղճ Խօղէն չեկաւ, յանկարծ ասաց պառաւը, չըլինի՛ թէ հիւանդացել է սիրելին:

— Աս, պէտք է, որ էսօր գոյ, պատասխանեց Քալօրէսը. չէ որ խօստացաւ ինձ համբաւ բերել վարժապետի համար:

— Ի հարկէ, իրա խօսքը կրկատարէ: ( ), իմ Խօղէն ուրիշ հողի ունի, դեռ նա աշխարհումը ոչովի վատութիւն չէ արել:

Իս ասելիս Խուանան սրբեց իրա կնճառտ երեսից վաղած արտասուքը:

— Բայց, Տիրուհի, ճաշի ժամանակ է, տոաց նա վեր կենալով իրա տեղից. թողէք ձեր կարը և սեղան նստե՛ք:

— Իս խիլի ուտել չեմ ուզում, պատասխանեց Քալօրէսը:

— Այնու ամենայնիւ ուտելը հարկաւոր է, որ ապրենք, որ զօրութիւն ունենանք ապրելու, ասաց պառաւը և դրեց սեղանի վրա

համեղ և սարղ կերակուրներ՝ խաշած բրինձ, խորոված ոչխարի միս և միրգ:

Ղաօլօրէսը ծանր վեր կացաւ տեղից և սեղան նստաւ, աւելի հնազանդութիւնից ստիպուելով քան թէ իրա կամքով:

Սաստիկ շոք էր. էս բոսիկն տան չորս կողմը այնպէս խաղաղ էր, որ կարծես թէ անապատումն էր:

Յանկարծ գալարափողի ձայն եկաւ. Ղաօլօրէսը վեր թռաւ և յետ քրշեց առաջը դրած կերակուրը:

— Ի՞նչ պատահեցաւ քեզ, որդեակ, կարեկցութեամբ հարցրուց պառաւը:

— Մի՛ թէ դուք չըլտեցի՞ք, հարցրուց Խստեմանի նշանածը, զարհուրած մտիկ տալով նրան:

Գալարափողի ձայնը կրկին լսուեցաւ առաջուանից աւելի սարղ, և յետոյ լսուեցաւ ձիերու ոտքի ձայն:

— Ի՞նչ կայ, պատասխանեց Խուանան իբրու թէ չի հասկանում գալարափողի պատճառը: Մենք ի՞նչ բան ունինք էս աղաղակի հետ, որդեակ:

— Ա՛հ որ, էս ձայնը նշանակում է հանդէսով մանդալը Խնկ-վիղիթօրի, որ յայտնում է բոլոր քաղաքին, թէ զոհեր ունի առաջիկայ աֆտօ — դա — ֆէի համար . . .

— Աս կարծում եմ, որ դուք սխալուում էք, դողալով ասաց Խուանան:

— Ո՛չ, հաւատացէք, ո՛չ . . . ինքներդ էլ ականջ դրէք:

Հանդէսը հասել էր հրապարակը և գալարափողների ձայնը լսում էր շատ սարղ:

— Գնանք, գնանք, դուք ինքներդ կըտեսնէք, աղաղակեց Ղաօլօրէսը. քաշելով պառաւին էն սենեակը, որ տեղ մեր նկարագրած դռան վրայի ծակից երևում էր հրապարակի մին կողմը: Ին սենեակը մտնելից յետոյ Ղաօլօրէսը շուտով հանեց խուփը և կանգնեցաւ ծակի դէմ:

— Ի՞նչ էք անում, տէր Խստուած, աղաղակեց պառաւը:

— Մի՛ վախենաք, մեզ ոչով չ'ի տեսնիլ: Հիմի ամէնքը ըզբաղուած են Խնկվիղիթօրի հանդէսով:

Խուանան էլ ստիպուելով հետաքրքրուելից մօտեցաւ ծակին:

Բոլոր հրապարակը լեքն էր բազմութեամբ:

Մեծ Խնկվիղիթօրը ծիրանի շորերով սպիտակ սիրուն ձիու վրա



նստած գնում էր իրա սպայների առաջևից, որ բաղկացած էր Ղնկ-  
վիզիցիայի շորեր հագած սպասաւորներից և մին գունդ զինաւառ-  
պահասպաններից: Աս թաւորի առջևը ժողովուրդը, որի վրա Ղնկ-  
վիզիթօրի գեղեցիկ և հստատ դէմքը և նրա բարձր հասակը նոյն աղ-  
դեցութիւնն էին անում, ինչ որ նրա աստիճանը, չորում էին մեծ  
լուծեամբ:

Արբոր հասան հրապարակի մէջտեղը Արբուէսը կանգնեցաւ  
և բարձր ձէնով ասաց՝

— Աղբարք իմ, ուղիղ մին ամսից յետոյ սուրբ Ղնկվիզիցան  
ըստ արժանւոյն կը հատուցանէ հերետիկոսներին և մեր հաւատոյ կա-  
նոնների ուրացողներին: Արլինի մեծ ափսոս—դա — ֆէ մեր մեծ թա-  
գաւոր Աարոյոսի յաղթութիւնները և հերետիկոսութեան ջնջելու  
ջերմեռանդութիւնը փառաւորելու համար: Ուրեմն աղօթք արէք,  
եղբարք, որ կարողանանք մենք գանել բոլոր ծածուկ և յայտնի հե-  
րետիկոսներին և գուք ինքներդ էլ յայտնեցէք մեզ, երբոր բան կ'ի-  
մանաք մտորեալների համար . . . .

— Ո՛վ Աստուած իմ, աղաղակեց Ղաօլօրէսը, իսկ նա . . . իսկ  
հայրս . . . .

Ղնկվիզիթօրի խօսքերի պատասխան իլաւ նոյն խորին լուծիւնը.  
գալարափողները կրկին հնչեցին:

— Կորաւ, սաստիկ վրդոված ասաց Ղաօլօրէսը, կորաւ . . .

— Հանդարտուեցէք, ասաց Խոլանան. Խօզէն նրան ձեռքից  
չ'ի թողնել, նա էս բոպէիս կ'ուզայ . . . գուք կը խօսիք նրա հետ:

Ղաօլօրէսը կրկին մօտեցաւ պատուհանին: Թաւիօրը մօտենում  
էր տանը:

— Յետ կանգնեցէք Աստու սիրու համար, ասաց վախե-  
նալով Խոլանան, նրանք կը տեսնեն ձեզ, Ղաօլօրէս, խօսքս լսե-  
ցէք, յետ կանգնեցէք:

Բայց Ղաօլօրէսը ոչինչ չըլսեց: Աչքերը անքթիթ տնկած  
Ղնկվիզիթօրի վրա, նա կարծես թէ նրա երեսի վրա ուղղում էր  
կարդար իրա հօր վիճակը:

Թաւիօրը մօտեցաւ տանը: Խստիվանի նշանածը դեռ  
մտիկ էր անում: Թէպէտ սենեակի մէջ մութն էր, բայց  
Ղաօլօրէսի դէմքը բաւական ջոկւում էր պատուհանի շրջա-  
նակի գոյնից: Արբուէսը տան մօտից անցկենալիս պատահամբ  
գլուխը բարձրացրուց: Նոյն բոպէին Խոլանան բռնեց Ղաօլօրէսին

և ուժով դէնք գցեց պատուհանի մօտից:

Ինկվիզիթօրը վեր թռաւ և կրկին մտիկ տուեց պատուհանին, որ տեղ երևեցաւ նրա աչքին մին ծանօթ բան. բայց Խուանան շուտով ծածկեց պատուհանը կախարչով — և Արքուէսը տեսաւ միայն հաւասար պատ, առանց պատուհանի տուն: Արքուէսը արդէն պատրաստ էր իրա տեսածը երևակայութեան ցնորք համարել, բայց աւելի հաստատ միամտուելու համար նա հարցրուց Ինկվիզիցիայի սպառաւորներից մէկին, որ գնում էր երկու քայլ նրանից հեռու:

— Ան՞ո գիտում, հա ո՞ւմ տունն է:

— Դասեղ բնակում է, ձերդ սրբազնութիւն, մին խեղճ այրի կին, որուն օգնում է Վօն Խօղէն:

— Հա՛, մտքումը ասաց Ինկվիզիթօրը, էլի ցնորք է, էլի երևակայութեան խարեքայութիւն է. Ես տեսնում եմ նրան ամէն տեղ...

Թափօրը հեռացաւ:

Խուանան նտանցրուց անշունչ Վօլօրէսին աթուի վրա. գալարափողների ձայնը մին էլ լսուեցաւ, բայց հեռուից և յետոյ բոլորովին կտրուեցաւ:

Խօղէի ծծմերը չորքած Վօլօրէսի առաջը շփում էր նրա ձեռները և երեսին սառը ջուր էր շաղ տալի: Գրհամարձակելով որ մինի օգնութիւն կանչել, նա արդէն չէր գիտում, թէ ինչ անէ: Յանկարծ դրսի դուռը բացուեցաւ և սանդխտի վրա սաքի ձայներ լսուեցան:

— Փառ՛ք Աստուծոյ, աղաղակեց Խուանան, հա նա է, հա Խօղէն է:

Այլ խկապէս հա եկողը Արքուէսի սիրելին էր: Արք ուր նա ներս մտաւ Վօլօրէսը աչքերը բաց արաւ և խորը հառաչեց:

— Ի՞նչ է պատահել, ծիծմեր, հարցրուց նա:

— Հայր իմ, հայր իմ, աղաղակեց Վօլօրէսը, տեսնելով Վօլօրէսին կեանքին: Վօն Խօղէ, նրանք ուղում են սպանել իմ հօրը:

— Հանդարտուցէ՛ք, Վօլօրէս, պատասխանեց Խօղէն համեստութեամբ, էդ ց՛իլ է ասել ձեզ:

— Ես էս բոպէիս լսեցի . . . Արանք լմաց տուին, թէ շուտով պէտք է Աֆաօ — դա — Ֆէ լինի. . . .

— Չեր վախը ՚ի զուր է, աղջիկս: Չեր ասած ծանուցումը դեռ ձեր հօր դատակնիքը չէ: Այլ թէ կ'ուղէ նրան դատապարտած

էլ լինելին, մի՛ թէ ես, որ անդադար հսկում եմ նրա վրա, մե-  
ռած եմ:

— ( ) , դուք ինձ խաբում էք, Ղաօն խօղէ, ձեր դժու-  
թիւնը արգելում է ձեզ ճշմարտութիւնը ասել ինձ: Ես գիտեմ, որ  
Խնկվիղիթօրը ցանկանում է կորցնել իմ հօրը, և անպատճառ կը-  
կորցնէ: . . .

— Արհնում եմ, ասաց Ղաօնիկեանք, մօտենալով Ղասե-  
վանի նշանածին, ձեր վախը ՚ի զուր է: Հանդարտուեցէք և լսե-  
ցէք ինձ:

— Չէ, ես ձեզ չեմ հաւատում, ասաց նա սաստիկ վրդովմամբ:  
Չէ որ, դուք էլ Խնկվիղիցիայի մարդ էք . . . Թաղ տուէք ինձ,  
եւ առանց ձեզ էլ իմ հօրս կ'աղատեմ. ես կ'ընկնեմ Մարուէսի  
ոտքերը, կըզրկեմ նրա ծնիները, կ'նպէս կ'աղաչեմ, կ'նպէս լաց  
կըլինեմ, որ նրա դուժը կըշարժի ինձ վրա, և հօրս ինձ կըտայ. . .

— Խեղճ, խեղճ երեխայ, ասաց Մարուէսի սիրելին, մտիկ տա-  
լով Խառանի երեսին, որ լաց էր լինում: Մի՛ թէ Խնկվիղիթօրները  
հոգի ունին: Մի՛ թէ հասկանում են նրանք, թէ ի՞նչ է նշա-  
նակում հայր, մայր, նշանած, քոյր . . . երբէք ոչինչ կա-  
թողին զգացմունք նրանց սրտին չէ մօտեցել . . . նրանք գիտեն  
միայն խստութիւն և անառախութիւն:

— Իայց ես կ'երթամ, կ'երթամ, կրկնեց Ղաօնօրէսը:

Խառանն ուղում էր հանդարտեցնել նրան և բռնել, բայց  
Ղաօնօրէսը դէնք բօթեց իրանից նրան և բարկանալով ասաց՝

— Ղուք երկուսդ էլ խօսք էք կապել ինձ խաբելու . . .  
Ղուք ինձ արգելել էք բանտի պէս, կ'ողուր համար, որ ես ոչինչ  
չ'իմանամ . . . բայց ձեր խորհուրդը քանդուեցաւ. ինձ յայտնի է  
հիմի կէն, ինչոր դուք ուղում էիք ինձանից թաքցնել: Թաղէք ինձ.  
. . . Եւ ինչ իրաւունքով դուք պահում էք ինձ հստեղ գե-  
րե՛ պէս, ասաց նա վայրենաբար մտիկ տալով Ղաօնիկեանի երեսին:

Սաստիկ կարեկցութիւնից շարժեալ խօղէն ոչինչ չէր խօ-  
սում: Մի՛ թէ մերը մտիկ տուեց նրան և իբրու թէ նշանացի ուղում  
էր ասել « խեղճ աղջիկ, սա խելքը թռցնում է », :

Յետոյ նա հեռացաւ Ղաօնօրէսի մօտից և նստաւ սենեակի  
միւս անկիւնումը:

Ղասեվանի նշանածը վեր կացաւ տեղից և կրկին մտիկ տուեց  
խօղէին, որի դեղնած և դեղեցիկ երեսի վրա պարզ նկարագրած էր

գթութիւնս: Խուանան լաց էր լինում, երկուսն էլ աւելի նման էին զոհերի, բան թէ դահիճների:

Վօլորէսի աչքերը մ'Թնացան և նա թուլացած վեր ընկաւ աթուռի վրա: — Թառլանալը անցկացաւ: — Խօզէն մօտեցաւ:

— Արեցէք ինձ, հայր իմ, ասաց նա, բռնելով նրա ձեռքից, ես անիրաւ էի ձեզ մօտ: Թառլառութիւնը խելքս վախցրնում է, բայց հիմի ես հանդարտ ասում եմ ձեզ, թէ իմ դիտաւորութիւնս անդրդուելի է, ես կրնիմ մեծ Խնկիլիղիթօրի ոտքը . . . ես պէտք է անեմ էս . . . ես պարտական եմ ամէն հնարքները փորձել իմ հօրս ազատելու համար, — և կրփորձեմ:

— Չէ, դուք էդ բանը չէք անիլ, աղաղակեց Վօլորէսի կեանք:

— Աս ոչինչից չեմ վախենում, հաստատութեամբ պատասխանեց Վօլորէսը, ես մահիցն էլ չեմ վախենում:

— Բայց դուք պէտք է վախենաք անպատուութիւնից, ասաց Խօզէն. մի' թէ դուք չէք գիտում, թէ ինչ մարդի ձեռքն էք ուղում ընկնել:

— ()', հա՛ . . . ճշմարիտ է . . . ճշմարիտ է, ասաց Վօլորէսը զարհուրելով, ես իսկի միտք էլ չեի անում էտուր վրա . . .

— Ուրեմն, լսեցէք իմ խորհուրդը, լսեցէք. իսկ եթէ ոչ, երդուում եմ ձեզ Վստժու անունով, որ կրկորչէք: Թողէք ձեր բարեկամները բան տեսնեն . . . Իսկ դուք չէք կարող ազատել ձեր հօրը . . . դուք միայն ձեզ կրկորցնէք:

— Աթէ ես գոնեա՛ իմանայի, թէ ուր է Վստէվանը, ասաց Վօլորէսը անպատմելի յուսահատութիւնով:

— Աս էդ կ'իմանամ, խօսք եմ տալիս ձեզ, պատասխանեց Վօլորէսի կեանք: Վօն Վստէվանն էլ ինձ պէս զբաղուած է միայն ձեր գործով. ուրեմն հանդարտեցէք և յոյսներդ մեզ վրա դրէք: Վուք էստեղ ապահով էք, և էս տունը բոլոր Մեփիլիայումը մէկ հատ է, ուր չի մտնիլ Խնկիլիղիցիան ձեզ փնտրելու համար:

Բայց Խօզէի բոլոր մխիթարութիւնները մնացին անզօր. Վօլորէսը համարեա՛ թէ ահանջ չէր դնում նրանց:

— Ա՛յնու ամենայնիւ, ես պէտք է գնամ, ասաց Վօլորէսի կեանք, երկար լռութիւնից յետոյ: Մինչև կրկին տեսութիւն, աղջիկս, մենք շուտով կրտեսնուինք:

Խուանան ճամբու դրեց նրան փնջև դուռը:











2593

200

1

9013

